Հակիրճ Պատմություն Եւ Բացատրություն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու

Տարրական Գիտելիքներ
Հայ Առաքելական Եկեղեցու Հավատացեալների Համար

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
2012

Armenian Church Library
www.hygradaran.weebly.com

Բաժին Ա.

Ներածական 2
1. Նախաքրիստոնէական Շրջան 4
2. Յիսուս Քրիստոս.. 9
3. Առաքեալներ եւ Աշակերտներ 13
4. Վաղ Եկեղեցի 15
5. Քրիստոնեության Տարածում 16
6. Հայ Եկեղեցու Ծագումը 19
7. Քրիստոնեությունը Հայաստանի Պետական Կրոն 22
8. Հայաստանյայց Եկեղեցու Հաստատումը 26
9. Հայաստանյայց Եկեղեցու Հայացումը 29
10. Միացման Փորձեր 30
11. Հայ-Բիւզանդական Հարաբերություններ 32
12. Հայ-Լատին Հարաբերություններ 34
13. Հայաստանյայց Եկեղեցին Խորհրդային Տարիներին (1920-1990) 40
14. Հայաստանյայց Եկեղեցին Հետ Հայաստանի Անկախության (1991-2004) 49

Բաժին Բ.

1. Հաւատը 60
2. Կառույցը 62
3. Ժողովներ 65
4. Տիեզերական Ժողովներ 66
5. Հայաստանեայց Եկեղեցւոյ Ժողովները 68
6. Նվիրապետական Աթոռներ 76
7. Միջեկեղեցական հարաբերություններ... 82

Ներածական

«Սկզբից էր Բանը, եւ Բանը Աստուծոյ մօտ էր, եւ Բանը Աստուած էր»:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին աշխարհի հնագույն եկեղեցիներից է: Այն իր գոյության ողջ ընթացքում եղել է Քրիստոսի «Մի, Սուրբ, Ընդհանրական եւ Առաքելական» Եկեղեցու անբաժանելի մասը:

Հայաստանն առաջին երկիրն էր, որտեղ քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Այդ ժամանակաշրջանից սկսած մեր ժողովուրդն ու նրա հավատն անբաժանելի դարձան:

Այս բաժնում ներկայացվելու են հիմնական տեղեկությունները Հայաստանում քրիստոնեության ծագման վերաբերյալ:

Մենք քննելու ենք Ընդհանրական Եկեղեցու սկզբնավորումը, ինչպես նաեւ Հայաստանյայց Եկեղեցու ստեղծումը, նրա կառուցվածքն ու զարգացումը պատմության ընթացքում: Ձեզ ենք ներկայացնելու տեղեկություններ Կաթողիկոսների՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի հետնորդների մասին, որոնց գործունեության շնորհիվ դարերի ընթացքում ձեւավորվել է Հայաստանյայց Եկեղեցին:

Հայաստանյայց Եկեղեցին 1700 տարիների ընթացքում շատ փոփոխությունների է ենթարկվել: Քրիստոնեությունը ընդունելուց հետո մենք՝ հայերս, հավատով ու բուռն կերպով ենք նվիրվել մեր կրոնին: Հանուն քրիստոնեության շատ պատերազմների, հալածանքների եւ դժվարությունների միջով ենք անցել: Եկեղեցին նշանակալի դեր ունի մեր ազգի կազմավորման գործում. այն երբեմն կատարել է եւ եկեղեցու, եւ պետության դերը: Այս մասում հակիրճ նկարագրված է Հայաստանյայց եկեղեցու զարգացման ընթացքը՝ սկզբնզվորման օրինց մինչ այսօր:

Մեր Եկեղեցին ապրել է նաեւ դժվարին ժամանակներ, տառապել է բազում աղետներից՝ հաճախ իր ժողովրդի հետ ենթարկվելով փորձությունների: Կաթողիկոսական Աթոռը (Մայր Աթոռ) վերջնականապես Սուրբ Էջմիածնում հաստատվելուց առաջ մի քանի անգամ տեղաշարժվել է տարբեր վայրեր, որոնց եւս անդրադարձ կա մեր ինտերնետային էջում): Քրիստոնեության ինչպես նաեւ Հայաստանյայց Եկեղեցու պատմության կարեւոր տարեթվերի ցանկը ներկայացված է ըստ ժամանակագրության: Դուք հնարավորություն կունենաք ծանոթանալ Հայաստանյայց Եկեղեցու այսօրվա կյանքին նաեւ լուսանկարների միջոցով:

Պատմության իմացությունը կարեւոր պայման է մեզ լավ ճանաչելու համար: Ճիշտ է, մեր պատմությունը ներկայացնող բազում ստեղծագործություններ են գրվել ու գրվում, բազմաթիվ հետազոտություններ են կատարվում, սակայն մինչեւ օրս էլ կան դեռեւս չբացահայտված շատ էջեր, որոնք, անշուշտ, ժամանակի ընթացքում մեզ են ներկայացնելու պատմական ճշմարտությունը: Այո, պատմության անհայտ էջերը հետզհետե բացվելու են, հայտնվելու են նոր փաստեր, իրադարձություններ, տեղեկություններ: Այս գործընթացին զուգընթաց վերոհիշյալ բաժինը նույնպես համալրվելու է:

Նեղ իմաստով պատմությունը սահմանվում է որպես նշանակալի իրադարձությունների ժամանակագրական արձանագրություն: Հասկանալու համար մեր ապագան, շատ կարեւոր է իմանալ եւ ուսումնասիրել անցյալի իրադարձությունները: Այս բաժինը համառոտ կներկայացնի մինչ քրիստոնեության ծագումը տեղի ունեցած իրադարձությունները, կպատմի հայերի քրիստոնեության մեծ դարձի մասին:

ԲԱԺԻՆ Ա.

1. Նախաքրիստոնէական Շրջան

Քրիստոնեությունը համաշխարհային կրոնների շարքում ամենամեծ տարածում ունեցող կրոնն է: Այն Արեւելքից մինչեւ Արեւմուտք ունի իր հետեւորդները« աշխարհի ամենատարբեր երկրներում գործում են բազմաթիվ քրիստոնեական եկեղեցիներ, իսկ որոշ երկրամասերում այն գրեթե տիրապետող է« ինչպես օրինակ Եվրոպայում« Ամերիկայում« Ավստրալիայում: Այսօր արեւմտյան աշխարհի համար քրիստոնեությունը պետականորեն ընդունված միակ կրոնն է, չնայած իր արեւելյան ծագմանը: Այն իր արմատներով զնում է Մերձավոր Արեւելք« կապված է Արեւելքի« Հին աշխարհի՝ մանավանդ միջերկրածովյան երկրների մշակույթների հետ:

Քրիստոնեությունը տարածվել եւ հաստատվել է այնպիսի պետություններում« որոնք մինչ այդ ունեին բարձր մշակույթ« զարգացած պետականություն (Հին Հռոմ« Հունաստան« Պարսկաստան« Հայաստան« Հյուսիսային Աֆրիկա եւ այլն): Այս երկրներում Քրիստոսի Ավետարանի տարածմանը նպաստեց այն հանգամանքը« որ քրիստոնեությունը զերծ էր էթնիկական սահմանափակվածությունից: Եվ բացի այդ Ա-Գ դարերում Հռոմեական կայսրության տարածքում հիմնականում մեծ կոնֆլիկտներ չկային« իշխում էր այսպես կոչված Pax Romana - հռոմեական խաղաղության ժամանակաշրջանը:

Այդ ժամանակաշրջանում Կայսրության մեջ մեծ տարածում էր գտել միթրայիզմը՝ իրանական կրոնը« աշխարհիրմբռնման մեջ տիրում էր նեոպլատոնականությունը՝ Պլատոնի ուսմունքի նոր ընկալումը« հելլենիստական մշակույթը« հրեական մեսիականությունը: Այս ամենը հարմար նախապայմաններ էին Քրիստոսի ուսմունքի տարածման եւ հաստատման համար:

Քրիստոնեական սկզբնական համայնքներն առաջացան ոչ թե Կայսրության կենտրոնում՝ Հռոմում« այլ ծայրամասերում՝ Հրեաստանում եւ նրան հարակից շրջաններում« որտեղից էլ« շնորհիվ Պողոս առաքյալի քարոզչության« քրիստոնեությունը տարածվեց հեթանոս՝ ոչ հրեա ազգերի մեջ եւ դուրս եկավ

իրեական նեղ էթնիկական սահմաններից:

Քրիստոնեության հաստատման եւ տարածման համար կարեւոր էին հետեւյալ նախապայմանները:

- աշխարհաքաղաքական վիճակը
- Քրիստոսի ուսմունքն ընկալելու մարդկության պատրաստվածությունը
- հեթանոս աշխարհի եւ հրեական աշխարհի կրոնական խճանկարը:

Քաղաքակրթության կենտրոն համարվող Միջերկրական ծովավազանի երկրների ողջ տարածքը հիմնականում գտնվում էր Հռոմի գերիշխանության տակ: Ալեքսանդր Մեծից հետո հելլենական մշակույթը« լեզուն դարձել էին գերիշխող: Հունարենը Եփրատից մինչեւ Ատլանտյան օվկիանոս փոխադարձ շփման, գիտության« մշակույթի լեզուն էր համարվում, եւ ազգերի ու էթնիկական զանազան խմբավորումների իրար հետ հարաբերվելու ու շփվելու գործում որեւէ հարց չէր առաջանում: Ամենուր իշխում էր Հռոմեական իրավունքը՝ իր օրենսդրական բարձր մակարդակով:

Մակեդոնացին գրեթե ջնջել էր Արեւմուտքի ու Արեւելքի սահմանները« զանազան ազգությունների կրոններ իրար էին խառնվել« կրոնական շատ սկզբունքներ ու գաղափարներ տարածվում էին փոխադարձ շփման ժամանակ: Այդպիսի կրոնական խճանկարը« անշուշտ, նպաստավոր պայմաններ էր ստեղծել քրիստոնեության տարածման համար:

Այդ ժամանակաշրջանում հունական փիլիսոփայությունը փորձում էր կրոնի վերածվել ու կրոնին փոխարինել« սակայն ոչինչ չստացվեց« որովհետեւ փիլիսոփայությունը՝ իր բարդությամբ ու ոչ բոլորին ընկալելի լինելու առանձնահատկությամբ չէր կարող այդ դերն ստանձնել:

Քրիստոնեության պատմությունը Ա-Գ դարերում փաստում է, որ այդ կրոնի դեմ կանգնած էին հզոր կրոնական համակարգեր« որոնք ոչ թե մեռած էին« ինչպես կարծում են« այլ պարտվեցին« որովհետեւ քրիստոնեությունն ավելի հզոր ու կենսունակ էր:

Փրկչի գալստյան խոստումից հետո« որը տրվել էր մեր նախածնողներին Եդեմական պարտեզում« անցել էին հազարամյակներ: Ըստ Պողոս առաքյալի (Գաղատացիներ 4:4)« երբ ժամանակները լրացան« Աստված իր Որդուն ուղարկեց, որպեսզի փրկի մարդկանց: Ինչու՞ այդքան ուշ, որովհետեւ աստվածային փրկությունը չէր կարող պարտադրվել մարդկությանը« եւ Աստված« չնայած իր ամենակարողությանը« չի կարող փրկություն տալ մեկին« որն այն չի ուզում: Մարդը պարտադրանքով չի փրկվում« այլ փրկվում է այն դեպքում« երբ ինքն է այդ ցանկանում: Այսպիսով ձեւավորվել էին միմյանցից էականորեն տարբեր երկու աշխարհներ. իրեական

աշխարհը« ուր անմիջականորեն պատրաստվում էր Փրկչի գալուստը եւ հեթանոս աշխարհը« ուր մարդիկ իրենց ճանապարհներով էին գնում (Գործք 14:16-17): Հեթանոս աշխարհը վայրի ձիթենին է« որ պետք է պատվաստվեր ընտանի ձիթենու վրա:

Հռոմեական կայսրությունն ընդունակ էր ներառել իր տիրապետության տակ գտնվող գրեթե բոլոր ազգերի կրոնական համակարգերը: Միակ պահանջը կամ պայմանն այն էր« որ կայսեր անձի պաշտամունքը պետք է պարտադիր լիներ բոլորի համար: Մնացած բոլոր տարբերություններն ընդունելի էին եւ ամենեւին չէին հետապնդվում քաղաքական իշխանությունների կողմից:

Նոր պլատոնականությունը ամենատարածված փիլիսոփայությունն էր« որն ի տարբերություն հռոմեական բազմաստվածության, անգամ միաստվածություն էր քարոզում: Այդ Աստվածն էր համարվում բոլոր էությունների սկիզբն ու աղբյուրը« իսկ աշխարհի անկատարության պատճառը նյութի եւ հոգու միացումն էր« որպես հոգեւոր նախասկզբից բխած էմանացիա (ճառագայթում« արտազատում) նյութական աշխարհի մեջ:

Նյութը ստորադասվում էր« ստորին օղակն էր համարվում« իսկ համաշխարհային հոգու էմանացիան բարձրացվում էր ավելի բարձր ոլորտների: Այս համակարգը քրիստոնեության հակառակորդն էր« եւ սկզբնական շրջանում ջանում էր Կայսրությունը փրկելու առաքելությունը ստանձնել: Բայց այն չկարողացավ իր ժամանակի ապականված բարքերը նորոգել« այլ, պարզապես, մի որոշ ժամանակ անկումը կասեցրեց: Բարոյական կյանքով ապրելու նպատակը մարդկանց համար ամենեւին գոյություն չուներ, եւ այդ հասկացող մարդիկ քանի գնում ավելի հոռետես էին դառնում:

Կայսրության մեջ հրեականության տարրն առանձնանում էր մյուս էթնիկական խմբավորումներից նրանք հավատում էին որ .

1. իրենց Աստվածը միակն է «ճշմարիտը« որն ուխտ է կնքել իրենց հետ
2. այդ ուխտը ոչ միայն իրենց ազգային նպատակների ու խնդիրների լուծման համար էր «այլ ողջ մարդկության փրկության:

Բաբելոնյան գերությունից հետո« հրեաները ցրվեցին աշխարհով մեկ: Նրանք գտնում էին« որ մեսիական փրկությունը միայն իրենց է վերաբերում որպես էլիտար՝ ընտրյալ հատվածի« իսկ մյուս ազգերը իրենց են ծառայելու այդ փուլում: Այս էր այն հիմնական պատճառը« որ նրանք չկարողացան ազգովի ընդունել քրիստոնեության վարդապետությունը եւ Ա դարի 70-ականներին՝ Երուսաղեմի կործանումից հետո վերջնականապես կորցրեցին իրենց պետականությունն ու Տաճարը:

Հրեական նախապետների ժամանակներում կրոնական համակարգը բարեկամական փոխհարաբերության դրսեւորումն էր Աստծու եւ ժողովրդի միջեւ« որն ավելի

գործնական բնույթ էր կրում իրենք պետք է ուխտի բոլոր կետերին հնազանդվեին, իսկ Աստված դրա փոխարեն նրանց փրկություն էր խոստանում: Այս ընկալումը տիրապետող էր հենց Ա դարում: Մեսիան արժեւորվում էր ոչ թե նրա համար« որ Աստծու Հայտնությունն էր լինելու« այլ այնքանով« որ իրենց ազգի փրկության եւ ազատության կրողն էր:

Արեւելքում քրիստոնեության տարածմանը նպաստեց նաեւ Հռոմեական կայսրության արեւելյան սահմաններում գտնվող հզոր Պարսկաստանի, ինչպես նաեւ Հայաստանի կրոնական համակարգը:

Ստորեւ ներկայացնենք Հայաստանում տիրող կրոնական իրավիճակը մինչ քրիստոնեության ընդունումը:

Հայոց հին կրոնը կամ հեթանոսական հավատը

Հայերի կրոնական հավատալիքների ու պաշտամունքի վրա պարսկական ազդեցությունը զորեղ է եղել: Իրանական ծագում ունեն հայ չաստվածների անունների մեծ մասը՝ Արամազդ« Վահագն« Միհր« Տիր եւ այլն: Պարսիկներից են հայերին անցել շատ հավատալիքներ բարի ու չար ոգիների՝ հրեշտակների « վիշապների« շահապետերի մասին, ինչպես նաեւ անդրաշխարհի՝դրախտի ու դժոխքի մասին պատկերացումները: Կրոնական պատկերացումների վրա ազդել են նաեւ ասորական հավատալիքները: Ասորերենից են հայերենին անցել հետեւյալ անվանումներն ու անունները. քուրմ« Բարշամ (ասորերեն՝ Բար-Շեմ)« Նանե (ասորերեն՝ Նանա)« Աստղիկ (ասորերեն՝ Իշտար« հետագայում՝ Աստարտա)« Անահիտ (ասորերեն՝ տիկին« նույն անունը պարսկերենում՝ նշանակում է մաքուր) եւ այլն:

Այս ազդեցությունները, անշուշտ, համեմատաբար ավելի ուշ շրջանին են վերաբերում« իսկ սկզբնական շրջանում մեր պատկերացումները աշխարհի« տիեզերքի« ոգիների« բնության մասին առավել մշուշոտ են եղել: Այդ անիմիստական (animism) պատկերացումների հետեւանքն է բնության, տարերային ուժերի պաշտամունքը: Մեզ բնորոշ են եղել նաեւ տոտեմիստական պատկերացումները (totemism)« ուր առանձնակի պաշտամունքի առարկա են եղել կենդանիները՝ օձը« գայլը կամ բույսերը« կրակը« ջուրը եւ այլն: Տոտեմը համարվել է այն պաշտողների նախնին:

Հին հայերը անհիշելի ժամանակներից ունեցել են հատուկ պաշտամունք Արեգակի եւ Լուսնի հանդեպ: Երկրի վրա կատարվող ամեն երեւույթ կախված է նկատվել այդ երկնային մարմիններից :

Անահիտ տիկինը մեծ նշանակություն ստացավ հայոց մեջ« իբրեւ մայր ամենայն

զգաստության« փառք ու կեցուցիչ ազգի« հայոց աշխարհի շունչ ու կենդանություն: Իսկ Աստղիկն այնքան ժողովրդականություն ունեցավ հայերի մեջ« որ նրան արժանի համարեցին Վահագն դյուցազնի կինը դարձնել:

Զրադաշտականության առաջին նախանշանները հայոց մեջ ի հայտ եկան Զենդ-Ավեստայի շրջանում` VI-V դդ. Ն. Ք.: Հայոց Արամազդը` Զենդ-Ավեստայի Ահուրա-Մազդան, զրադաշտության մեջ համարվում էր գերագույնը` երկնի ու երկրի արարիչը: Բարության սկզբի` Արամազդի հակառակորդը` Ահրիմանը` Հարամանը (Զենդ-Ավեստայի Ահրմնը) հայոց հին հավատալիքների մեջ չի երեւում« բայց նրան սպասարկող ոգիներն առկա են: Այսպես հրեշտակ« դեւ« դժոխք բառերն իրենց նախնական նշանակությամբ Ավեստայի ֆերիշտե« դեւա« դուզախ բառերն են« նույն նշանակությամբ:

Կրակապաշտությունը զրադաշտականության մեջ կարեւոր տեղ է զրավում: Հայերն էլ պաշտում էին այն Միհր անունով« որպես որդին Արամազդի: Հայոց մեջ կրակը` հուրը« տարին մեկ անգամ ներկայացվում էր խարույկի ձեւով« մինչդեռ պարսից մեջ այն անշեջ էր պահվում:

Տիրը պարտավոր էր հսկել մարդկանց, գրանցել նրանց բարի եւ չար արարքները« դրանք արձանագրել «կենաց գրքի մեջ»: Այդ պատճառով էլ ժողովուրդը նրան Գրող էր կոչում: Մարդիկ հավատում էին « որ մահվանից հետո Տիրը իրենց հոգիները տանում եւ Արամազդի առաջ դատաստանի է կանգնեցնում` ըստ գրքում արձանագրվածների: Այդ իմաստով էլ մինչեւ այսօր մեր լեզվում կիրառական է «Գրողը տանի քեզ» (այսինքն` դատաստանի առաջ կանգնեցնի)« «Ճակատիս այս էր գրված» դարձվածքները:

Հնում հայոց մեջ ընդունված էր աստվածներին անտառներում եւ լեռներում զոհաբերություններ մատուցելու, ինչպես նաեւ նրանց համար բագիններ ու մեհյաններ կանգնեցնելու սովորությունը: Մեզանում առաջին նահապետները (Հայկը« նրա որդիներն ու նրանց սերունդները) նաեւ քրմապետության պաշտոնն են ստանձնել: Այսպես« Սոսյաց սրբազան անտառը« որի տերեւների հանդարտ կամ սաստիկ խշշոցից զանազան գուշակություններ էին անում« տնկել է Արմենակը« Իսկ Արայի որդին` Անուշավանը, Սոսյաց անտառի պաշտամունքին նվիրվելու համար կոչվում է «Սոսանվեր»:



2. Յիսուս Քրիստոս

ա. Ծնունդը

«Այդ օրերին Օգոստոս կայսրը հրապարակեց մի հրամանագիր՝ իր կայսրության սահմաններում գտնվող բնակիչների մարդահամար անցկացնելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցավ Ասորեստանի կառավարիչ Կյուրեննիոսի օրերին» (Ղուկ. Բ 1): Ըստ Ղուկասի Ավետարանի սույն վկայության, Հիսուս ծնվել է առաջին մարդահամարի ժամանակ, երբ Նրա մայրը՝ Մարիամը, իր ամուսնու՝ Հովսեփի հետ Նազարեթ քաղաքից Բեթղեհեմ էր գնում՝ իրենց հայրենի քաղաքում արձանագրվելու համար:

Օկտավիանոս Օգոստոս կայսրն իշխել է Քա. 29 թվականից մինչեւ Քհ. 14 թվականը, իսկ Կյուրեննիոսը երկու անգամ է եղել Պաղեստինի եւ Սիրիայի կառավարիչ, նախ՝ Քա. 6-4 թվականներին եւ ապա՝ Քա. 6-9 թվականներին: Նա երկու անգամ էլ մարդահամար է անցկացրել: Քանի որ Ղուկասը մասնավորապես շեշտում է *առաջին* մարդահամարը, ապա ենթադրվում է, որ Հիսուսի ծնունդը պետք է տեղի ունեցած լինի Քա. 6-4 թվականների միջեւ: Գիտնականների մեծամասնությունն այս առումով առավել հակված է ընդունելու Քա. 4 թվականը:

Հիսուսի մայրը՝ Մարիամը, շնորհալի կույս էր, որը նշանված էր Հովսեփ անունով մի բարեպաշտ մարդու հետ: Սակայն ամուսնությունից առաջ Մարիամը հղիացել էր Սուրբ Հոգուց: Այդ մասին նրան ավետել էր Աստծու հրեշտակը. «Մի՜ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ դու արժանացար Աստծու շնորհին: Ահա դու կհղիանաս եւ կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի եւ Բարձրյալի Որդի կկոչվի [...] Նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Ղուկ. Ա 30-33): Այս մասին Հին Կտակարանում մարգարեները նախապես գրել էին. «Ահա կույսը պիտի հղիանա եւ մի որդի պիտի ծնի...» (Ես. Է 14), ու այդ նորածինը պետք է դառնա աշխարհի Փրկիչը:

Եվ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում: Մայրը փաթաթեց նրան խանձարուրով եւ դրեց մսուրի մեջ, որովհետեւ իջեւանատանը իրենց համար տեղ չկար:

Մանուկ հասակում Հիսուսին տարան Եգիպտոս՝ Հրեաստանի Հերովդես արքայի հալածանքներից նրան հեռու պահելու համար, իսկ պատանի տարիքում, Հովսեփի եւ Մարիամի ուղեկցությամբ Նա վերադարձավ: Տեղեկություններ չկան այն մասին, թե ինչպե՞ս եւ ի՞նչ միջավայրում է անցել նրա մանկությունն ու պատանեկությունը: Հայտնի է միայն, որ Եգիպտոսից վերադառնալով, Հիսուս ծնողների հետ հաստատվեց Գալիլեա գավառի Նազարեթ քաղաքում: Այս պատճառով էլ հետագայում նրան կոչեցին *Նազովրեցի*:

բ. Քարոզչությունն ու գործունեությունը

Հիսուսի գործունեությունն սկսվում է մկրտությունից անմիջապես հետո: Երբ Նա երեսուն տարեկան դարձավ, եկավ Հովհաննես Մկրտչի մոտ եւ նրա կողմից մկրտվեց Հորդանան գետում: Հովհաննեսը ճգնավորական կյանքով ապրող մի մարգարե էր, որը Հորդանանի մոտակա անապատում մկրտում էր ապաշխարություն փնտրողներին՝ մեղքերի քավությանը եւ Փրկչի գալստյանը նրանց նախապատրաստելու համար: Չնայած Հովհաննեսն իրեն անարժան էր համարում Հիսուսին մկրտելու համար, սակայն Նա պնդեց, որ Աստծու արդար կամոք այդպես պետք է լինի՝ այդպիսով վավերացնելով Մկրտության Սբ. Խորհուրդը:

Երբ Հիսուս մկրտվեց, Հայր Աստծու ձայնը երկնքից ազդարարեց. «Դա՞ է իմ սիրելի Որդին», եւ Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով իջավ Նրա վրա (Մտթ. Դ 16-17): Այդպիսով մարդկանց առջեւ բացահայտվեց եւ հաստատվեց Հիսուս Քրիստոսի կատարյալ մարդ եւ միեւնույն ժամանակ Աստծու Միածին Որդին լինելու իրողությունը:

Մկրտությունից հետո Հիսուս քառասուն օր ծոմապահությամբ անցկացրեց անապատում: Ապա սատանան մոտեցավ Հիսուսին, կամեցավ փորձության ենթարկել եւ այդպիսով հեռացնել նրան Աստծուց: Սակայն Հիսուս հաստատակամորեն զերծ պահեց իրեն գայթակղություններից, եւ սատանան, պարտության մատնվելով, թողեց ու հեռացավ: Ի հիշատակ այս քառասնօրյա փորձության՝ մեր Եկեղեցին հետագայում հաստատեց *Մեծ Պահքը*:

Այնուհետեւ Հիսուս երեք տարի շարունակ շրջեց Հրեաստանի տարբեր քաղաքներում ու գյուղերում՝ քարոզելով Աստծու արքայության մասին եւ հորդորելով մարդկանց հետեւել Իրեն՝ Աստծու թագավորությունը միասնաբար ժառանգելու համար: Իբրեւ կենդանի ապացույց Իր այս խոսքերի, Նա վկայեց, որ Աստծուն իրապես հավատացողները երկնային արքայության ժառանգորդներն են դառնում եւ արդեն իսկ այս կյանքում Տիրոջ որդեգրությունն են վայելում: Այսպես բոլոր ճշմարիտ հավատացյալներին բազմապիսի շնորհներ բաշխվեցին. կույրերի աչքերը բացվեցին, համրերը խոսեցին, կաղերը քայլեցին, անդամալույծներն ու ամենածանր, մահամերձ հիվանդներն առողջացան: Հիսուս այս հրաշքները պարզապես Իր անձնական փառքի

համար չկատարեց, այլ մի միայն ճշմարիտ հավատքի զորությունն ապացուցելու եւ Աստծու անսահման ողորմածությունը վկայելու նպատակով: Նա ուսուցանեց մարդկանց, որ այս կյանքում առանց հավատքի անհնար է խաղաղ ու երջանիկ կյանք ապրել, քանզի անկարելի է երկու տերերի միեւնույն ժամանակ ծառայել: Այո, մենք կարող ենք մեր ազատ կամքով ընտրել մեր ուղին՝ Աստծուն հետեւել, թե սատանային: Սատանային ծառայողները բազում են, եւ նրանց ճանապարհն առաջին հայացքից շատ ընդարձակ ու հարմարավետ է թվում, մինչդեռ Աստծուն հետեւելու համար պետք է նեղ եւ դժվարին դռնով անցնել, բազմաթիվ փորձություններ հաղթահարել: Եվ պետք է անպայման վստահ լինել, որ եթե մեկն իր հոգում անգամ մանանեխի փոքր հատիկի չափ հավատ ունի, ապա սարեր կարող է տեղից շարժել: Հիսուս ասում է. «Խնդրեցե՛ք Աստծուց, եւ նա կտա ձեզ, փնտրեցե՛ք եւ կգտնե՛ք, բախեցե՛ք, եւ կբացվի ձեր առաջ» (Մտթ. Է 7):

Երբ Հիսուսին հարցրեցին, թե ո՞րն է իր կարծիքով ամենամեծ պատվիրանը, Նա պատասխանեց. «...մեր Տեր Աստված միակ Տերն է: Եվ պետք է սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով եւ քո ամբողջ զորությամբ» (Մրկ. ԺԲ 29-30): Բայց միեւնույն ժամանակ Նա ավելացրեց, որ երկրորդ պատվիրանը նման է առաջինին. «Սիրի՛ր ընկերոջդ քո անձի պես: Այս երկուսից ավելի մեծ պատվիրան չկա» (Մրկ. ԺԲ 31): Փաստորեն Հիսուսի քարոզչությունը լոկ անհատական ու վերացական պաշտամունք չէր, այլ միասնականության, սիրո եւ փոխադարձ հասկացողության գործնական պատգամ: Ի նշան այս անկեղծ ու անշահախնդիր եղբայրասիրության Հիսուս տասներկու աշակերտներ ընտրեց, որոնց հետ միասին երեք տարի շարունակ շրջեց ողջ Հրեաստանում, ամեն վայրկյան նրանց կողքին եղավ եւ ուսուցանեց բոլորին, թե ինչպես պետք է նրանք հետագայում Աստծու լույսը տարածեն ողջ աշխարհում: Հիսուսի սրտագին սիրո դրսեւորումներից էր մատնությունից առաջ խոնարհաբար ծնունկի գալը եւ բոլոր աշակերտների ոտքերը լվանալը: Հիսուս պատվիրեց նրանց. «Գիտե՞ք, թե ինչ արեցի ձեզ [...] Եթե ես Տեր եւ Վարդապետ եմ եւ լվացի ձեր ոտքերը, դուք պարտավոր եք միմյանց ոտքեր լվանալ: Ես ձեզ մի օրինակ տվեցի, որպեսզի դուք էլ միմյանց անեք այն, ինչ ես արեցի ձեզ» (Հովհ. ԺԳ 12-15):

Եթե փորձենք մեկ նախադասությամբ ամփոփել Քրիստոսի ուսուցողական եւ ծառայողական գործունեության էությունը, բավական է մեջբերել նրա հետեւյալ խոսքերը. «Մի նոր պատվիրան եմ տալիս ձեզ՝ սիրեցե՛ք միմյանց: Ինչպես ես ձե՞զ սիրեցի, դուք էլ միմյա՞նց սիրեցեք: Եթե դուք միմյանց սիրեք, դրանով մարդիկ կիմանան, որ դուք իմ աշակերտներն եք» (Հովհ. ԺԳ 34-35):

գ. Խաչելությունն ու Հարությունը

Հիսուսի քարոզչության եւ հրաշագործությունների շնորհիվ շատերը հավատացին եւ

հետեւեցին Նրան: Սակայն եղան նաեւ մարդիկ, որոնք չկամեցան ընդունել Հիսուսի՝ իրապես Աստծու Միածին Որդին եւ Հին Կտակարանի մարգարեների կողմից խոստացված Փրկիչը լինելու իրողությունը: Նրանք կարծում էին, թե իրենց Փրկիչը պետք է զենքի ուժով կործաներ բոլոր թշնամիներին եւ բոլոր օտար ազգերին՝ հեթանոսներին, իշխելու իրավունք պարգեւեր իրենց : Իսկ Հիսուս՝ իր բարությամբ եւ սիրո քարոզչությամբ, չէր համապատասխանում նրանց սպասելիքներին: Այդպես

մտածողները հիմնականում հրեաներն էին, որոնք չցանկացան այլեւս հանդուրժել Հիսուսի ներկայությունն իրենց կողքին, որովհետեւ տեսնում էին, թե ինչպես արագորեն մեծանում էր նրան հետեւողների թիվը: Հրեաները որոշեցին վերջ տալ Հիսուսի առաքելությանը եւ երեսուն արծաթով կաշառեցին տասներկու աշակերտներից մեկին՝ Հուդա Իսկարիովտացուն, որպեսզի մատնի Նրան: Եվ Հուդան մատնեց իր Ուսուցչին վերջին ընթրիքից անմիջապես հետո, որի ժամանակ , մյուս բոլոր աշակերտների ներկայությամբ հացն ու գինին օրհնելով, Հիսուս հաստատեց Հաղորդության Սբ. խորհուրդը:

Այնուհետեւ Հիսուսին ձերբակալեցին ու դատելու տարան նախ Կայիափա անունով հրեա քահանայապետի, ապա՝ հռոմեական կառավարիչ Պիղատոսի մոտ: Առաջինը կեղծ վկայությունների հիման վրա Նրան մահվան դատապարտեց, իսկ երկրորդը, լվանալով իր ձեռքերը, պարզապես չկամեցավ խառնվել ոչ մի բանի:

Ամբաստանող հրեաների պահանջով Հիսուս խաչվեց երկու այլ ավազակների հետ՝ Երուսաղեմից ոչ շատ հեռու, Գողգոթա լեռան գագաթին: Նա խաչի վրա ավանդեց Իր հոգին:

Խաչելությունից երեք օր հետո Հիսուսին հետեւող բարեպաշտ կանանցից մի քանիսը որոշեցին գնալ գերեզման եւ, հրեական սովորության համաձայն, օծել մահացածի մարմինը: Բայց նրանք գերեզմանը դատարկ գտան: Այդ ժամանակ Աստծու հրեշտակը նրանց ավետեց. «Գիտեմ, որ խաչված Հիսուսին եք փնտրում: Այստեղ չէ, որովհետեւ հարություն առավ» (Մտթ. ԻԸ 5-6): Եվ իսկապես, ոչ շատ ժամանակ անց հարուցյալ Հիսուս երեւաց իր տասնմեկ աշակերտներին՝ ասելով. «Խաղաղությու՜ն ձեզ, ես եմ, մի՛ վախեցեք», եւ ապա, տեսնելով նրանց աչքերում տարակուսանք ու մեծ զարմանք, պարզաբանեց. «Գրված է, որ այդպես պետք է չարչարվեր Քրիստոս եւ երեք օր հետո հարություն առներ. նրա անունով պետք է քարոզվեր ապաշխարություն եւ մեղքերի թողություն բոլոր ժողովուրդներին՝ Երուսաղեմից սկսած: Դուք այս բոլորի վկաներն եք» (Ղուկ. ԻԴ 46): Հիսուս փաստորեն իրապես ամբողջացրեց Հին Կտակարանի մարգարեությունները: Նա դարձավ մարդկության Փրկիչը, Իր անմեղ

արյան հեղումով քավեց ողջ մարդկության մեղքը եւ, Աստծու որդեգրության շնորհը մարդկությանը բաշխելով, բացեց փրկության ճանապարհը դեպի հարություն, դեպի հավիտենական կյանք: Հիսուս Քրիստոս ասաց. «Ես եմ աշխարհի լույսը: Ով որ ինձ հետեւի, խավարի մեջ չի քայլի, այլ կունենա այն լույսը, որ առաջնորդում է դեպի կյանք [...] Ես եմ հարությունը եւ կյանքը: Ով որ հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի» (Հովհ. Ը 12, ԺԱ 25):

3. Առաքեալներ եւ Աշակերտներ

ա. Առաքյալները

Հիսուսի եռամյա գործունեության ընթացքում շատ տարբեր մարդիկ շփվեցին նրա հետ՝ երիտասարդներ ու ծերեր, տղամարդիկ ու կանայք, գյուղացիներ ու առեւտրականներ, հարուստ պաշտոնյաներ ու աղքատներ: Նրանք հիացան՝ լսելով Հիսուսի քարոզչությունը եւ տեսնելով նրա կողմից կատարված հրաշքները: Այսպես շատերը որոշեցին հետեւել նրան: Ամենուրեք համակիրներն ընկերակցում էին Հիսուսին: Նրանց թվում էր նաեւ տասներկու հոգուց կազմված հատուկ խումբը, որը Հիսուս անձամբ էր ընտրել: Նրանք Հիսուսի *աշակերտներն* էին, որոնց անունները կարդում ենք Մատթեոսի ավետարանում. «Առաջին՝ Սիմոն, որ Պետրոս կոչվեց, եւ նրա եղբայրը Անդրեաս, Զեբեդեոսի որդիները՝ Հակոբոս եւ նրա եղբայրը Հովհաննես, Փիլիպպոս եւ Բարդուղիմեոս, Թովմաս եւ Մատթեոս մաքսավոր, Ալփեոսի որդի Հակոբոս, Ղեբեոս, որ Թադեոս կոչվեց, Սիմոն Նախանձահույզ եւ Հուդա Իսկարիովտացի, որ մատնեց նրան» (Մտթ. Ժ 2-4):

Այս տասներկուսին Հիսուս կոչել էր հետեւելու իրեն: Նա այդ տասներկու հոգուն ընտրել էր ոչ թե բարձր կրթություն ստացածներից կամ մեծահարուստների շարքերից, այլ բոլորովին պարզ եւ երբեմն նույնիսկ անարգված ու անտեսված մարդկանցից: Այսպես. մենք տեղեկանում ենք, որ նրա առաջին աշակերտները ձկնորսներ էին. «Մինչ Հիսուս շրջում էր Գալիլեայի լճի եզերքին, տեսավ երկու եղբայրների, որոնք ձկնորս էին. Սիմոնին, որ Պետրոս էր կոչվում, եւ նրա եղբորը՝ Անդրեասին: Նրանք ուռկանը ջուրն էին գցում՝ ձուկ որսալու համար: Հիսուս ասաց նրանց. «Հետեւեցե՛ք ինձ, եւ ես ձեզ մարդկանց որսորդներ

կդարձնեմ» (Մտթ. Դ 18-19): Այսպես Նա կոչեց նաեւ Հակոբոսին ու Հովհաննեսին, որոնք նույնպես ձկնորսներ էին, եւ կամ՝ Մատթեոսին, որը մաքսավոր էր:

Հիսուս մշտապես ուսուցանում էր այս տասներկուսին եւ բացատրում նրանց աստվածային ճշմարտությունները, որպեսզի իրենք էլ այդ ամենը փոխանցեն աշխարհին: Երբ հասավ աշակերտներից բաժանվելու պահը, Հիսուս վարդապետական իր պատգամը տվեց նրանց եւ *ուղարկեց* քարոզելու բոլոր ազգերին. »Ինչպես որ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք, ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին: Մկրտե՛ք նրանց Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեք նրանց այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի: (Մտթ. ԻԸ 18-20): Այդ իսկ պատճառով աշակերտները կոչվեցին *առաքյալներ*: Ստանալով Հիսուսի այս պատգամն ու աստվածային շնորհները, նրանք բազմաթիվ երկրներում հետամուտ եղան քրիստոնեության տարածմանը եւ, անտեսելով բոլոր տեսակի հալածանքներն ու դժվարությունները, եռանդուն կերպով քարոզեցին Քրիստոսի կենարար ուսմունքը:

Առաքյալների ջանքերով էր, որ ստեղծվեցին քրիստոնեական համայնքները, որոնք էլ հետագայում վերածվեցին կայուն եկեղեցական կառույցների:

Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործեց Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության շնորհիվ: Այդ պատճառով մեր եկեղեցին *Առաքելական* է կոչվում: Այդ մասին է վկայում նաեւ այն, որ.

- Մեր Եկեղեցին գոյություն ունի առաքելական շրջանից սկսյալ.
- Մեր Եկեղեցին պահպանում է առաքյալների կողմից փոխանցված սուրբ վարդապետությունը.
- Մեր Եկեղեցու առաջնորդները (կաթողիկոս եւ եպիսկոպոսներ) առաքյալների հաջորդներն են:

Բոլոր Ուղղափառ եկեղեցիներում պահպանվել է առաքելական այս հաջորդականությունը, այսինքն՝ առաքյալները ժամանակին իբրեւ իրենց հաջորդներ ձեռնադրել են եպիսկոպոսներ՝ փոխանցելով նրանց Հիսուս Քրիստոսից ստացած քարոզելու եւ մկրտելու իշխանությունն ու Սբ. Հոգու շնորհները, իսկ եպիսկոպոսներն իրենց հերթին այդ շնրորհներն ու առաքելական ծառայության սկզբունքները փոխանցում են հաջորդող սերունդներին, մինչեւ որ տեղի ունենա մեր Փրկչի երկրորդ գալուստը:

բ. Մյուս հետեւորդները

«Գալիլեայից, Հրեաստանից, Երուսաղեմից, Եդոմից, Անդրիորդանանից, Տյուրոսից եւ Սիդոնից բազում ժողովուրդ, լսելով Հիսուսի արածների մասին, գալիս էր նրա մոտ» (Մրկ. Գ 7-8):

Ավետարանից մենք տեղեկանում ենք, որ Հիսուս մշտապես մեծ ժողովրդականություն է վայելել: Երբեմն նույնիսկ Նրա հետեւողների թիվը հազարների էր հասնում: Այո, շատերը լսեցին Նրա քարոզչությունը եւ ականատես եղան Նրա գործերին, բայց իրական հետեւորդներ դառնալու համար միմիայն լսելը բավարար չէր: Քրիստոս հստակ կերպով այս մասին ասում է. «Եթե մեկն ուզում է հետեւել ինձ, թող ուրանա իր անձը, ամեն օր վերցնի իր խաչը եւ գա իմ հետեւից. որովհետեւ ով որ ուզենա փրկել իր կյանքը, կկորցնի այն, եւ ով որ կորցնի իր կյանքն ինձ համար, կփրկի այն» (Ղուկ. Թ 23-24): Փաստորեն Հիսուս իր հետեւորդներից պահանջում էր ոչ թե պարզապես լսողի եւ դիտորդի դերում մնալ, այլ գործնական կյանքով նույնպես հետեւել Իրեն: Եվ իսկապես. ունկնդրող մարդկանց շարքերից շատերը հետագայում հետեւեցին Նրա օրինակին եւ անգամ իրենց սեփական կյանքը չխնայեցին՝ նահատակվելով հանուն Հիսուսի, զորացնելով Տիրոջ Եկեղեցին:

Առաջին դարերում նորակազմ քրիստոնեական համայնքները հալածվում էին հրեական եւ ապա հեթանոսական իշխանությունների կողմից: Հռոմեական կայսրերը եւ ուրիշ երկրների թագավորներն ու իշխանավորները կամենում էին ոչնչացնել քրիստոնեական կրոնը: Սակայն Հիսուսի ճշմարիտ հետեւորդների ջանքերով եւ անձնազոհ գործունեության շնորհիվ այդ համայնքներն առավել ընդլայնվեցին ու հզորացան.«Հավատացյալներն ամենքը միասին էին եւեւեւ ինչ որ ունեին, ընդհանուր էր.նրանք վաճառում էին իրենց կալվածքներն ու ինչքերը եւ եկամուտը բաշխում էին բոլորին՝ նայած թե ով ի՞նչի կարիք ուներ [...] Իրենց այս կենցաղով նրանք արժանացել էին ամբողջ ժողովրդի համակրանքին: Իսկ Տերն օրեցօրեր ավելացնում էր եկեղեցում փրկվածների թիվը» (Գործք. Բ 44-47):

4. Վաղ Եկեղեցի

Հիսուսի Համբարձումից 10 օր հետո, երբ առաքյալները Երուսաղեմում հավաքվել էին վերնատանը, տեղի ունեցավ զարմանահրաշ իրադարձություն՝ *Հոգեգալուստը*. «Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման.եւ լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին [...] Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով...» (Գործք. Բ 2-4): Այդ օրն առաքյալները, ստանալով Սուրբ Հոգու շնորհները, այնքան ոգեշնչվեցին, որ անմիջապես դուրս եկան փողոց եւ համարձակորեն սկսեցին քարոզել ժողովրդին: Ճիշտ է՝ ավանդապահ հրեաները հետապնդում էին Քրիստոսի հետեւորդներին, սակայն Պետրոս առաքյալն այդ օրվա իր խոսքում քաջալերեց բոլորին՝ ասելով. «Ապաշխարեցեք, եւ ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս

Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար» (Գործք. Բ 32):Այդ օրը մարդկանցից շատերն իսկապես ընդունեցին նրա ասածը եւ մկրտվեցին «…եւ այն օրը նրանք մոտ երեք հազար հոգով ավելացան» (Գործք. Բ 41): Ընդունված է ասել, որ Հոգեգալստյան օրը հաստատվեց *Տիեզերական Եկեղեցին*: Առաքյալների քարոզչության շնորհիվ շարունակ նորանոր անդամներ էին միանում Երուսաղեմի նորակազմ համայնքին. «Եվ հավատացյալների բազմությունը մեկ սիրտ ու մեկ հոգի էր: Եվ նրանցից ոչ ոք չէր ասում, թե իր ունեցվածքն իրենն է, այլ ամեն ինչ նրանց համար ընդհանուր էր» (Գործք. Դ 32):

Քրիստոնեական համայնքները հետզհետե ընդլայնվեցին, եւ առաքյալների եռանդուն քարոզչության շնորհիվ տարբեր քաղաքներում նոր համայնքներ ստեղծվեցին: Այսպես, արդեն իսկ առաջին դարի վերջին կայուն եկեղեցական համայնքներ էին ձեւավորվել Երուսաղեմում, Անտիոքում, Ալեքսանդրիայում, Հռոմում, Կորնթոսում եւ բազմաթիվ այլ վայրերում: Առաքյալներից հետո այդ համայնքների գլուխ կանգնեցին նրանց կողմից ընտրված եւ ձեռնադրված առաջնորդ եպիսկոպոսները, վերջիններիս օգնող երեցներն ու սարկավագները: Նրանք միաժամանակ զբաղվում էին թե՛ եկեղեցու հոգեւոր խնամքով եւ թե՛ վարչական առաջնորդությամբ: Երկրորդ դարից սկսյալ որեւէ համայնքում նոր եպիսկոպոս նշանակելու համար անհրաժեշտ էր տվյալ շրջանի երեցներից մեկին նախեւառաջ ընտրել հավատացյալ ժողովրդի կողմից, ապա մերձակա համայնքների մյուս եպիսկոպոսների կողմից նրան քննել եւ ի վերջո ձեռնադրել:

Որեւէ խնդրի կամ թյուրըմբռնման դեպքում առաջնորդի նախագահությամբ հավաքվում էր հոգեւոր խորհուրդ, ուր քննարկվում էր տվյալ հարցը: Ծագած դժվարությունների պատճառի կամ աստվածաբանական հարցերի քննարկման ժամանակ հավաքվում էին շրջանում առկա բոլոր եպիսկոպոսները: Այս սկզբունքով էր, որ տեղի ունեցան երեք *Տիեզերական ժողովները*՝ 325թ.՝ Նիկիայում, 381թ.՝ Կ.Պոլսում եւ 431թ.՝ Եփեսոսում: Դրանք «տիեզերական» են կոչվում, որովհետեւ ողջ քրիստոնյա աշխարհի, այսինքն՝ Ընդհանրական Եկեղեցու ներկայացուցիչներն այդտեղ ներկա էին:Ժողովների ընթացքում միաժամանակ սահմանվեցին ճշմարիտ դավանությունն ու եկեղեցական կանոնները՝ դատապարտելով ժամանակի հերետիկոսական ուղղությունները:

5. Քրիստոնեության Տարածում

Ա դարի վերջին եւ Բ դարի սկզբին քրիստոնեական համայնքները տարբեր երկրներում արդեն իսկ կայուն կառույցների էին վերածվել՝ չնայած հրեական եւ հեթանոսական իշխանությունների հալածանքներին: Նորադարձ քրիստոնյաների թիվը գնալով ավելանում էր: Քրիստոնեական ուսմունքին հաղորդակից դառնալով,

մարդիկ համոզվում էին, որ դա է միակ ճշմարիտ կրոնը, որովհետեւ միայն

քրիստոնեությունն էր այդ ժամանակաշրջանում քարոզում մարդկության հավասարություն, եղբայրություն, սեր, ինչպես նաեւ հորդորում էր վերացնել ստրկատիրությունը, Աստծուն պաշտել հոգով, այլ ոչ թե կենդանական զոհեր մատուցելով:

Բնական է, որ մարդկությունը, անդրադառնալով այս ամենին, չէր կարող չընդունել այդ մարդանվեր ու լուսավոր հավատը: Եվ, չնայած շուրջ երեք հարյուրամյակ շարունակվող հալածանքներին եւ գոյության համար մղվող համառ պայքարին, քրիստոնեական հավատը, այնուամենայնիվ, տարածվեց ու առավել զորացավ: Եվ մարդկությունն աստիճանաբար սկսեց գիտակցել, որ քրիստոնեությունն իրոք աստվածային ճշմարտությունը կրողն է ու արտահայտողը, որի վկայությունն այդ կրոնի հետեւորդների թվի աճն էր: Այն գնալով բազմապատկվեց եւ ի վերջո՝ Դ դարից սկսյալ, մի քանի երկրներ ճանաչեցին քրիստոնեությունն իբրեւ պետական կրոն: Նրանցից առաջինը Հայաստանն էր: 301 թվականին Հայաստանը դարձավ առաջին քրիստոնյա երկիրը՝ պետականորեն ընդունելով քրիստոնեությունը:

313 թվականին Հռոմի կայսր Կոստանդին Մեծը «Միլանի հրովարտակով» արտոնեց յուրաքանչյուր քաղաքացու ազատ կերպով ընտրել իրեն հոգեհարազատ կրոնը՝ այդպիսով թույլատրելով ցանկացած նորադարձի առանց արգելքի ու դժվարությունների ընդունել քրիստոնեությունը:

Տարբեր երկրների զանազան թեմերի առաջնորդ եպիսկոպոսներն իրենց միասնական ուղղափառ վարդապետությամբ կազմում էին Ընդհանրական Եկեղեցին: Նրանց ջանքերով գումարվեցին Տիեզերական ժողովները, ուր դատապարտվեցին ժամանակի հերետիկոսական եւ պառակտիչ հոսանքները: Բայց, դժբախտաբար, Ընդհանրական Եկեղեցին պատմության ընթացքում չկարողացավ պահպանել իր ամբողջականությունը.եւ տարատեսակ աստվածաբանական, մշակութային ու վարչական խնդիրների պատճառով հետագա դարերում Ընդհանրական Եկեղեցուց ներս որոշ բաժանումներ տեղի ունեցան:

Այսպես, 451 թվականի Քաղկեդոնի ժողովում Հիսուս Քրիստոսի մարդկային եւ աստվածային բնությունների հարցի շուրջ առաջ քաշված վիճահարույց գաղափարների հետեւանքով Ընդհանրական Եկեղեցին ապրեց իր առաջին

տրոհումը. արեւելյան մի շարք եպիսկոպոսներ չընդունեցին Քաղկեդոնի ժողովի որոշումները եւ առանձնացան Արեւմուտքից: Այդ արեւելյան ուղղափառ եկեղեցիների շարքում են այսօր Հայ Առաքելական, Ղպտի, Եթովպիայի, Ասորի եւ Հնդիկ Մալաբար եկեղեցիները:

Արեւմտյան Եկեղեցին շարունակեց իր գործունեությունը՝ խզելով բոլոր տեսակի կապերն Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների հետ: Սակայն հետագայում Արեւմուտքում վերստին ներքին տրոհումներ տեղի ունեցան. 1054 թվականին, Սբ. Հոգու բխման աստվածաբանական հարցի շուրջ անլուծելի տարաձայնություն ունենալով, Եկեղեցին բաժանվեց հռոմեա-կաթոլիկ եւ բյուզանդական-ուղղափառ աթոռների միջեւ:

Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու գլուխ կանգնած էր Պապը, եւ նրան էին ենթարկվում Արեւմտյան Եվրոպայի գրեթե բոլոր թեմերը: 1520-ական թվականներին Գերմանիայում ընդվզումներ սկսվեցին Կաթոլիկ եկեղեցու դեմ, որոնք գլխավորում էր Մարտին Լյութերը: Նախնական շրջանում հարցը շոշափվում էր միայն պապական գերիշխանության եւ մեղքերի քավության համար պարտադրվող »փրկագնի« շուրջ: Սակայն, գնալով խնդիրներն ավելի խորացան եւ ավելի լուրջ աստվածաբանական եւ միեւնույն ժամանակ քաղաքական բնույթ ստացան: Այս ժամանակաշրջանում եւս մեծ պառակտում տեղի ունեցավ, որի արդյունքում բողոքական եկեղեցիներ ստեղծվեցին հատկապես Եվրոպայի հյուսիսային երկրներում:

Այս բոլոր ավերիչ պառակտումներով հանդերձ, այսօր քրիստոնյաները ջանում են վերանայել իրենց պատմական անցյալը եւ հնարավոր չափով սրբագրել այն: Քրիստոնեական կրոնի հիմքում իբրեւ կարեւորագույն սկզբունք դրված է եղբայրասիրությունը՝ սերը մեր մերձավորի հանդեպ:

Ուստի ցանկացած բաժանում անընդունելի պետք է լինի Ընդհանրական քրիստոնեական Եկեղեցու համար, որովհետեւ ոչ մի ընտանիք չի կարող միասնական ու երջանիկ կյանքը շարունակել, եթե իր անդամների միջեւ պառակտում ու թշնամանք լինի: Այդ իսկ պատճառով Ի դարում ողջ քրիստոնյա աշխարհում սկսվեց էկումենիկ շարժումը, որը ձգտում է բոլոր քրիստոնեական հարանվանությունների վերամիավորման:

Իբրեւ այդ շարժման գործնական արդյունք ստեղծվեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, որին այսօր անդամակցում են շուրջ երեք հարյուր եկեղեցիներ ու հարանվանություններ, եւ այդպիսով նրանք բոլորը միասնաբար փորձում են փոխադարձ հասկացողության ու դրական փոխհարաբերության հասնել:

6. Հայ Եկեղեցու Ծագումը

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԱԳՈՒՄԸ« ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ա-Գ ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ Եկեղեցու պատմության հնագույն շրջանի վերաբերյալ պատմական տեղեկությունները սակավաթիվ են: Հիմնական պատճառն այն է« որ հայերեն այբուբենը

ստեղծվել է Ե-դարի սկզբին« երբ եւ ծնունդ է առել հայ մատենագրությունը: Առաջին պատմական երկերը« բնականաբար« գրվել են այդ ժամանակ: Առաջին դարերի Հայ Եկեղեցու պատմությունը« իբրեւ Սրբազան Ավանդություն« բանավոր կերպով ավանդվել է սերնդից սերունդ եւ Ե դարում միայն գրի առնվել հայ պատմագրական եւ վարքագրական գրականության մեջ: Սրբազան Ավանդությունը չպետք է շփոթել առասպելի հետ: Այն ունի պատմական հիմք« որոշ ժամանակ բանավոր կերպով պահպանվել է Եկեղեցում« հավանաբար կրել է որոշ փոփոխություններ« զարդարվել հրաշապատումներով եւ ապա« պատեհ առիթով« գրի է առնվել: Սրբազան Ավանդության պատմական հիմքը չի կարելի ուրանալ:

Համաձայն Հայ Եկեղեցու Ավանդության« որն աչքի է ընկնում իր պատմական տվյալներով« Հայոց հողի վրա քրիստոնեության սերմերը ցանվել են դեռ առաքելական շրջանում: Մի շարք պատմական տվյալներ եւ վկայաբանություններ խոսում են այն մասին« որ Հայաստանում քրիստոնեությունը քարոզել են Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալները« որոնք եւ նահատակվելով Հայոց Սանատրուկ թագավորի հրամանով« դարձել են Հայաստանի Եկեղեցու հիմնադիրները:

Մեզ է հասել պատմագրական երկի մի փոքրիկ հատված« ուր պատմվում է Ա դարի վերջին եւ Բ-դարի սկզբին Հայաստանում Ոսկյանց եւ Սուքիասյանց նահատակության մասին: Հեղինակը նշում է« որ այդ պատմությունը քաղել է Ստեփանոսի /Բ դ./ մի ճառից: Ստեփանոսը իր Դիատեսսարոնի մեջ լայնորեն օգտագործել է պարականոն նյութեր: Սա ցույց է տալիս« որ նա քաջատեղյակ էր առաքյալների եւ քրիստոնյա առաջին քարոզիչների ու նահատակների մասին իր ժամանակ գոյություն ունեցած պատմություններին: Հետեւաբար եւ նրա վկայությունները Հայաստանի քարոզիչների եւ նահատակների մասին ունեն մեծ արժեք: Համաձայն այս գրության Թադեոս առաքյալի աշակերտներ Ոսկյանք« Խոյուսի գլխավորությամբ« առաքյալի մահից հետո ապաստանում են Եփրատ գետի ակունքներում՝ Ծաղկեաց ձորերում: Երբ իշխանության գլուխ է գալիս Արտաշես թագավորը (66-88)« սրանք մոտենում են թա-

գավորին եւ քարոզում Քրիստոսի աստվածության մասին: Թագավորը« զբաղված լինելով պատերազմով« գնում է Արեւելք*՝ պատվիրելով նրանց իր վերադարձին կրկին խոսել իրեն այդ մասին: Որոշ ժամանակ անց Ոսկյանք դարձի են բերում Սաթենիկ թագուհու հետ Ալանքից Հայաստան եկած պալատականներին« այդ իսկ պատճառով էլ նախատակվում են թագուհու որդիների կողմից: Քրիստոնյա դարձած ալան իշխանները հեռանում են արքունիքից եւ բնակություն հաստատում Ջրաբաշխ լեռան լանջին« ուր քառասունչորս տարի բնակվելուց հետո նախատակվում են իրենց առաջնորդ Սուքիասի գլխավորությամբ:

Ա դ. թե՛ արտաքին եւ թե՛ ներքին պայմանները միանգամայն նպաստավոր էին Հայաստանում քրիստոնեության տարածման համար: Այսպես« օրինակ. Ա դարում իսկ քրիստոնեությունը լայն տարածում էր գտել Հայաստանի հարեւան երկրներում՝ Կապադովկիայում« Օսրոենում եւ Ադիաբենում: Վերոհիշյալ երկրների հետ Հայաստանի քաղաքական« առեւտրական եւ մշակութային կապերը նպաստավոր պայմաններ կարող էին ստեղծել Հայաստանում քրիստոնեության տարածման համար: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը« որ Ա-Գ դդ.-ում Փոքր Հայքը քաղաքականապես մաս էր կազմում Կապադովկիայի նահանգին եւ բնական է« որ այնտեղ տարածված քրիստոնեությունը Փոքր Հայքի վրայով ներթափանցեր նաեւ Մեծ Հայք:

Հայաստանում քրիստոնեության տարածման համար կարեւոր նախապայման է եղել նաեւ Հայաստանի քաղաքներում հրեական գաղութների առկայությունը« քանի որ« ինչպես հայտնի է« առաջին քրիստոնյա քարոզիչները գնում էին այնտեղ« ուր կային հրեա գաղութներ: Հայաստանի կարեւոր քաղաքներում՝ Տիգրանակերտում« Արտաշատում« Վաղարշապատում« եւ այլուր« հրեա համայնքները կազմում էին առանձին գաղութներ« որոնց գլուխ կանգնած էր գաղութի ռեսը:

Բ դարի վերջին Հայաստանում քրիստոնեության գոյությունը հաստատվում է նաեւ Տերտուղիանոսի մի վկայությամբ: Նա իր Ընդդեմ Հրեաների աշխատության մեջ /7/« գրված 197 թվականին« Գործք Առաքելոցի Բ 9 համարի առթիվ խոսելիս քրիստոնեությունն ընդունող ազգերի՝ պարթեւների« մեդեացիների (մարերի)« փռուգիացիների եւ կապադովկացիների կարգին հիշում է նաեւ հայերին: Տերտուղիանոսի այս վկայությունը կրկնել է նաեւ Օգոստինոսը /Ընդդեմ Մանիք. 9/:

Եվսեբիոս Կեսարացին« թվարկելով Դիոնիսիոս եպիսկոպոս Ալեքսանդրացու գրությունները« հիշում է ապաշխարության մասին մի նամակ« ուղղված Հայաստանի քրիստոնյաներին« որոնց եպիսկոպոսն էր Մերուժանը /Զ 46« 2/: Պատմաբաններից ոմանք փորձել են այս Մերուժանին համարել Փոքր Հայքի այս կամ այն քաղաքի եպիսկոպոս: Ըստ նրանց Դիոնիսիոսի գրած նամակի պատճառը Դեկոս կայսեր /249-251/ հալածանքների հետեւանքով ուրացողներին թողություն շնորհելու խնդիրն է« եւ քանի որ այդ ժամանակ Մեծ Հայքը անկախ երկիր էր« Դեկոսի հալածանքները չէին

կարող Մեծ Հայքի վրա տարածվել: Դիոնիսիոսի նամակը« սակայն« Դեկոսի հալածանքների հետ կապված լինելուց ավելի առնչվում է Նովատիանոսի հարուցած խնդրի հետ*: Բացի այդ« տեսանք արդեն« որ Մեծ Հայքում եւս եղել են հալածանքներ եւ հալածանքներից բխող նման խնդիրներ եւս բնական է որ լինեին: Անկախ այս հանգամանքից« Դիոնիսիոսի նամակը չէր կարող Փոքր Հայքի քրիստոնյաներին ուղղված լինել« նախ այն պատճառով« որ այդ ժամանակ Փոքր Հայքը ինքնուրույն վարչական միավոր չէր« այլ Կապադովկիայի նահանգի մեջ էր մտնում: Եվ երկրորդ՝ Հռոմեական կայսրության մեջ գտնվող եպիսկոպոսները կոչվում էին իրենց աթոռանիստ քաղաքների անուններով եւ հետեւաբար Սեբաստիայի կամ Մելիտինեի եպիսկոպոսը չէր կարող Հայոց եպիսկոպոս կոչվել« այլ Սեբաստիայի կամ Մելիտինեի եպիսկոպոս: Չպետք է մոռանալ նաեւ« որ Փոքր Հայքի քրիստոնեությունը հունական բնույթ ուներ: Վերոհիշյալ նկատառումներով էլ պատմաբանների մեծ մասը Մերուժանին համարում է Մեծ Հայքի եպիսկոպոս: Դիոնիսիոս Ալեքսանդրացու՝ Մերուժան եպիսկոպոսին ուղղված նամակի գրության թվականը դրվում է 251-255 թթ.-ի միջեւ:

Դիոնիսիոս Ալեքսանդրացու՝ Հայոց Մերուժան եպիսկոպոսին ուղղված թուղթը ցույց է տալիս« որ Գ դարի կեսին Հայաստանում գոյություն ուներ կազմակերպված եւ միջեկեղեցական շրջանակներում ճանաչում գտած եկեղեցի:

Գ դարի վերջին տասնամյակներում արդեն քրիստոնյաները այնքան էին բազմացել Հայաստանում« որ Գ դարի վերջին եւ Դ դարի սկզբին քրիստոնեությունը առանց մեծ դժվարությունների« բնական ընթացքով դարձավ պետական կրոն:

Իր գոյության շուրջ 2000 տարիների ընթացքում Հայ Եկեղեցին զարգացման ու նշանակալի փոփոխությունների ճանապարհ է անցել: Այն պահից, երբ մենք՝ հայերս ընդունեցինք քրիստոնեությունը, սերտորեն կապվեցինք մեր հավատին: Դարեր շարունակ մենք անցել ենք պատերազմների, հալածանքների ու աննկարագրելի դժվարությունների ճանապարհով, եւ այս բոլորը հանուն քրիստոնեության: Մեծ է եղել Եկեղեցու դերը հայ ժողովրդի գոյատեւման համար մղված պայքարում: Տարբեր ժամանակաշրջաններում հայերը հաճախ կորցրել են պետականությունը, եւ Եկեղեցին է, որ կատարել է նաեւ պետության դերը: Այս բաժինը հակիրճ պատմում է Հայ Եկեղեցու ծագման ու զարգացման մասին՝ ձեւավորումից մինչ մեր օրերը:

7. Քրիստոնեությունը Հայաստանի Պետական Կրոն

Հայ Եկեղեցու նվիրապետական կառույցի ձեւավորումը

Գ դարի վերջին եւ Դ դարի սկզբին քրիստոնեությունը Հայաստանում դառնում է պետական կրոն: Այդ՝ Հայ ժողովրդի պատմության ամենանշանակալից դեպքը արդի պատմագիտության կողմից դրվում է 301 թվականին: Այդ գործում առաջնակարգ դեր են խաղացել Տրդատ Գ թագավորը /287-330/ եւ Հայաստանի առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորիչը /301-325/:

Ե դարի հայ պատմագրության համաձայն« երբ 287 թվականին Տրդատը հռոմեական զորքի օգնությամբ վերադառնում է Հայաստան վերագրավելու իր հոր գահը« ճանապարհին՝ Եկեղյաց գավառի Երիզա ավանում« զոհաբանական զոհեր է մատուցում Անահիտ չաստվածուհու մեհյանին: Իր զինակիցներից Գրիգորը« քրիստոնյա լինելով« հրաժարվում է զոհ մատուցել: Այդ ժամանակ Տրդատին հայտնի է դառնում նաեւ« որ նա իր հոր՝ Խոսրով Բ-ին սպանող Անակ իշխանի որդին է: Թե մեկ եւ թե մյուս «հանցանքների» համար Տրդատը հրամայում է նրան գցել Արտաշատի ստորերկրյա բանտը« որ սահմանված էր մահապարտների համար: Նույն թվականին Տրդատը երկու հրովարտակ է արձակում« առաջինով հրամայելով Հայաստանի մեջ գտնվող քրիստոնյաների ոտքերը« ձեռքերն ու պարանոցը կապած արքունիք բերել եւ նրանց ունեցվածքը բռնագրավել« իսկ երկրորդով մահապատիժ է սահմանում քրիստոնյաներին թաքցնողների համար: Այս հրովարտակները ցույց են տալիս« թե որքան մեծ վտանգ էր համարվում քրիստոնեությունը պետության եւ հեթանոսության համար:

Ազգային ավանդությունը Հայաստանում քրիստոնեության պետական կրոն դառնալու երեւույթը սերտորեն կապում է Ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակության հետ: Ըստ այդ ավանդության սրանք հռոմայեցի կույսեր էին« որ փախչելով Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից գալիս են Արեւելք« երկրպագում Փրկչի տնօրինական տեղերին եւ ապա Եդեսիայի վրայով անցնում Հայաստան ու հաստատվում Վաղարշապատ մայրաքաղաքի մոտ՝ հնձաններում: Տրդատը« հմայված Հռիփսիմե կույսի գեղեցկությունից« ցանկանում է ամուսնանալ նրա հետ« սակայն մերժվելով« հրամայում է բոլոր կույսերին նահատակել: Հռիփսիմեն 32 ընկերուհիներով նահատակվում է քաղաքի հյուսիս-արեւելյան կողմում« կույսերի առաջնորդ Գայանեն« երկու ընկերուհիներով՝ հարավային կողմում« իսկ մեկը« որ հիվանդ էր՝ հնձանում:

Այս դեպքը տեղի է ունենում 300 թվականին: Կույսերի եւ հատկապես Հռիփսիմեի նահատակությունը հոգեկան հզոր ցնցումներ է պատճառում թագավորին« որ ջղային ծանր հիվանդություն է ստանում: Ե դարում տարածված ժողովրդական զրույցը այդ հիվանդությունը որակում է խոզակերպությամբ եւ Տրդատին քանդակագործության մեջ պատկերում խոզակերպ: Թագավորի քույր Խոսրովիդուխտը մի քանի անգամ երազ է տեսնում« թե Տրդատին կարող է բուժել միայն բանտարկված Գրիգորը: Վերջինս« ազատվելով բանտարկությունից« հանդիսավորապես ընդունվում է Վաղարշապատում« նախ ամփոփում է նահատակ կույսերի աճյունները« ապա 66 օր քարոզում քրիստոնեության լույսի մասին ու բժշկում թագավորին: Թագավորը եւ ողջ արքունիքը քրիստոնյա են դառնում« քրիստոնեությունն էլ հռչակելով պետական կրոն:

Թե իրապես ինչ դեր է խաղացել Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը Տրդատ թագավորի եւ արքունիքի քրիստոնյա դառնալու գործում« դժվար է ճշգրտորեն ասել: Այն հանգամանքը« սակայն« որ նույն Տրդատ թագավորի եւ Ս. Գրիգոր Լուսավորչի կարգադրություններով անմիջապես երեք տաճարներ են կառուցվում կույսերի նահատակությունների վայրերում« վկայում է այն մասին« թե ինչ մեծ նշանակություն են տվել ժամանակակիցները այդ նահատակություններին:

Նորադարձ քրիստոնեությունը« սակայն« պետք է իր հովիվներն ու հովվապետերը ունենար: Ս. Գրիգոր Լուսավորիչը հանդիսավորությամբ ուղարկվում է իր կրթավայրը՝ Կապադովկիայի Կեսարիա« եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու: Կեսարիայի եպիսկոպոս Ղեւոնդը« Կապադովկիայի բազմաթիվ այլ եպիսկոպոսների հետ միասին« Ս. Գրիգոր Լուսավորչին ձեռնադրում է Հայաստանի եպիսկոպոս: Ղեւոնդ եպիսկոպոսը« ներկա բոլոր եպիսկոպոսների հավանությամբ« հանձնարարում է Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսին ընկերանալ Ս. Գրիգոր Լուսավորչին եւ վերջինիս գահակալության արարողությունը կատարել Հայաստանում: Հատկանշական է« որ գահակալության արարողությունը կատարվում է ոչ թե Հայաստանի մայրաքաղաք եւ Ս. Գրիգոր Լուսավորչի աթոռանիստ Վաղարշապատում« այլ հեռավոր Աշտիշատում« ուր գնալու համար նրանք ստիպված էին մեծ շեղում կատարել ճանապարհից: Այս երեւույթը բացատրվում է միայն նրանով« որ Աշտիշատում գոյություն ուներ արդեն մի հին եպիսկոպոսական աթոռ:

Վաղարշապատ վերադարձին Ս. Գրիգոր Լուսավորիչը ձեռնարկում է Հայաստանի Մայր Տաճարի՝ Կաթողիկե եկեղեցու կառուցումը« համաձայն մի տեսիլքի« ըստ որի Աստուծո Միածին Որդին իջնում է երկիր եւ հրեղեն մուրճով հարվածելով գետնին ցույց տալիս այն վայրը« ուր պիտի կառուցվեր Իջման Ս. Սեղանը:

Նորադարձ հայ պետությունը շուտով՝ 313 թվականին ստիպված է լինում պաշտպանելու քրիստոնեությունը հռոմեական կայսրության դեմ: Եվսեբիոս Կեսարացին

վկայում է« որ Մաքսիմինոս Դայա կայսրը /305-313/ "պատերազմ հայտարարեց արմեններին« այն մարդկանց« որոնք ի սկզբանե բարեկամ եւ նիզակակից էին հռոմայեցիներին: Եվ որովհետեւ նրանք քրիստոնյա էին եւ ջերմեռանդ պաշտում էին Աստծուն« ուստի աստվածատյացը ջանաց նրանց բռնությամբ ստիպել« որ դառնան կուռքերի եւ դեւերի պաշտամունքին: Դրանով նա բարեկամին ատելի դարձրեց« դաշնակցին՝ թշնամի... Արդ՝ նա հենց ինքն իր բանակի հետ« արմենների դեմ պատերազմելիս« ջախջախվեց" /Թ 8«2/:

Այն ժամանակ Հայաստանը ֆեոդալական մի երկիր էր: Երկրի ղեկավարը թագավորն էր« որ միեւնույն ժամանակ սեփականատերն էր կենտրոնական Այրարատ նահանգի: Թագավորի կողքին կային նախարարներ« որոնք իշխում էին իրենց պատկանող նահանգներին« կամ գավառներին« ժառանգական իրավունքով եւ առանձին զորքով« վասալական ենթակայության մեջ լինելով թագավորից եւ իրենց հատուկ գահը ունենալով արքունիքում« համաձայն իրենց հզորության:

Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայ Եկեղեցու նվիրապետությունը կազմակերպում է Հայաստանի պետական վարչական կառուցվածքի համաձայն: Նա նախարարությունների համար ձեռնադրում է եպիսկոպոսներ: Պատմական աղբյուրներում հիշվում են ավելի քան 30 եպիսկոպոսություններ« այդ թվում՝ Հարքի« Սյունյաց« Բասենի« Մամիկոնյանների« Բագրատունյաց տան« Խորխոռունիների տոհմի« Մոմկաց« Արծրունյաց« Ցուրտավի« Կարինի« Դարանաղյաց« Շիրակի« Կորդվաց աշխարհի« Վանանդացիների« Աբեղյան եւ Գաբեղյան տոհմերի եւ այլն: Այս եպիսկոպոսները« 36« ենթակա էին Հայոց եպիսկոպոսին« որ շուտով ստանում է Հայոց Հայրապետ անունը: Այսպիսով Հայաստանի Եկեղեցու նվիրապետական կառուցվածքը կազմավորվում է ինքնուրույն ճանապարհով« ելնելով տեղական պայմաններից եւ անկախ այն ընթացքից« որ ունեցավ Եկեղեցին Հռոմեական կայսրության մեջ« ուր 325 թ. Նիկիայի Ա Տիեզերական ժողովում հաստատվեց միտրոպոլիտական սիստեմը« իսկ 381 թ. Կ. Պոլիսի Բ Տիեզերական ժողովում՝ պատրիարքականը:

Ս. Գրիգոր Լուսավորչի հովվապետության ժամանակ Աղվանից Ուռնայր թագավորը քրիստոնյա էր դարձել եւ Լուսավորիչը Աղվանքի համար մի հռոմայեցի եպիսկոպոս էր ձեռնադրել: Հավանաբար այս եպիսկոպոսի մահից հետո Ս. Վրթանես Հայրապետը Աղվանից եպիսկոպոս է ձեռնադրում իր ավագ որդուն՝ Գրիգորիսին« որը գնալով Աղվանք« Ցրիում նորոգում է եկեղեցիները« քարոզում« ապա գնում քրիստոնեությունը տարածելու Մազքութների մեջ: Նախնական շրջանում Գրիգորիսը հաջողություն է ունենում Մազքութների Արշակունի Սանեսան թագավորի արքունիքում: Հետագայում« սակայն« 337 թվականին նահատակվում է նույն թագավորի հրամանով Վատնյան դաշտում« կապում են ձիու պոչից եւ քաշ ալով տանջամահ անում: Անշուշտ այս նահատակությունը կապված էր Պարսից Շապուհ Բ թագավորի քրիստոնեահալած քաղաքականության հետ: Ս. Գրիգորիսի աշակերտները նրա աճյունը բե-

րում են Հայաստան եւ ամփոփում Արցախի Ամարասում« որն այնուհետեւ դառնում է մեծ ուխտատեղի եւ եպիսկոպոսական Աթոռ:

353 թ. հայոց մեծամեծերի միանվագ համաձայնությամբ կաթողիկոս է ընտրվում Հուսիկ կաթողիկոսի թոռ Ներսես իշխանը: Մեկ տարի անց Ներսես կաթողիկոսը մի նշանավոր ժողով է գումարում Աշտիշատում« որ համարվում է Հայոց Ա ազգային եկեղեցական ժողովը: Ժողովը զբաղվում է հիմնականում երկու կարեւոր հարցերով:

1. Կազմակերպչական հարցեր: Ժողովը որոշում է Հայաստանի տարբեր վայրերում հիմնել աղքատանոցներ« որբանոցներ« հիվանդանոցներ« ուրկանոցներ« հյուրանոցներ եւ այլ բարեգործական հաստատություններ: Ժողովը արգելում է հեթանոսական սովորությամբ` լաց ու կոծով« հանդերձներ պատռելով մեռելներ թաղել« քանի որ քրիստոնյան պարտավոր է հավատալ հանդերձյալ կյանքին: Արգելվում է մերձավոր արյունակիցների ամուսնությունը: Հանձնարարվում է հեռու մնալ հարբեցողությունից« պոռնկությունից« սպանությունից« գթությամբ վարվել ծառաների հետ« ծանր հարկերով չնեղել ժողովրդին եւ այլն: Ժողովը որոշում է հիմնել նաեւ վանքեր ու պարսպապատ կուսանոցներ« հաստատել դպրոցներ յուրաքանչյուր վանքում: Ժողովը զբաղվում է նաեւ ծիսական բարեկարգման հարցերով:

2. Դավանաբանական հարցեր: Ժողովը զբաղվում է նաեւ Հավատո Հանգանակի հետ կապված վիճաբանություններով: Հայտնի է« որ Նիկիայի Ա Տիեզերական ժողովում բանաձեւվում է Եկեղեցու ուղղափառ դավանությունը Որդի Աստուծո մասին: Տեսանք արդեն« որ այս հանգանակը Արիստակես Հայրապետը բերել էր Հայաստան եւ այն ընդունելի էր համարվել Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից ու դարձել նաեւ Հայ Եկեղեցու Հավատամքը: Մի քանի տարի անց« սակայն« այս հանգանակը լուրջ ընդդիմության է հանդիպում Հռոմեական կայսրության մեջ« քաղաքական իշխանության օժանդակությամբ հզորացած արիոսական զանազան հոսանքների կողմից: Տեսանք նաեւ« որ Հայաստանում նույնպես եղել են արիոսական եպիսկոպոսներ: Աշտիշատի ժողովը կրկին անգամ մերժել է արիոսականությունը եւ ընդունել Նիկիական Հանգանակը:

Աշտիշատի ժողովի որոշումները ամենայն հաջողությամբ իրականացնում է Ներսես կաթողիկոսը« որի համար էլ արժանանում է Մեծ կոչմանը: Նրա հայրապետության շնորհիվ հայ ժողովուրդը լիիրավ կերպով հաղորդակից դարձավ քրիստոնեության էությանը: Եվ կարելի է ասել« որ նրա գործունեության շնորհիվ է« որ հայ ժողովուրդը իսկապես քրիստոնյա դարձավ:

8. Հայաստանյայց Եկեղեցու Հաստատումը

Հայաստանում քրիստոնեության տարածման զուգընթաց հոգեւոր հովիվների ու հովվապետների կարիքն էր զգացվում: Եպիսկոպոսություն ստեղծելու նպատակով Ս. Գրիգոր Լուսավորիչը մեկնեց Կապադովկիայի Կեսարիա քաղաք, ուր օծվեց Կապադովկիայի եպիսկոպոսների կողմից՝ Ղեւոնդիոս Կեսարացու ձեռամբ: Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը Հայաստանում նախագահեց Ս. Գրիգոր Լուսավորչի գահակալության արարողությունը: Արարողությունը տեղի ունեցավ ոչ թե Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում, այլ հեռավոր Աշտիշատում, ուր երկար ժամանակ գոյատնել է Եպիսկոպոսական Աթոռը:

Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայաստան վերադառնալով, իր հետ Կեսարիայից ու Սեբաստիայից շատ քահանաներ բերեց: Թագավորը եկավ Եփրատ գետի ափը՝ նրան դիմավորելու: Ս. Գրիգորը պահեցողության շրջան հայտարարեց բոլորի համար, իսկ Հայ Եկեղեցին այսօր էլ նշում է այն որպես առաջավորաց պահք:

Ս. Գրիգորը քարոզում էր ու մարդկանց նախապատրաստում մկրտության: Այն հոգեւորականները, որոնց նա իր հետ էր բերել, օգնում էիր իրեն մկրտությունների ժամանակ: Ս. Գրիգորն անձամբ մկրտեց Տրդատ թագավորին, նրա ընտանիքին, ինչպես նաեւ ողջ արքունիքին և երկրի ազնվականներին:

Տրդատ թագավորն ու Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայաստանը հռչակեցին քրիստոնյա պետություն: Ս. Գրիգոր Լուսավորիչը հիմնեց Հայ Եկեղեցու նվիրապետությունը՝ հավատարիմ մնալով Հայաստանի պետական վարչական համակարգի սկզբունքներին: Նա յուրաքանչյուր աչքի ընկնող նախարարության համար մեկական եպիսկոպոս ձեռնադրեց: Այս եպիսկոպոսները ենթարկվում էին Հայաստանի Ծայրագույն եպիսկոպոսին՝ եպիսկոպոսապետին, որը շուտով կոչվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս: Այսպիսով Հայ Եկեղեցու նվիրապետությունը կազմավորվեց տեղի պայմաններին համապատասխան և անկախ այն գործընթացներից, որոնք տեղի էին ունենում Հռոմեական կայսրության եկեղեցիներում, ուր 325 թ-ին Նիկիայի առաջին Էկումենիկ Ժողովով հաստատվեց նվիրապետության մետրոպոլիտական համակարգը, իսկ 381 թ, Կոստանդնուպոլսի Երկրորդ Էկումենիկ Ժողովով՝ պատրիարքականը:

Ճիշտ է, Հայաստանում Ս. Գրիգոր Լուսավորչից դեռ շատ առաջ կային այլ եպիսկոպոսներ, սակայն նա դարձավ առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ հայ Եկեղեցին ղեկավարեց շուրջ 25 տարի: Գրիգոր Լուսավորիչն իր մահկանացուն կնքեց Նիկիայում գումարված առաջին Տիեզերական Ժողովից կարճ ժամանակ անց: Նրա որդին՝ Արիստակեսը, որ եպիսկոպոս էր ձեռնադրվել հոր ձեռամբ, մասնակցեց այդ ժողովին որպես Հայ Եկեղեցու ներկայացուցիչ , քանի որ հայրն արդեն բավական ծեր էր: Հենց այս ժողովում էր, որ ձեւակերպվեց քրիստոնեական եկեղեցու Հավատո Հանգանակը:

Քրիստոնեացած Հայաստանը պետք է պաշտպաներ իր կրոնը Հռոմեական Կայսրությունից: Եվսեբիոս Կեսարացին վկայում է, որ Մաքիմիոս կայսրը (305-313) «պատերազմ հայտարարեց արմեններին, այն մարդկանց, ովքեր ի սկզբանե բարեկամ եւ նիզակակից էին հռոմեացիներին: Եվ որովհետեւ նրանք քրիստոնյա էին եւ ջերմեռանդ պաշտում էին Աստծուն, ուստի աստվածատյացը ջանաց նրանց բռնությամբ ստիպել վերադառնալու կուռքերի եւ դեւերի պաշտամունքին: Դրանով նա բարեկամին ատելի դարձրեց, դաշնակցին՝ թշնամի... Արդ՝ նա հենց ինքն իր բանակի հետ, արմենների դեմ պատերազմելիս, ջախջախվեց»: (Թ 8,2,4) Իր կյանքի վերջին օրերին՝ 312-313 թթ, Մաքիմիոս կայսրը հարձակվեց հայերի վրա: Քրիստոնեությունը 10 տարվա ընթացքում այնպիսի խոր արմատներ էր գցել Հայաստանում, որ հայերը սկսել էին պայքարել Հռոմեական հզոր կայսրության դեմ իրենց նոր հավատքին հավատարիմ մնալու համար:

Այդ ժամանակ Հայաստանը ֆեոդալական երկիր էր: Պետության ղեկավարը թագավորն էր, որը միաժամանակ կենտրոնական Այրարատ մարզի մարզպանն էր: Թագավորի վասալները իշխաններն էին, ովքեր ժառանգել էին իրենց մարզերի ու շրջանների իշխանությունը եւ ունեին իրենց սեփական բանակներն ու իրենց գահերը թագավորական պալատում ՝ համապատասխան իրենց պաշտոնին:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրոք Աղվանքի Ուռնայր թագավորը նույնպես ընդունեց քրիստոնեությունը: Աղվանքի առաջին եպիսկոպոսի մահից հետո, ծնունդով հռոմեացի, Վրթանես կաթողիկոսի որդի Գրիգորիսը, որը ձեռնադրվել էր ձեռամբ Ս. Գրիգոր Լուսավորչի, դարձավ Աղվանքի եպիսկոպոս: Վերականգնելով Ցրիում գտնվող եկեղեցին՝ Գրիգորիսը մեկնեց մազքութների երկիր՝ քարոզելու համար Ավետարանը: Այնտեղ նա 337 թ-ին նահատակվեց Արշակունի Սանեսան թագավորի հրամանով: Անկասկած Գրիգորիսի նահատակությունը կապված էր պարսից Շապուհ Բ արքայի կողմից այդ ժամանակ քրիստոնյաների դեմ տարվող հալածանքների հետ: Աշակերտները Ս. Գրիգորիսի աճյունը թաղեցին Արցախում՝ Ամարասում, որն այնուհետև դարձավ Եպիսկոպոսական Աթոռ:

353թ-ին հայ ազնվականները միաանաբար կաթողիկոս ընտրեցին Ներսես իշխանին՝

Հուսիկ Կաթողիկոսի (341-347) թոռանը:
Մեկ տարի անց Ներսես Կաթողիկոսը Աշտիշատում ժողով հրավիրեց, որը պատմության մեջ հայտնի է որպես առաջին Ազգային Եկեղեցական Ժողով:

Ժողովը որոշում ընդունեց աղքատներին կացարաններ տալ, Հայաստանի տարբեր վայրերում հիմնեց որբանոցներ, հիվանդանոցներ, բորոտանոցներ եւ այլ հաստատություններ: Խորհուրդը նաեւ որոշում ընդունեց հիմնել վանքեր, կուսանոցներ եւ դպրոցներ:

Ժողովն արգելեց մահացած մարդկանց հեթանոսական սովորություններով թաղելը (հանդերձները պատռելը, բարձրաձայն բղավելը եւ այլն), այդպիսով առավել հավատ ներշնչելով հարության ու հանդերձյալ կյանքի նկատմամբ: Այն նաեւ արգելեց ամուսնությունը հարազատների հետ, կաշառակերությունը, անբարոյականությունը, ինչպես նաև հորդորեց հեռու մնալ հարբեցողությունից, գթասրտություն ցուցաբերել ծառաների հանդեպ, մարդկանց չծանրաբեռնել հարկերով եւ այլն:

Աշտիշատի Ժողովում քննարկվեց նաեւ արիոսականության հարցը: Հայտնի է, որ Նիկիայի առաջին Էկումենիկ Ժողովում բանաձեւվում էր Եկեղեցու Ուղղափառ դավանությունը Որդի Աստծու մասին: Արիստակես Կաթողիկոսը Նիկիական Հանգանակը բերեց Հայաստան, եւ Ս. Գրիգոր Լուսավորիչն ընդունեց այն: Մի քանի տարի անց Հռոմեական Կայսրությունում սկսեցին զարգանալ արիոսականության տարբեր ուղղությունները: Հայ եպիսկոպոսների շարքերում եւս կային Արիոսի վարդապետության հետեւորդներ: Աշտիշատի Ժողովը մեկ անգամ եւս դատապարտեց արիոսականությունը եւ հաստատեց Նիկիական Հանգանակի ընդունումը: Ներսես Կաթողիկոսին հաջողվեց Առաջին Ազգային Եկեղեցական Ժողովի որոշումներն իրագործել, որի համար նրան անվանեցին Ներսես Մեծ:

9. Հայաստանյայց Եկեղեցու Հայացումը

387 թվականին Հայաստանի թագավորությունը երկփեղկվում է, ենթարկվելով Պարսկաստանին եւ Բյուզանդիային: Բյուզանդական Հայաստանում, որ ամփոփված էր միայն Բարձր Հայք նահանգի սահմաններում, շուտով վերանում է Հայկական թագավորությունը եւ երկիրը սկսում է կառավարել Բյուզանդիայի կողմից նշանակված կոմսի կողմից: Արեւելյան Հայաստանում Արշակունիների թագավորությունը, թեպետեւ Պարսկաստանի իշխանության տակ, գոյատեւում է եւս երեք տասնամյակ:

Ճիշտ այդ դժվարին պայմաններում է, որ սկիզբ է առնում հայ մշակույթի ոսկեդարը:

Քրիստոնեական պաշտամունքը Հայաստանում կատարվում էր երկու լեզուներով՝

հունարեն եւ ասորերեն: Բնական է, որ այն անհաղորդ մնար ժողովրդի լայն զանգվածներին: Անշուշտ ստեղծվել էր թարգմանիչների դաս, որ եկեղեցական արարողությունների ժամանակ Ս. Գրքի հատվածները բանավոր կերպով թարգմանում էր հայերենի, սակայն քրիստոնեությունը հայ ժողովրդի սեփականությունը լինելու համար պետք է որ հայերեն հնչեր: Այս դժվարությունը, ի թիվս այլոց, զգում է նաեւ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը, երբ Գողթն գավառում մաքառում էր հեթանոսության վերջին մնացորդների դեմ: Նա երկնում է հայերեն գրեր ստեղծելու գաղափարը, որը մեծ ընդունելություն է գտնում Ս. Սահակ կաթողիկոսի եւ հայոց Վռամշապուհ թագավորի կողմից /389-417/: Տքնաջան աշխատանքից հետո, աստվածային հայտնությամբ Ս. Մեսրոպ Մաշտոցին ի վերջո հաջողվում է ստեղծել հայերեն այբուբենը, 406 թվականին: Առաջին նախադասությունը, որը Ս. Մեսրոպը թարգմանում է հայերենի, հետեւյալն է. "Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ" /Առակաց Ա 1/: Ճիշտ հասկանալով այս խրատի իմաստը, հայ ժողովուրդը հայոց այբուբենը դարձրեց իր հիմնական զենքը օտար նվաճողների դեմ, իր պատմության ողջ ընթացքում: Հայերեն այբուբենի տառերը դարձան հայ ժողովրդի գոյատեւման սյուները:

Ս. Մեսրոպ Մաշտոցը թագավորի եւ կաթողիկոսի օժանդակությամբ հայատառ դպրոցներ է բացում Հայաստանի զանազան վայրերում եւ սկսում է հայերենի ուսուցանումը:

Այդ կարեւոր գործունեությանը զուգահեռ Հայաստանում սկսվում է թարգմանական

եւ ինքնուրույն գրականության ստեղծումն ու զարգացումը: Թարգմանական գործունեությունը ղեկավարում է Ս. Սահակ Պարթեւը, նախ եւ առաջ ասորերենից հայերենի թարգմանելով Ս. Գիրքը: Միաժամանակ նա իր նշանավոր աշակերտներին ուղարկում է ժամանակի մշակույթի նշանավոր կենտրոնները՝ Եդեսիա, Ամիդ, Ալեքսանդրիա, Աթենք, Կ. Պոլիս եւ այլն, իմտանալու ասորերեն եւ հունարեն լեզուների մեջ եւ թարգմանելու եկեղեցական հայրերի գործերը:

Թարգմանական գրականության հետ զուգահեռ ստեղծվում է նաեւ ինքնուրույն գրականություն՝ բազմազան ժանրերով՝ աստվածաբանական, բարոյագիտական, մեկնողական, հակաճառական, ջատագովական, վարքաբանական, պատմողական եւ այլն:

Կարճ ժամանակում հայերենի են թարգմանվում ասորական եւ հունական հայրաբանության կարեւոր բոլոր գործերը: Թարգմանիչները 431/2 թթ. իրենց հետ՝ Կ. Պոլսից Հայաստան են բերում հունարեն Աստվածաշնչի ընտիր օրինակներ, որոնց հիման վրա սրբագրվում է հայերեն Աստվածաշունչը: Թարգմանիչների մատուցած ծառայությունները այնքան մեծ են, որ Հայոց Եկեղեցական Ավանդությունը սրբացրել է նրանց եւ ամեն տարի տոնում է նրանց հիշատակը մեծ շուքով:

10. Միացման Փորձեր

Է դարի սկզբին ծավալված պարսկա-բյուզանդական պատերազմը Հերակլ կայսեր /610-641/ հերոսական ջանքերի շնորհիվ ավարտվում է Բյուզանդիայի հաղթանակով: Կայսրության արեւելյան նահանգների՝ Ասորիքը« Պաղեստինի« Հայաստանի բնակչությունը մեծամասամբ միաբնակ էր: Քաղաքական նկատառումներով« որպեսզի Ասորիքը« Պաղեստինը« Եգիպտոսը« եւ Հայաստանը ավելի սերտորեն կապվեն Բյուզանդիային« կայսրը սկսում է սիրաշահել միաբնակներին: Այսպես« նա Կ. Պոլսի պատրիարք է նշանակում միաբնակ Հակոբիկյան Սերգիոսին« Անտիոքի պատրիարք՝ ասորի միաբնակների կաթողիկոսին« ցանկանալով այդպիսով ասորիներին միացնել Անտիոքի պատրիարքության հետ« իսկ Ալեքսանդրիայի պատրիարք է նշանակում թունդ հակաքաղկեդոնական Կյուրոսին:

Ավելի քան մեկ ու կես դար ալեկոծվող եկեղեցում խաղաղություն հաստատելու նպատակով Կ. Պոլսի Սերգիոս պատրիարքը /610-638/ առաջ է քաշում միակամության վարդապետությունը« ըստ որի Քրիստոս ունի երկու բնություն« մի դեմք« մի կամք եւ մի ներգործություն": Հերակլ կայսրը հավանություն տալով այս վարդապետությանը« կայսրության եկեղեցիներին առաջարկում է ընդունել այն: Ալեքսանդրիայի Կյուրոս պատրիարքը Կ. Պոլսի պատրիարքին ուղղված մի նամակում ասում է« որ հիմնվելով կայսեր եւ Սերգիոս պատրիարքի առաջարկած միակամյա դավանության վրա հաշտեցրել է Եգիպտոսի տարբեր կողմերին եւ հաստատել հետեւյալ դավանա-

քը. "Ով չի խոստովանում «ցերկուց բնութեանց մի Քրիստոս« մի Որդի« մի մարմնացեալ բնութիւն Բանին Աստուծոյ»« ինչպես որ ուսուցանեց Ս. Կյուրեղը« անփոփոխելի եւ անայլայլելի« թող նզովեալ լինի":

Միակամյա վարդապետությունը լայն ընդունելություն է գտնում ինչպես Բյուզանդիայում« այնպես էլ Արեւմուտքում. այն ընդունում է նաեւ Հռոմի Հոնորիոս Պապը: Երկու կողմերի ծայրահեղ ներկայացուցիչները« սակայն« մերժում են այն ընդունել (քաղկեդոնականների նշանավոր ներկայացուցիչը Մաքսիմոս Խոստովանողն է):

Հերակլ կայսրը նույն խնդրով դիմում է նաեւ Հայոց Եկեղեցուն: Եզր կաթողիկոսը (630-641) կայսրից խնդրում է մի դավանագիր« որը քննելով հայոց վարդապետները« Սյունյաց եպիսկոպոս Մաթուսաղայի գլխավորությամբ« հանգում են այն եզրակացության« որ այն իր հիմնական կառուցվածքով ուղղափառ է եւ ընդունելի« միայն թե բացակայում է Քաղկեդոնի ժողովի եւ Լեւոնի Տումարի նզովումը: Այնուհետեւ 632 թ. մի ժողով է գումարվում Կարինում« ուր կայսրը եւ Եզր կաթողիկոսը իրենց հետեւորդներով համաձայնության են գալիս միակամյա վարդապետության շուրջը:

Ինչպես կայսրության մեջ տեղ-տեղ« այնպես էլ Հայաստանում գտնվում են միակամյա վարդապետության հակառակորդներ: Այդպիսի դիրք է ճշտում Հայաստանում օրինակ Դվինի կաթողիկոսարանի փակակալ Հովհանը« որ հրապարակայնորեն հանդիմանում է Կարինից վերադարձող Եզր կաթողիկոսին« որի համար էլ աքսորվում է նախ Արագածոտն գավառի Բջնիի Մայր վանքը« եւ ապա Աղվանից մարզպանության Գարդմանք գավառը: Նրա աշակերտները« Սարգիս Մայրագոմեցու ղեկավարությամբ« իրենց ուսուցչի մահից հետո ընկնում են երեւութական սխալ վարդապետության մեջ:

Ահա այս ժամանակ պատմության ասպարեզ են դուրս գալիս արաբները: Նրանք 638 թ. Բյուզանդիայից գրավում են Ասորիքը« 640 թ. Եգիպտոսը: Կայսրությունը մեկընդմիշտ կորցնում է միաբնակ բնակչություն ունեցող նահանգները« որով եւ միակամյա վարդապետությունը կորցնում է իր քաղաքական նշանակությունը եւ շուտով անտեսվում թե Բյուզանդիայում եւ թե Հայաստանում:

11. Հայ-Բիւզանդական Հարաբերություններ

1165 թվականին Ս. Ներսես Շնորհալին Հայ եւ Բյուզանդական Եկեղեցիների տարբերությունների մասին մի խոսակցություն է ունենում Մամեստիայի բյուզանդական դուքս Ալեքսի հետ: Դուքսը« Ներսեսին հանձնելով մի հարցարան« խնդրում է գրավոր արձանագրել իրենց խոսակցությունը եւ պատասխանել այն հարցերին« որ իրեն էին հանձնել հույն վարդապետները:

Ս. Ներսես Շնորհալին պատրաստում եւ Ալեքսին է հանձնում "Գիր հաւատոյ Խոստովանութեան" խորագրով մի գրություն: Ալեքսը ստանալով գրությունը անձամբ հանձնում է Մանուել կայսեր (1143-1188): Կայսրը եւ Կ. Պոլսի Ղուկաս պատրիարքը /1156-1169/ քննելով այդ գրությունը գտնում են« որ այն կարող է հիմք եւ սկիզբ հանդիսանալ հայ եւ բյուզանդական եկեղեցիների միության համար: Կայսրը գրում է Հայոց Գրիգոր Գ կաթողիկոսին եւ խնդրում Կ. Պոլիս ուղարկել Ներսես Շնորհալուն՝ բանակցությունների համար:

Մինչ կայսեր պատգամավորի Հռոմկլա գալը Գրիգոր Գ-ը արդեն վախճանվել էր եւ կաթողիկոս էր ընտրվել Ս. Ներսես Շնորհալին /1166-1173/« որը չէր կարող թողնել կաթողիկոսարանը եւ Կ. Պոլիս գնալ: Ս. Ներսես Շնորհալին իր փոխարեն կայսերն է ուղարկում մի երկրորդ գրություն« ուր առաջ է քաշում այն սկզբունքները« որոնց գործադրումով միայն կարելի է հասնել ըղձալի միության: Այդ սկզբունքներն են. «Միութիւն ի կարեւորս« ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի»: Միությունը չպետք է լինի տիրոջ եւ ծառայի օրինակով« այլ հավասարը հավասարի հետ« հիմք ընդունելով Ս. Գիրքը եւ Սրբազան Ավանդությունը: Ուր որ նկատվեն դավանաբանական եւ ծիսական սխալներ« լինեն դրանք հայերի թե բյուզանդացիների մոտ« պետք է մերժվեն:

Ս. Ներսես Շնորհալու այս գրությանը կայսրը եւ Միքայել Գ պատրիարքը /1169-1177/ պատասխանում են 1172 թվականին« միության համար հայերին առաջարկելով ընդունել հետեւյալ 9 կետերը.

- Նզովել մի բնություն խոստովանողներին՝ Եվտիքեսին« Դիոսկորոսին« Սեւերիանոսին եւ Տիմոթեոսին:
- Դավանել Քրիստոսի մեջ մի անձ երկու բնություն« երկու կամք եւ երկու ներգործություն:

- Քրիստոսի Ծննդյան« Անվանակոչության« Ս. Աստվածածնի Ավետման եւ հարակից մյուս տոները տոնել բյուզանդացիների հետ միասին:
- «Ս. Աստուած»-ը երգել առանց «Որ խաչեցար»-ի:
- Ս. Մեռոնը պատրաստել ձիթայուղից:
- Ս. Պատարագը մատուցել խմորուն հացով ու ջրախառն գինիով:
- Ս. Պատարագի արարողության ողջ ընթացքում ժողովուրդը մնա եկեղեցում« բացի ապաշխարողներից:
- Ընդունել Դ« Ե« Զ« Է Տիեզերական ժողովները:
- Հայոց կաթողիկոսի ընտրությունը պետք է վավերացվի կայսեր կողմից:

Ս. Ներսեսը« որ ջերմ պաշտպան էր եկեղեցիների միության« հուսախաբություն ապրելով« պատասխանում է կայսեր եւ պատրիարքի դեսպան Թեորիանոսին« որ ինքը միայնակ չի կարող նման լուրջ հարցեր վճռել« որի միակ իրավասուն Հայոց ազգային-եկեղեցական ժողովն է եւ որ ինքը կպատասխանի այդ խնդրի համար ժողով գումարելուց հետո: Խոստացված ժողովը« սակայն« չի գումարվում եւ վրա է հասնում Ս. Ներսես Շնորհալու մահը:

Կայսրը իր առաջարկները կրկնում է Գրիգոր Դ կաթողիկոսին /1173-1193/« որը պատասխանում է կայսեր« թե ինքը նույնպես« ինչպես իր նախորդները« փափաքում է եկեղեցիների միությունը« սակայն բյուզանդացիների առաջարկած 9 կետերը ընդունել չի կարող: Մի նոր նամակով բյուզանդացիները կրճատում են 3-9-րդ առաջարկները՝ թողնելով միայն 1-2-ը:

Հակառակ Բուն Հայաստանի եկեղեցական ղեկավարների՝ եկեղեցիների միության նկատմամբ ունեցած վերապահությունների« Գրիգոր Դ կաթողիկոսը 1179 թվականին հրավիրում է Հռոմկլայի ժողովը՝ պատասխանելու բյուզանդացիների առաջարկներին: Արեւելյան վարդապետներին ուղարկած իր նամակում Գրիգոր կաթողիկոսը գրում է« որ չպետք է քարոզել թե հույները աղանդավորներ են« քանի որ նրանց մեջ եղել են Եկեղեցու նշանավոր հայրեր: Չպետք է նրանց ատել« այլ սիրո եւ մտերմական հարաբերություն ունենալ նրանց հետ եւ« եթե մոլորված են« հանդիմանել ու դարձի բերել եւ կամ գոնե ցույց տալ նրանց« որ մենք առողջ ենք« որով մեծ լավություն արած կլինենք այն հայերին« որ կրոնական պատճառով հալածվում են հույների կողմից:

Քրիստոնեական սիրո նման ոգով առաջնորդվելով հանդերձ« Հայ Եկեղեցու ղեկավարությունը չէր կարող հրաժարվել իր ավանդական սրբություններից: Հռոմկլայի ժողովը« որին մասնակցում էին թե Բուն Հայաստանի« թե Կիլիկիայի եւ շրջակայքի եպիսկոպոսները« ինչպես նաեւ Աղվանից կաթողիկոսը եւ Հակոբիկ Ասորիների պատրիարքի ներկայացուցիչը« մի կողմից նզովում է ծայրահեղ միաբնակությունը« որ միշտ նզովել էր Հայոց Եկեղեցին« մյուս կողմից մերժում երկու բնություն« երկու

կամք« երկու ներգործություն վարդապետությունը« ջատագովելով Մի բնության վերաբերյալ Հայ Եկեղեցու մեկնությունը:

Մինչ ժողովական որոշման Կ. Պոլիս հասնելը վախճանվում է Մանուել կայսրը /1180 թ./ եւ նրա հաջորդները որեւէ հետաքրքրություն ցույց չեն տալիս Հայ Եկեղեցու հետ միության վերաբերյալ:

12. Հայ-Լատին Հարաբերություններ



Խաչակիրների արշավանքների հետեւանքով Արեւելքում ստեղծվել էին մի շարք լատին իշխանություններ« հիմնվել լատին եկեղեցական նվիրապետական Աթոռներ:

Հռոմի Աթոռի լիազոր պատվիրակ Ալպերիք /Աղբրիկ/ եպիսկոպոսը գումարում է Անտիոքի 1141 թվականի եւ Երուսաղեմի 1142 թվականի ժողովները« քննելու համար Անտիոքի եւ Երուսաղեմի լատին պատրիարքների կենտրոնախույզ ձգտումները: Ժողովներին հրավիրվում է նաեւ Հայոց Գրիգոր Գ կաթողիկոսը: Երուսաղեմի ժողովում խոսվում է նաեւ Հայ եւ Լատին եկեղեցիների դավանաբանական եւ ծիսական տարբերությունների մասին:

Հռոմ վերադառնալով Ալպերիքը Իննովկենտիոս Բ պապի /1130-1143/ առջեւ մեծապես գովում է Հայոց կաթողիկոսի եւ նրա եղբայր Ներսես Շնորհալու ողջախոհությունը:

Ինովկենտիոս պապը մի նամակ է գրում Հայոց կաթողիկոսին եւ երկու եկեղեցիների կատարյալ միության համար առաջարկում Ս. բաժակի մեջ ջուր խառնել եւ Քրիստոսի ծնունդը տոնել դեկտեմբերի 25-ին: Պապը Հայոց կաթողիկոսին է ուղարկում նաեւ հայրապետական քող եւ գավազան: Այդ ժամանակներից Հայոց Եկեղեցում մուտք է գործում Լատինական գավազանը՝ կորագլուխ ծայրով« որը աստիճանաբար գործածական է դառնում եպիսկոպոսների համար« իսկ օձագլուխ գավազանը« որ գործածում էին մինչ այդ եւ որ արեւելյան՝ հունական-կապադովկիական ծագում ուներ« սահմանափակվում է վարդապետների համար:

Թե ինչ զարգացում են ունեցել այս դեպքերը« մեզ հայտնի չէ: Հիշվում է միայն« որ մի քանի տարի անց« 1145 թվականին Գրիգոր Գ Պահլավունին մի պատգամավորություն է ուղարկում Եվգենիոս Գ պապի /1145-1153/ մոտ քաղաքական օգնություն խնդրելու: 0գնության փոխարեն պապն առաջարկում է Ս. բաժակի մեջ ջուր խառնել

եւ Քրիստոսի Ծննդյան տոնը տոնել դեկտեմբերի 25-ին:

Քաղաքական օգնություն ստանալու ակնկալությամբ Հռոմին է դիմում նաեւ Գրիգոր Դ կաթողիկոսը: Ղուկիոս Գ պապը /1181-1185/ 1184 թվականին նամակով խոստանում է օգնություն« միաժամանակ առաջարկելով հայերին կատարել մի շարք փոփոխություններ« հիմնականում ծիսական բնույթի« ինչպես օրինակ Ս. բաժակի մեջ ջուր խառնել« Քրիստոսի Ծննդյան տոնը տոնել դեկտեմբերի 25-ին« Ս. Մյուռոնը օրհնել ամեն տարի Ավագ Հինգշաբթի օրը« եպիսկոպոսական ձեռնադրություն կատարել միայն կիրակի օրերին եւ այլն:

Շուտով սկսվում է Խաչակիրների Գ արշավանքը: 1189 թվականին Հռոմի Կղեմես Գ պապը /1187-1191/ Հայոց կաթողիկոսից եւ Կիլիկիայի Լեւոն իշխանից օգնություն է խնդրում: Հայերը« իրապես« մեծ օգնություն են ցույց տալիս Խաչակիրներին:

Լեւոն իշխանը թեեւ 1195 թվականին Գերմանիայի Հենրիկոս Զ կայսեր կողմից ճանաչվել էր թագավոր եւ 1196 թվականին թագ ստացել բյուզանդական Ալեքսիոս Գ Անգեղոսի կողմից« սակայն թագադրությունը դեռեւս հետաձգվում էր: Լեւոնը ցանկանում էր թագադրվել Արեւմուտքի կողմից« որպեսզի վայելեր Արեւմտյան հովանավորությունը« իսկ ըստ ժամանակի իշխող օրենքների« արեւմտյան բոլոր քաղաքական տվչությունները նվիրագործվում էին Պապի հաստատումով եւ օրհնությամբ: Վերջապես Կիլիկիա է հասնում Պապի նվիրակ Կոնրադոս կարդինալը` Լեւոնին թագադրելու համար: Սակայն Պապը չէր կարող թագադրել եւ օրհնել մեկին« որ իր հետ դավանապես միացած չլիներ: Այդ իսկ պատճառով կարդինալը առաջ է քաշում հայ եւ լատին եկեղեցիների միության խնդիրը« առաջարկելով հայերին ընդունել.

- Տերունի եւ սրբոց տոները կատարել հաստատուն ամսաթվերով« մինչ հայոց մոտ որդեգրված էր շաբաթվա օրերի վրա հիմնված յոթնական սիստեմը:
- Ժամերգությունները կատարել Եկեղեցում: Հայերը սովորաբար ժամերգությունները կատարում էին գավթում« եկեղեցում կատարելով միայն Ս. Պատարագը:
- Ծննդյան եւ Հարության ճրագալույցներին օգտագործել միայն ձուկ եւ ձեթ եւ ոչ թե կաթնեղեն ու հավկիթ:

Լեւոն իշխանի գումարած ժողովը մերժում է Հռոմի առաջարկները: Հայտնի չէ թե ինչ պայմաններով« ի վերջո համաձայնություն է գոյանում Հռոմի պատվիրակի եւ Կիլիկյան պետության հաջողությունների ջատագով 12 եպիսկոպոսների միջեւ եւ ի վերջո 1198 թվականի հունվարի 6-ին տեղի է ունենում Լեւոնի թագադրությունը կարդինալի կողմից« իսկ օծումը` Հայոց կաթողիկոսի կողմից« սակայն Լատին Եկեղեցու կանոնով« որ այդ նպատակի համար թարգմանել էր Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին /+1198/:

Հնում Անտիոքի պատրիարքության իշխանությունը տարածվում էր 12 նահան-

գների վրա« որոնցից մեկն էլ Կիլիկիան էր: Անտիոքի նորահաստատ Լատին պատրիարքությունը երազելով վերահաստատել այդ սահմանները« մի քանի անգամ փորձ է արել իր իշխանությանը ենթարկելու նաեւ Կիլիկիայում հաստատված Հայոց կաթողիկոսությունը: Առաջին նման դեպքը տեղի է ունենում ԺԳ դարի սկզբին: Կիլիկիայի Լեւոն Բ թագավորը /1187/1198-1219/ դիմում է Պապին« որ Անտիոքի Լատին պատրիարքը չխառնվի Հայ Եկեղեցու եւ Հայ պետության գործերին: 1202 թվականին Իննովկենտիոս Գ պապը /1198-1216/ հաստատում է Լեւոնի պահանջը:

ԺԳ դարի Ա կեսին սրվում են Անտիոքի Լատին պատրիարքի եւ Կիլիկիայի Հայոց Եկեղեցու հակամարտությունները: Լատին պատրիարքը դժգոհելով« որ Հայոց կաթողիկոսը իրեն չի ենթարկվում« 1238 թվականին գանգատվում է Գրիգոր Թ պապին: Պապն անիրավ է գտնում իր պատրիարքի պահանջը եւ հայտարարում« որ Անտիոքի պատրիարքի իշխանությունը չի կարող Հայոց կաթողիկոսության վրա տարածվել:

Լեւոն Գ թագավորի /1270-1289/ ժամանակ կրկին անգամ Անտիոքի Լատին պատրիարքը հավակնում է իշխել նաեւ Կիլիկիայի վրա եւ այս նպատակով հալածանք է սկսում հայերի նկատմամբ: Լեւոն Գ-ը մի նամակ է գրում պատրիարքին« խնդրելով վերջ տալ հալածանքներին: Եվ երբ իր նամակը ազդեցություն չի ունենում« Լեւոնը բռնում է պատրիարքին եւ աքսորում« որով եւ հալածանքը դադարում է:

1244 թվականին Հռոմի Իննովկենտիոս Դ պապը /1243-1254/ Հայոց Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսին /1221-1267/ մի նամակով առաջարկում է հիվանդների օծումը կատարել յուղով` Լատին եկեղեցու սովորության համաձայն:

1243 թվականին Կիլիկիայի հոգեւորականների մասնակցությամբ գումարվել է Սսի Բ ժողովը« որ 24 բարեկարգական կանոններ է հաստատել« հիմնականում հավատացյալների վարք ու բարքի վերաբերյալ: Այդ կանոնները ժամանակի քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով դեռ չէին ուղարկվել Արեւելյան վարդապետներին ի հաստատումն: Ի Վերջո 1246 թվականին մի շրջաբերականով կաթողիկոսը Վարդան վարդապետ Արեւելցու ձեռքով դրանք ուղարկում է Հայաստան« որոնց վրա ավելացվում է նաեւ« իբրեւ իր ցանկությունը« կատարել հիվանդների օծման կարգը:

Իննովկենտիոս Դ պապը« սակայն« այդքանով չգոհացավ: Նա 1248 թվականին Կիլիկիա ուղարկեց Տիմանջ եպիսկոպոսին« բացահայտելու համար այն քաղաքական շահերը« որ կարող էին ստանալ հայերը երկու եկեղեցիների միությունից:

Հեթում թագավորը պապի նամակը ուղարկում է Հռոմկլա« Կոստանդին կաթողիկոսին« խնդրելով պատասխանել: Հայոց կաթողիկոսը« որքան էլ որ նախկինում հարգանք էր տածել Հռոմի Աթոռի նկատմամբ« չէր կարող ընդունել այն պայմաննե-

րը« որ առաջարկում էր պապը: Ուստի նա 15 հատվածից բաղկացած մի գրություն ուղարկեց Հեթում թագավորին՝ հերքելով Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցու վարդապետությունը եւ հորդորելով թագավորին չխաբվել նրանց խոսքերից:

Հռոմի Աթոռը ստանալով նման պատասխան« սահմանափակում է առաջարկները եւ 1250 թվականին գրած նամակում առաջարկում է միայն ընդունել Ֆիլիոքուեի վարդապետությունը« ըստ որի Ս. Հոգին բխել է ոչ միայն Հայր Աստծուց« այլ նաեւ Որդի Աստծուց: Ինչպես հայտնի է ճիշտ այս հարցի պատճառով էր տեղի ունեցել Հույն եւ Լատին եկեղեցիների բաժանումը /1054/:

Պատասխանելու համար այս առաջարկին Կոստանդին կաթողիկոսը 1251 թվականին գումարում է Սսի Գ ժողովը: Չկարողանալով վերջնական եզրակացության գալ« ժողովը դիմում է Արեւելյան վարդապետների կարծիքին: Խնդիրը նոր էր Հայ Եկեղեցու համար եւ բնական է« որ սկզբնական շրջանում զանազան կարծիքներ լինեին: Հենց Կոստանդին կաթողիկոսը գտնում էր« որ այդպես ընդունելուց «չկայ վնաս եւ ի գրոց է բանն. եւ իրաւ եմք ասացեալ« զի իմաստնոցն միտքն ողջ մնայ ի լսելն: Բայց տխմարացն ցաւէ« լաւ չասելն է« զի մի է պատճառն Հայր« միոյն ծննդեամբ եւ միոյն ելողութեամբ. եւ պատեհ է« որ մի լիցի պատճառ յատուկ« յստակ« մեկին եւ պարզ: Եւ Հոգի Որդոյ ասի« զի Որդւով բաշխեցաւ պարգեւ ի Հոգւոյն« որպէս հայրենի բարիքն» /ԳԹ 504/: Նման մի պատասխան է պատրաստել հավանաբար Սսի ժողովը« որը սակայն անհետեւանք մնաց Հռոմի Աթոռի երերուն վիճակի պատճառով:

1262 թվականին Արեւելք է գալիս եւ Աքքայիայում /Պտղոմայիս/ հաստատվում Ուրբանոս Դ պապի /1261-1264/ նվիրակ Գուլիելմոս եպիսկոպոսը: Նվիրակին պատվելու համար Հեթում թագավորը ուղարկում է իր Օշին եղբորը« իսկ Կոստանդին կաթողիկոսը՝ Մխիթար Սկեւռացի վարդապետին: Այս առթիվ մի վիճաբանություն է տեղի ունենում Հռոմի նվիրակի եւ Մխիթար Սկեւռացու միջեւ« հիմնականում Պապի՝ Եկեղեցու գլուխ լինելու հարցի շուրջ: Մխիթար Սկեւռացին աստվածաշնչական փաստերով ցույց է տալիս« որ Եկեղեցու Գլուխը ոչ թե Հռոմի պապն է« այլ Քրիստոս:

1292 թվականին Հայոց կաթողիկոսական Աթոռին է բազմում Անարզաբայի եպիսկոպոս Գրիգոր Է-ը /1293-1306/« ընդհանուր քրիստոնեական եկեղեցիների միության գաղափարով տարված մի անձնավորություն« որ այդ նպատակի համար պատրաստ էր զոհել Հայ Եկեղեցու որոշ ավանդություններ: Նույն ժամանակ թագավորում էր դարձյալ միարար մի թագավոր՝ Հեթում Բ-ը /1289-1301/« որ այնքան էր տարվել այդ գաղափարներով« որ 1293 թվականին ընդունել էր ֆրանչիսկյան կրոնավորի կարգ:

Գրիգոր Անավարզեցու առաջին գործն է լինում Հայոց հայսմավուրքը կարգավորել հույների եւ լատինների հայսմավուրքի նմանողությամբ եւ Հեթում թագավորի խնդրանքով« լատինների նման: Նա փորձեց փոփոխություններ մտցնել նաեւ մի շարք ծիսական հարցերում« հարցեր« որոնք միշտ պատճառ էին դարձել հունաց եւ լատին-

ների հետ եկեղեցական միության ձախողման: Այսպես նա պատվիրեց ճրագալույցնե-րի պահքը չլուծել« հիվանդների համար ձեթ օրհնել« Ս. Բաժակի մեջ ջուր խառնել եւ այլն: Միաժամանակ նա հույներից պահանջում էր« որ իբրեւ փոխհատուցում Անտիո-քի պատրիարքական Աթոռը ենթարկվի Հայոց կաթողիկոսությանը:

Անավարզեցու այս փոփոխությունները լուրջ ընդդիմություն առաջացրեցին Արեւելյան Հայաստանում« ուր Սյունյաց միտրոպոլիտի նախագահությամբ մի ժողով գումարվեց եւ մի նամակով զգուշացվեց կաթողիկոսը« որ Հայ Եկեղեցու ավանդու-թյունների մեջ փոփոխություններ չմտցնի:

1274 թվականին Լիոնում տեղի էր ունեցել Բյուզանդական Եկեղեցու միությու-նը Հռոմի Աթոռի հետ« մի բան որ առաջ էր բերել բյուզանդացիների դժկամությունը: Միքայել Պալեոլոգ կայսեր /1259-1282/ հաջորդող Անդրոնիկոս Բ-ը /1282-1328/ իր ժո-ղովրդի սիրտը շահելու համար խզում է այդ միությունը եւ ամեն կերպ քաջալերում Բյուզանդական Եկեղեցու դավանությունը« միաժամանակ հալածանք սկսելով բոլոր այն անձանց դեմ« ովքեր կողմնակից էին Հռոմի Աթոռի հետ միության: Այդ հալածան-քը տարածվում է նաեւ հայերի վրա: 1295/96 թվականներին հունաց արքայորդու կին հայազգի Մարիամին եւ նրա քրոջը Հույն Եկեղեցու պահանջով կրկին դրոշմում են« իբրեւ հերետիկոսությունից դարձողների:

Ինչպես այս երեւույթները« այնպես էլ Արեւելյան վարդապետների ժողովական գրությունը զգաստացնում են Գրիգոր Անավարզեցուն եւ նա« որ մինչ այդ ավելի հու-նական« քան լատինական կողմնորոշում ուներ« փոխում է իր ընթացքը եւ իր հայաց-քը սեւեռում դեպի Արեւմուտք« Կիլիկիայի թագավորության համար քաղաքական օգ-նություն ստանալու ակնկալությամբ: Նա պատրաստվում էր նոր փոփոխություններ մտցնել Հայ Եկեղեցու ծիսակարգում եւ այդ նպատակի համար առանձին շարական-ներ գրեց Քրիստոսի ծննդյան եւ Մկրտության տոների համար« ծրագրելով այդ տոնե-րը միմյանցից բաժանել:

Անդրադառնալով« սակայն« որ լատիններից էլ էական օգնություն չի կարելի ստանալ« նա ավելորդ է համարում այլեւս եկեղեցիների միության խնդրով զբաղվել եւ այդպիսով իր Եկեղեցու ծոցում ներքին խռովություններ ստեղծել: Շարունակում է միայն« Հեթում թագավորահոր եւ Լեւոն Դ թագավորի /1301-1307/ խնդրանքը կատա-րելու համար« իր մատուցած պատարագներին հաղորդության բաժակի մեջ գինուն ջուր խառնել« այսպիսով օրինակ հանդիսանալով նաեւ ուրիշների համար: Հեթումն ու Լեւոնը« սակայն« Արեւմուտքից օգնություն ստանալու հույսով կաթողիկոսից պա-հանջում են կատարյալ միություն ստեղծել երկու եկեղեցիների միջեւ: Կաթողիկոսը մերժում է« որի պատճառով էլ գահընկեց արվում եւ աքսորվում« ուր եւ մահանում է 1306 թվականին« մահվան անկողնում հայտարարելով. «Հայ եմ եւ հայ մեռանիմ»:

Անավարզեցու մահից հետո Լեւոն թագավորը մի ժողով է գումարում Սսում

1307 թվականին« որ ծանոթ է Սսի Զ ժողով անունով« որին մասնակցում են Կիլիկիա-յի 43 եպիսկոպոսներ եւ իշխաններ: Լեւոնը ժողովին է ներկայցնում մի նամակ« իբրեւ թե գրված Գրիգոր Անավարզեցու կողմից« որ բովանդակում էր հետեւյալ դավանաբա-նական եւ ծիսական փոփոխությունները.

- Ս. բաժակի մեջ ջուր խառնել:
- Ընդունել 7 Տիեզերական ժողովները:
- Քրիստոսի մեջ խոստովանել երկու բնություն« երկու կամք եւ երկու ներգործու-թյուն:
- Տերունական տոները տոնել հույների եւ լատինների նման« Ծնունդը՝ դեկտեմ-բերի 25-ին« Ավետումը՝ մարտի 25-ին« Տեառնընդառաջը՝ փետրվարի 2-ին եւ այլն:
- Ծննդյան եւ Հարության ճրագալույցները լուծել միայն ձեթով ու ձկով:
- Ս. Աստվածը երգել Քրիստոս բառի հավելումով. «Քրիստոս որ խաչեցար»:

Ժողովականները« բացի 5 եպիսկոպոսներից ընդունեցին այս փոփոխություն-ները: Նույն ժողովում կաթողիկոս ընտրվեց միության ջատագովներից Կոստանդին Գ Կեսարացին /1307-1322/: Սսի ժողովի որոշումները լուրջ ընդդիմություն են առաջ բե-րում ինչպես Արեւելյան Հայաստանում« այնպես էլ Կիլիկիայում: Լեւոն թագավորին հաջորդած Օշինը /1307-1320/ ամեն ջանք գործադրեց այդ որոշումները ի գործ դնելու համար« կանգ չառնելով նույնիսկ բանտարկության եւ աքսորի վրա:

Ստեղծված խռովություններին վերջ տալու համար Օշինը 1316 թվականին գու-մարում է Ադանայի ժողովը« 13 եպիսկոպոսների« 7 վարդապետների եւ 10 իշխաննե-րի մասնակցությամբ: Այս ժողովում քննարկվում են Սսի ժողովի որոշումների դեմ եղած առարկությունները« մերժվում այդ առարկությունները իբրեւ թե ճշմարտու-թյան հակառակ եւ կրկին անգամ հաստատվում Սսի ժողովի որոշումները: Նման ժո-ղովները սակայն« չէին կարող Հայ Եկեղեցու ավանդությունները խաթարել եւ բնա-կան է« ժամանակավրեպ նշանակություն ունեցան:

Օշին թագավորը« Ադանայի ժողովից հետո« 1318 թվականին դիմում է Հովհան-նես ԻԲ պապին /1316-1334/ եւ Ֆրանսիայի Փիլիպպոս թագավորին« խնդրելով Եկեղե-ցիների միությունից հետո խոստացված օգնությունը: Պապը« սակայն« որոշ դրամա-կան օգնություն միայն ուղարկելով« առաջարկում է այս անգամ« որ Հայ Եկեղեցում էլ հիվանդների օծման յուղը եպիսկոպոսը օրհնի եւ որ Դրոշմի խորհուրդը միայն եպիս-կոպոսը կատարի:

Խոստացված օգնության սպասումով 1320 թվականին Օշին թագավորը կնքում է իր մահկանացուն« թագավորությունը թողնելով իր մանկահասակ որդուն՝ Լեւոն Ե-ին /1320-1342/: Վերջինս« շարունակելով իր նախորդների լատինասեր քաղաքակա-նությունը« շահում է միայն մահմեդական« հատկապես Եգիպտոսի մամելյուկների

թշնամությունը« որոնց հաճախակի հարձակումները սկիզբ դրեցին Կիլիկիայի Հայ-կական թագավորության կործանմանը /1375 թ./:

Արեւմուտքը« հայ ժողովրդի եւ Կիլիկիայի թագավորության այս ճգնաժամային պահին« փոխանակ կատարելու իր խոստումները« նորից կրոնական հարցեր էր մեջ բերում եւ զանազան նոր առաջարկներ անում: Զայրացած արեւմուտքցիների այս ըն-թացքից« Մեսրոպ Ա Արտազեցի կաթողիկոսը /1359-1372/« 1361 թվականին գումա-րում է Սսի Ը ժողովը եւ հրամայում Հայ Եկեղեցու ծիսակարգից վերացնել ամեն մի նորամուծություն« որ արդյունք է եղել Կիլիկյան թագավորների լատինամոլ քաղաքա-կանության:

13. Հայաստանյայց Եկեղեցին Խորհրդային Տարիներին (1920-1990)

Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի պատմությունն անբաժան են, եւ մեր պատմության մեջ չկա քիչ թե շատ նշանակալի որեւէ պահ, երբ Եկեղեցին կանգնած չլինի պետության, ժողովրդի՝ իր հավատացյալների կողքին: Դարեր շարունակ հայ ժողովուրդը, զրկված լինելով քաղաքական իշխանությունից, ազգապահպանման ու գոյատեւման հույսը կապել էր մայր Եկեղեցու հետ՝ այդպիսով հավատարիմ մնալով իր արմատներին ու Քրիստոսի Սուրբ Ավետարանին: Այդ ճշմարտությունը մեկ անգամ եւս փաստվեց Առաջին աշխարհամարտի տարիներին ու հայ ժողովրդի՝ հանուն անկախության մղված հերոսամարտների ժամանակ: Հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը Սարդարապատում ապացուցեցին իրենց միասնության անկոտրուն ուժն ու ազատության սերը՝ անկախության համար կենաց ու մահու կռիվ տալով եւ բացառիկ հերոսությամբ 1918թ. ստեղծելով Անկախ Հանրապետություն:

Հայ Եկեղեցին ողջունեց ու օրհնեց Հայաստանի Հանրապետությունը: Նոր էջ բացվեց հայության համար՝ լի հույսերով եւ սպասելիքներով, որը, սակայն կարճ տեւեց եւ երկամյա ձեռքբերումները խեղդամահ արվեցին 1920թ.՝ Անկախ Հայաստանի խորհրդայնացմամբ:

Խորհրդային կարգերի հաստատումով մեր Եկեղեցին թեւակոխեց պատմության մի նոր շրջափուլ՝ նոր, անհամեմատ բարդ պայմաններով ու հիմնահարցերով: Եկեղեցին՝ ս. Էջմիածնի գլխավորությամբ, ինչպես միշտ, իր բազմաչարչար հոտի հետ էր՝ կիսելով նրա դառնություններն ու դժբախտությունները: Այդ տարիները Հայ Եկեղեցու համար ճգնաժամային էին, եկեղեցին ապրում էր իր պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը:

Հայ բոլշեւիկները վարում էին ծայրահեղ հակաեկեղեցական քաղաքականություն,

ամեն կերպ հալածում էին Եկեղեցին` նրա մեջ տեսնելով այն հզոր ու հեղինակավոր կառույցը, որին անվարան հետեւում էր ժողովուրդը: Բոլշեւիկներն առաջնահերթ էին համարում ժողովրդին կոմունիստական դաստիարակություն ապահովելը, նրան աթեիստական գաղափարախոսությամբ կրթելը: Կրոնի հանդեպ իշխող գաղափարախոսության ժխտական վերաբերմունքը վերածվեց բացահայտ անհանդուրժողականության: Նպատակին հասնելու համար միջոցների առաջ խտրություն չէր դրվում, կիրառվում էր թույլատրելի ու անթույլատրելի բոլոր հնարները: Եկեղեցիներ փակելը, հոգեւորականների հալածանքը, աքսորը, ֆիզիկական հաշվեհարդարները դարձան պետական գործելակերպի ձեւեր:



Չնայած Հայաստանի խորհրդայնացման հենց առաջին օրերից էլ հակաեկեղեցական ու հակակրոնական քաղաքականություն էր տարվում, սակայն հալածանքն ու ճնշումը Եկեղեցու դեմ հատկապես ուժգնացավ 1920-ականների վերջին ու 1930-ականների սկզբին: Համատարած կոլեկտիվացման այդ տարիներին իշխողները կամայականության, հալածանքի ու բռնության ամենատարբեր միջոցներով ձգտում էին ժողովրդին հեռու պահել Եկեղեցուց, նրա հոգեպարար քարոզներից ու աստվածային պատգամներից, փոխարենը մարդկանց մեջ սերմանելով

անաստվածություն, մատնության, դավաճանության, զրպարտանքի ու կեղծիքի ոգին:

Եկեղեցին հայտարարվում է հակահեղափոխական եւ հակախորհրդային տարր, հայրենիքի թշնամի եւ ենթարկվում ահաբեկչության ու բռնության: Բոլշեւիկները փորձում էին ամեն կերպ ճնշել եւ ստորացնել Եկեղեցուն, քայլ առ քայլ խլելով նրա դարավոր արտոնությունները:

1920թ. Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ դպրոցը անջատվում է Եկեղեցուց: 1922թ. Էջմիածնի վանքի բոլոր արժեքները պետականացվում եւ խլվում են Եկեղեցուց: Սուրբ Էջմիածնի համար մեծ հարված էր 1922թ. մայիս 10-ի որոշումը՝ Մատենադարանը Երեւան տեղափոխելու վերաբերյալ, որն արդեն գիտահետազոտական կենտրոնի էր վերածվել: Նույն թվականին Հայաստանի խորհրդային իշխանությունը որոշում է Մոսկվայից Երեւան փոխադրել Հայ Եկեղեցու ունեցվածքը, որը Մայր Տաճարի հնություններն ու սրբություններն էին: Դրանք ձեռագրերի հետ 1915թ. փետրվարին փոխադրվել էին Մոսկվա՝ Համաշխարհային առաջին պատերազմից փրկելու նպատակով: 1915թ. Մոսկվա տարված 150 արկղների փոխարեն 1922թ. 120 արկղ է Երեւան ուղարկվում: Պակասում էր 30 արկղ՝ այն էլ ամենաթանկարժեք իրերը:

1923թ. հունվարին Հայ Եկեղեցուց խլվում են եկեղեցապատկան ու վանքապատկան հողերի մեծ մասը, ազգայնացվում է Էջմիածնի վանքի թանգարանը: 1927թ. սպանվում են Խոր Վիրապի վանահայր Տ. Կարապետ վրդ. Աստվածատրյանը եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ Տ. Գյուտ եպս. Տեր-Ղազարյանը:



Համատարած փակվում էին վանքերը, եկեղեցիներն ու ծխական դպրոցները, ձերբակալվում էին հոգեւորականները: 1930թ. մահանում է Գեւորգ Ե կաթողիկոսը եւ Հայ Եկեղեցին, զրկվելով իր հոգեւոր պետից, ավելի ծանր կացության առաջ է կանգնում: Կաթողիկոսական տեղապահ է ընտրվում Տ. Խորեն արքեպս. Մուրադբեկյանը, ով անցանկալի էր Խորհրդային կառավարության համար: Բոլշեւիկներն ամեն կերպ փորձում էին ձախողել կաթողիկոսական ընտրությունները, մինչեւ իրենց հարմար մի թեկանծու պատրաստեին:

30-ական թվականների սկզբներին Հայաստանում սկսվում է եկեղեցիների ավերման գործընթացը: Այդ թվականներին Հայաստանում մոտ 800 եկեղեցիներ փակվել էին ու

վերածվել կոլտնտեսության պահեստների, ակումբների ու զարաժների:

1930թ. պայթեցվում է Նորքի ս. Սիմեոն Ծերունի եկեղեցին, 1931-ին՝ ս. Պողոս-Պետրոս եկեղեցին:

Խորհրդային կառավարության կողմից ամեն կերպ խրախուսվում էին արհեստական խմբավորումների ստեղծումը, որոնք իրենց տարրալուծիչ, հակակրոնական ու աթեիստական գործունեությամբ ամեն կերպ փորձում էին արատավորել Եկեղեցին ու եկեղեցականներին: Անգամ, հայկական եկեղեցիները օրինական տերերից խլելով, տրամադրվում էին այդ կազմակերպություններին: Այդպես, 1931թ., Երեւանի Կաթողեկե եկեղեցին տրամադրվել էր «Ազատ եկեղեցականներին», իսկ ս. Գրիգոր Լուսավորիչը՝ «Մարտնչող անաստվածների միությանը»:

1932թ., մի քանի ձախողումից հետո, մեծ դժվարությամբ թույլատրվում է Ազգային-եկեղեցական ժողով գումարել եւ կաթողիկոս է ընտրվում Տ.Տ. Խորեն Ա Մուրադբեկյանը (1932-1938): Այն կաթողիկոսական առաջին ընտրությունն էր, որն անց էր կացվում խորհրդային նոր հասարակարգում: Նորընտիր Կաթողիկոսն ամեն կերպ փորձում է վերականգնել Հայ Եկեղեցու հեղինակությունն ու իրավունքները: Նա բողոքներ է ուղղում խորհրդային կառավարությանը, որոնք անպատասխան են մնում: Իշխանությունների կողմից ամեն կերպ սահմանափակվում են Կաթողիկոսի իրավունքները, եւ եկեղեցու դեմ սկսվում են ավելի խիստ հալածանքներ:

Սեփական հակաեկեղեցական քաղաքականությունը թաքցնելու համար բոլշեւիկները լայնորեն անցակացնում էին հակաեկեղեցական քարոզչություն, որն արդարացնելու համար օգտագործում էին հայ պատմաբաններին:

Հայաստանում ստեղծված կացությունը մտահոգում էր սփյուռքահայությանը, եւ նրանք մամուլում բողոքներ էին ուղղում Խորհրդային իշխանություններին՝ կոչելով վերջ տալ Եկեղեցու հալածանքներին: Այս ամենին ի պատասխան, իշխանությունների բռնի կարգադրությամբ ու միջամտությամբ հայ հոգեւորականներն ստիպված էին լինում պատասխան ելույթներ ունենալ՝ «հերքելու» համար «տեղի չունեցած» հալածանքներն ու բռնությունները:

Խորհրդային կառավարությունը հրապարակում է մի շարք օրենքներ, որոնցով սահմանափակվում էին Եկեղեցու ու հոգեւորականության գործունեության հնարավորությունները: Հայ հոգեւորականությունը նորահայտ կառավարիչներից հետեւողականորեն պահանջում էր հաստատել Եկեղեցու օրինական իրավունքներն ու ազատությունները:

Մամուլն ու գրահրատարակչությունն ամեն կերպ ստվերում էին հայ բարձրաստիճան հոգեւորականներին ու զրպարտանքներ բարդում նրանց վրա: Աւռելի չափեր էին ընդունել հայ մտավորականության եւ հոգեւորականության հալածանքը, բանտարկությունը, աքսորն ու ոչնչացումը: Ստեղծված կացությունից ելնելով, եկեղեցականներն ստիպված հրաժարվում էին իրենց հոգեւոր կոչումից, իսկ որոշ դեպքերում մահվան սպառնալիքով նրանց հրաժարեցնում էին:

Բազում հոգեւորականների մեղադրում էին են այլեւայլ հնարավոր ու անհնար զրպարտանքներով, մեկուսացնում ու երկար տարիներով բանտարկում էին: Հիմնական մեղադրանքներից էին. դաշնակցության գաղտնի անդամ լինելը, հակախորհրդային քարոզչությունը, հօգուտ օտարերկրյա որեւէ պետության լրտեսությունը, «ազգայնամոլական», «տեռորիստական», «ժողովրդի թշնամի» եւ համանման այլ բնորոշումները: Շատերին են գնդակահարել ու շատ շատերի ճակատագիրն էլ անհայտ է: Բողոքներն ու արդարացումներն անպատասխան էին մնում:

Հայ հոգեւորականության՝ բռնությունների ենթարկված ներկայացուցիչների թիվը միայն Հայաստանում կազմել է շուրջ 200 մարդ: Գնդակահարվել են Էջմիածնի միաբան հայ բարձրաստիճան հոգեւորականներ՝ Բագրատ եպիսկոպոսը, Թադե եպիսկոպոսը, Իսահակ եպիսկոպոսը, Արտակ եպիսկոպոսը, Դանիել վարդապետը եւ շատ ուրիշներ, ովքեր անհիմն մեղադրանքներով ձերբակալվել էին: Խորեն Ա-ի բողոքներն ամենուր անպատասխան էին մնում, կամ էլ անվտանգության խորհուրդը խաբեությամբ գործը ձգձգում էր՝ մինչեւ հօգուտ կառավարության որոշում ընդունվեր:

Բռնությունների ու ահաբեկչությունների գագաթնակետն էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի եղերական մահը: 1938թ. ապրիլ 5-ի լույս 6-ի գիշերը, նրան, Հին Վեհարանի իր իսկ ննջասենյակում, խորհրդային պետական անվտանգության գործակալները խեղդամահ են անում: Խաղաղ պայմաններում Կաթողիկոսի սպանությունն աննախադեպ մի երեւույթ էր Հայ Եկեղեցու պատմության մեջ: Նվիրյալ Հայոց Հայրապետը, դեմ գնալով եկեղեցու գանձերը խորհրդային բիրտ կառավարությանը հանձնելու որոշումներին՝ կյանքով վճարեց դրանց դիմաց: Չնայած կառավարության ձեռնարկած խստիվ միջոցներին, վեց հավատացյալ կանայք խեղդամահ Կաթողիկոսի դին տարան եւ գաղտնի թաղեցին ս. Գայանե եկեղեցու գերեզմանատանը:

Այս ամենը դեռ վերջը չէր: Կաթողիկոսի սպանությունը, որը կառավարության կողմից ներկայացվում էր որպես սրտի կաթված, օրհասական դարձրեց Եկեղեցու ապագան: Մայր Աթոռը հիմնովին թալանվեց, եւ նույնիսկ, հայ ջանասեր կոմունիստների կողմից Ս. Էջմիածինն ընդհանրապես փակելու եւ այն թանգարանի վերածելու

միջոցներ էին ձեռք առնվում, այդպիսով նպատակ ունենալով վերջ տալ Հայ Եկեղեցուն՝ որպես հոգեւոր հաստատության:

1938թ. օգոստոսի 4-ին, հայ կոմունիստների Ստալինին ուղղված նամակում ասվում է. «1937 թվին Էջմիածնում աշխատում էին 70-75 հոգեւորականներ, որոնցից շատերը ձերբակալվել են մեր կողմից ակտիվ հակահեղափոխական աշխատանքի համար: Ներկայումս Էջմիածնում մնացել են 7 մարդ՝ եկեղեցու սպասավորներ, որոնք դաշնակ են՝ հակախորհրդային տրամադրություններով: Հայաստանի Կոմ(բ)Կուսի Կենտկոմը, քննարկելով Էջմիածնի վանքի հարցը, որոշել է... փակել Էջմիածնի վանքը, այն վերածելով թանգարանի, նոր Կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել եւ լիկվիդացնել հայ հոգեւորականության կենտրոնը... Խնդրում ենք ՀամԿ(բ)Կ-ին հաստատել»:

Կոնունիստերի գլխավոր նպատակն էր վերջնականորեն ժողովրդին զրկել իր ազգային ինքնագիտակցությունից՝ ներքաշելով մարդկային միանգամայն նոր՝ խորհրդային կազմավորման մեջ: Դա վտանգավոր էր հայ ժողովրդի համար, քանի որ սպառնում էր ժողովրդի եւ Եկեղեցու կապի խզմանը, որը ազգը պահպանում եւ պաշտպանում էր ուծացումից ու ոչնչացումից:

Հայ կոմունիստների այդքան ցանկալի ձեռնարկը, սակայն, որքան էլ ընդունելի էր Խորհրդային վերին իշխանության կողմից, այնքան էլ վտանգավոր էր, քանզի դրանով ի ցույց պիտի դրվեր կոմունիստական կարգերի բռնատիրական ու աթեիստական իսկական դեմքը:

Խառնակ կացությունից օգտվելով, կոմունիստներին, այնուամենայնիվ, հաջողվում է ձգձգել կաթողիկոսական ընտրությունները, որին կողմնակիորեն նպաստում է նաեւ 1941թ. Համաշխարհային պատերազմը:

Հայ Եկեղեցու համար շրջադարձային էր նաեւ Համաշխարհային երկրորդ պատերազմն ընդդեմ Խորհրդային Միության: Ի դեմս Խորհրդային Հայաստանի, համայն հայությունը տեսնում էր իր գոյության խարիսխը եւ յուրաքանչյուր կործանարար հարված Խորհրդային Միությանը՝ խորտակիչ պիտի լիներ նաեւ նրա կազմում գտնվող Հայաստանի համար:

Այս գիտակցությամբ է, որ աշխարհասփյուռ հայությունն անմիջապես արձագանքեց Հայրենիքին օգնելու Սուրբ Էջմիածնի կոչին: Սփյուռքի դրամական օժանդակությամբ ստեղծվեցին տանկային շարասյուներ եւ ուղարկվեցին ռազմաճակատ: Պատերազմի հաղթական ավարտի օրերին Հայ եկեղեցու ու ժողովրդի այս նախաձեռնությունն աննկատ չմնաց խորհրդային կառավարության կողմից եւ փոխվեց ոչ միայն Հայաստանի կառավարության, այլեւ Խորհրդային Միության վերաբերմունքը Մայր Աթոռ ս. Էջմիածնի հանդեպ:

1945թ. տեղապահ Տ. Գեւորգ արքեպս. Չորեքչյանը հանդիպեց Իոսիֆ Ստալինին: Հանդիպումն ունեցավ պատմական նշանակություն: Ի գնահատություն Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներին Հայ Եկեղեցու եւ ժողովրդի բերած աջակցության, Ստալինը թույլատրեց Ազգային-եկեղեցական ժողով գումարել եւ անցկացնել կաթողիկոսական ընտրություններ, վերաբացել Մայր Աթոռ ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը, վերադարձնել գրադարանը, տպագրել «Էջմիածին» ամսագիրը, Էջմիածնին վերադարձնել ս. Հռիփսիմե, ս. Գայանե, ս. Գեղարդ եւ ս. Խոր Վիրապ վանքերը, ինչպես նաեւ արտասահմանի հայ հոգեւորականներին արտոնվեց Էջմիածին գալ՝ եպիսկոպոսական ձեռնադրության համար:

Յոթնամյա ընդմիջումից հետո, 1945թ. Հայ Եկեղեցին կրկին հնարավորություն ունեցավ ընտրել իր հայրապետին եւ վերսկսել բռնի ընդհատված իր գործունեությունը:

1945թ. Ազային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Տ. Գեւորգ արքեպս. Չորեքչյանին: Հետպատերազմյան առաջին տարիներին, անսալով Հայոց Հայրապետի կոչին, հայրենադարձվեցին հազարավոր հայորդիներ, իրենց հետ նոր շունչ բերելով Խորհրդային Հայաստան: Գեւորգ Զ կաթողիկոսի ջանքերով, չնայած բոլոր ճնշումներին ու արգելքներին, քիչ թե շատ աշխուժություն տիրեց եկեղեցիներում ու ժողովրդի մեջ, որը սակայն, նոր հալածանքների ու բռնությունների տեղիք տվեց:

Խորհրդային կառավարությունը, սակայն, ամբողջությամբ չկատարեց Հայ Եկեղեցուն տրված խոստումները, որի վկայությունը բռնությունների ու աքսորների նոր հոսքն էր: 1949թ. Երեւանի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիմնահատակ քանդվեց: Նույն թվականին տեղի ունեցան մասսայական աքսորներ, եւ հազարավոր հայ ընտանիքներ, նրանց թվում նաեւ հայրենադարձներ, բռնի ուղարկվեցին Սիբիր եւ Ալթայի երկրամաս:

Էջմիածնի եկեղեցիներն ու վանքերը այդպես էլ չվերադարձվեցին: Շողակաթ եկեղեցին գտնվում էր զինվորական ստորաբաժանումի տրամադրության տակ: Իսկ 1951թ. երեք տարով զինվորական զորամասին է հանձնում «Խրիմյանի թանգարան» շենքը:

1953թ. ամբողջ Խորհրդային Հայաստանում գործում էր 18 եկեղեցի: Ժողովուրդը բազում խնդրագրեր էր ուղարկում Գեւորգ Կաթողիկոսին, սակայն վերջինս իր գործունեությամբ սահմանափակված եւ կաշկանդված լինելով խորհրդային իշխանությունների կողմից՝ անկարող էր բավարարել հավատացյալների հոգեւոր պահանջները: Հայոց Հոգեւոր Պետի համար խիստ դժվար էր ստալինյան բռնապետության այդ տարիներին աչքի ընկնել որեւէ գործունեությամբ:

Կառավարությունը նրան գործելու որեւէ հնարավորություն չէր տալիս եւ ամեն կերպ աշխատում էր ձախողել յուրաքանչյուր ձեռնարկ:

1953թ. մահացավ Ստալինը, սակայն կոմունիստների հակակրոնական քաղաքականությունը շատ քիչ փոխվեց:

1954թ. մահացավ Գեւորգ Զ Կաթողիկոսը, եւ 1955թ. Ազգային-եկեղեցական ժողովն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռումինիայի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Պալճյանին: Վազգեն Ա-ի գահակալության տարիներին, թեեւ Խորհրդային իշխանությունների կողմից շարունակվում էր ներքին լարվածությունը Հայ Եկեղեցու դեմ, այնուամենայնիվ նախկին կրքերը փոքր ինչ հանդարտվել էին եւ չնայած որոշ արգելքների, Կաթողիկոսը կարողանում է քիչ թե շատ ազատ գործունեություն ծավալել:

Ընտրությունից հետո Վազգեն Ա-ն անմիջապես դիմում է Խորհրդային կառավարությանը եպիսկոպոսական ձեռնադրություն եւ Մյուռոնօրհնություն կատարելու արտոնության համար: Վեհափառն ստանում է համաձայնություն: Ձեռնադրվում են ինը եպիսկոպոս: Հայ Եկեղեցու թեմերի վարչակարգը վերականգնում է իր բնականոն գործունեությունը:

Մեծ իրադարձություն էր նաեւ հոկտեմբեր 16-ի Մյուռոնօրհնությունը: Վերջին անգամ Մայր Աթոռում Ս. Մյուռոնի օրհնություն էր կատարվել 1926թ.՝ Գեւորգ Ե Կաթողիկոսի կողմից, որից հետո, ցավոք, Խորհրդային կառավարության կողմից խստիվ արգելվել էր այն եւ Խորեն Ա եւ Գեւորգ Զ Կաթողիկոսները, քաղաքական անթույլատրելի կացության պատճառով, հնարավորություն չէին ունեցել մյուռոն օրհնելու:

Վազգեն Ա-ի գահակալության հետագա տարիներին եկեղեցական կյանքը զգալիորեն աշխուժանում է ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլեւ Սփյուռքում: Վերսկսվում են Հայ եւ Քույր եկեղեցիների հարաբերությունները, Հայ Եկեղեցին ընդգրկվում է ԵՀԽ-ի կազմում, մասնակցում է Վատիկանի Բ ժողովին: Հայոց Հայրապետը այցելություններ է կատարում եւ եղբայրական հանդիպումներ ունենում Քույր Եկեղեցիների պետերի հետ:

Վազգեն կաթողիկոսի երկարատեւ գահակալությունը նշանավորվեց նաեւ շինարարական աննախընթաց ձեռնարկներով: Հիմնական վերանորոգության ենթարկվեց Մայր Աթոռը՝ իր շրջակա տարածքներով: Խորհրդային կառավարության կողմից քանի որ արտոնված չէր նոր եկեղեցիներ կառուցել, Հայրապետի օրհնությամբ սկսվում են վերակառուցվել եւ սրբագործվել ավերված, փակված ու խոնարհված եկեղեցիները:

Վազգեն Ա-ն սկսում է Հայրապետական այցելություններ կատարել Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներ ու Խորհրդային միության ու սփյուռքի հայոց թեմեր: Կանոնավոր կերպով շարունակվում էր քահանայական, եպիսկոպոսական ձեռնադրություններն ու Մյուռոնօրհնությունը: Հոգեւորականների խիստ պահանջ էր զգացվում Խորհրդային Միության տարածքում գտնվող բոլոր հայկական թեմերում, քանի որ արտասահմանի հայ հոգեւորականների մուտքը Խորհրդային Հայաստան արգելված էր: Չնայած, որ 1945թ. Գեւորգ Զ Չորեքչյանի ջանքերով վերաբացվել էր Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը, այնուամենայնիվ հնարավոր չէր սակավաթիվ շրջանավարտներով, լավագույն դեպքում երկու կամ երեք սարկավագ, բավարարել հավատացյալների հոգեւոր պահանջները: Ճեմարանը գտնվում էր կոմունիստական իշխանության խիստ ուշադրության ներքո, իսկ ուսանողների թիվը սահմանափակ էր՝ մինչեւ 40 մարդ:

Խորհրդային այդ տարիներին ծանր էր Հայ Եկեղեցու վիճակը: Նրա զահակալների ու սպասավորների համար խիստ դժվար էր լայն թափով գործունեություն ծավալել եւ ըստ ամենայնի բավարարել ժողովրդի հոգեւոր պահանջները: Քանիցս Եկեղեցին ու Հայոց Հայրապետը վարկաբեկվում էին Խորհրդային իշխանությունների եւ զրպարտվում սփյուռքահայության կողմից, սակայն եկեղեցական անդաստանի անխոնջ մշակները, անտեսելով այդ ամենը եւ վեր մնալով մարդկային տկարություններից, շարունակում էին խոնարհաբար ծառայել Եկեղեցուն ու Հայրենիքին:

Հայ Եկեղեցին հոգեւոր-մշակութային իր գործունեությամբ ամեն կերպ հավատացյալի հոգում վառ էր պահում հավատքի կայծը, որն իր անթեղումից կրկին բոցավառվեց 1991թ., երբ կրկին անգամ, ի պատասխան հայ հավատացյալի ազատ ընտրության ու ինքնորոշման, Վազգեն Ա Հայոց Հայրապետն օրհնեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը եւ նրա նախագահին:

Հայ եկեղեցուն ծնկի բերելու բոլշեւիկների ցանկությունը, այսպիսով, չիրականացավ: Եկեղեցին, թեեւ մեծ կորուստներ կրեց, սակայն շնորհիվ իր տաղանդավոր, դիվանագետ, խորագետ հոգեւորականների, հմտորեն վարելով գործերը, հաղթահարեց նրանց կողմից ստեղծված արհեստական խոչընդոտները:

14. Հայաստանյայց Եկեղեցին Հետ Հայաստանի Անկախության (1991-2004)

Հայաստանի Հանրապետությունում 1921թ. Խորհրդային կարգերի հաստատումից հետո մինչեւ 1930-ական թթ., Հայաստանում, Արցախում, ինչպես նաեւ Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում փակվել էին գրեթե բոլոր հայկական եկեղեցիները: Դրանցից շատերը քանդվել էին, շատերը վերածվել ակումբների եւ պահեստների, իսկ պատմական վանքերը՝ անխնամ վիճակում պահպանվում էին որպես պատմական հուշարձան կոթողներ: Կրոնական ցանկացած գործունեություն արգելված էր: Համաշխարհային Երկրորդ պատերազմից հետո միայն արտոնվեց բացել մի քանի եկեղեցիներ եւ վերանորոգել որոշ պատմական վանքեր: Խորհրդային տարիներին եկեղեցին ու հոգեւորականությունը հալածված էին պետական վարչական միջոցներով, իսկ պատերազմից հետո՝ լոկ հանդուրժված, սահմանափակ իրավունքներով: Այսպիսի պայմաններում, մեր հայրենաբնակ եւ խորհրդային տարածքներում ապրող ժողովուրդը եւ նոր սերունդները կրոնական դաստիարակությունից եւ հոգեւոր մխիթարությունից զրկված մնացին:

Կացությունը սակայն փոխվեց 1991թ., երբ Խորհրդային Միության փլուզումից հետո հայ ժողովուրդը անկախություն ձեռք բերեց եւ հռչակեց անկախ Հայաստանի երկրորդ Հանրապետություն, որի կառավարության անդրանիկ անդամներին եւ որի պատմության առաջին էջը օրհնվեցին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, այդպես սկիզբ դնելով Եկեղեցի-Պետություն սերտ համագործակցության մի նոր ուղու: 1991թ. պատմական այս բարենպաստ շրջափոխությամբ հայ ժողովուրդը ունեցավ իր անկախ հանրապետությունը եւ սեփական պատմությունը կերտելու բացառիկ հնարավորություն:

Մայր Հայրենիքում օրինական նոր պայմանների ստեղծումով ու, մանավանդ, Հայաստանի Հանրապետության «Խղճի ազատության» օրենքի ընդունմամբ՝ Հայ Եկեղեցու առաջ դրվեց մեր ժողովրդի կյանքն ու հոգին Սուրբ Ավետարանի լույսով պայծառակերպելու նվիրական պարտականությունը: Օրինաչափ էր, որ ազատ շնչելու առաջին իսկ հնարավորությամբ ժողովուրդը տենչաց իր հոգեւոր ծարավը հագեցնել: Դա արտահայտվեց բազմաթիվ եկեղեցիներ բացելով, եկեղեցական-ազգային տոներին վերադառնալու ձգտումով եւ, որ ամենակարեւորն է, Մայր Եկեղեցին ճանաչելու պահանջով եւ անհրաժեշտությամբ: Պետք էր նոր սերունդին

ցույց տալ Հայ Եկեղեցու դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում. երբ չկար պետականություն, Եկեղեցին արժանապատվությամբ համատեղեց ժողովրդի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանության պատասխանատվությունը, երբ հայն ունեցավ պետություն, Եկեղեցին միշտ եղավ նրան զորավիգ: Պետք էր ճանաչել Եկեղեցին, որպեսզի հոգեւոր զարթոնքը գիտակցված լիներ:

Նորանկախ հայրենիքում նոր հոգեւոր զարթոնք է սկսվում եւ այդ ազգային զարթոնքն արտահայտվում է հայ կյանքի բոլոր ասպարեզներում: Այդ ամենին նպաստում էին մինչ այդ Վազգեն Ա Կաթողիկոսի ջանքերով կատարված ձեռքբերումները:

1988-1989թթ. Հայաստանում եւ Արցախում Եկեղեցուն էին վերադարձվել 25 վանքեր եւ եկեղեցիներ, 19-ը՝ Հայաստամում եւ 6-ը՝ Արցախում: 1990թ. հոկտեմբեր 20-ին Վազգեն Ա-ի օրհնությամբ հիմնվել էր Հայաստանի Աստվածաշնչյան Ընկերությունը, որն արդեն Հայաստանում սկսում է հրատարակության պատրաստել Աստվածաշնչի արեւելահայերեն նոր թարգմանությունը:

Ժողովրդի հոգեւոր կարիքները հոգալու համար, 1990թ. Վազգեն Ա Կաթողիկոսի տնօրինությամբ Արարատյան թեմի Առաջնորդարանում հաստատվում է Մայր Աթոռի «Քրիստոնեական քարոզչության» կենտրոնը, որը պետք է Հայաստանի տարբեր շրջանների դպրոցներում եւ կրթական հաստատություններում կազմակերպեր Հայ Եկեղեցու կրոնական քարոզչությունը եւ հոգեւոր դասընթացներ: Կանոնավոր կերպով Հանրային հեռուստատեսությամբ եթեր են արձակվում «Լուսոյ Խորան» կրոնական հեռուստահաղորդումները:

Այդ օրերին մեծ իրադարձություն էր Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի միջոցառումների նախապատրաստությունը, որի շրջանակներում նախատեսված էր մայրաքաղաք Երեւանում եկեղեցի կառուցել Ս. Գրիգոր Լուսավորչի անունով, որի հուշաքարի հիմնարկեքը կատարվել էր Վազգեն Ա Հայրապետի ձեռամբ 1990թ. մարտի 31-ին:

Խորհրդային Միության փլուզումից հետո, նպատակ ունենալով վերակազմակերպել Հայաստանի եւ Ներքին Սփյուռքի Հայ Առաքելական Եկեղեցու կանոնական ու վարչական կյանքը համաձայն եկեղեցական ավանդական կարգ ու կանոնի, 1991թ. փետրվար 14-ին, Եպիսկոպոսական ժողովը Վազգեն Ա Հայրապետի նախագահությամբ, հաստատում է «Հայաստանի Հանրապետութեան եւ Խորհրդային Միութեան տարածքի վրայ գործող Հայաստանեայց Եկեղեցու կանոնադրութիւնը» բաղկացած 94 հոդվածներից, որը Վեհափառ Հայրապետի 1991թ. մարտի 2-ի 1758 համարի սրբատառ կոնդակով գործածության մեջ է մտնում Հայաստանի եւ ներքին սփյուքրի թեմերում: Նույն թվականի մարտի 20-ին վերահաստատվում է Գերագույն Հոգեւոր Խորհուրդը:

Նոր կանոնադրությամբ զրեթե ամբողջապես կազմակերպվում են Հայ եկեղեցու ներքին թեմերն ըստ հետեւյալ դրության.

- Արարատյան Հայրապետական Թեմ
- Շիրակի Թեմ
- Գուգարաց Թեմ
- Սյունյաց Թեմ
- Արցախի Թեմ
- Վիրահայոց Թեմ
- Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Թեմ
- Ուկրաինայի շրջան
- Մոլդավիայի հովվություն:

Այս բոլոր թեմերում սակավ առ սակավ սկսում է կազմակերպվել կրոնական կյանքը: Եկեղեցու հովանու ներքո հիմնվում են մի շարք միություններ:

Մոտենում էր 2001թ., երբ ծրագրված էր 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունները եւ Վազգեն Ա Հայրապետի ողջ ուշադրությունը սեւեռված էր հանդիսությունների պատշաճ կազմակերպմանը: 1994թ. մայիս 6-9-ը Մայր Աթոռում Վազգեն Ա-ի նախագահությամբ, չնայած առողջության վատթար վիճակին, կազմակերպվում են խորհրդակցական հանդիպումներ, որոնց մասնակցում էին նվիրապետական աթոռների գահակալները, եւ որտեղ քննարկվում են 1700-ամյակի տոնակատարությունների արժանավայել նշման ծրագրերը:

Ցավալի է, որ հայ ժողովրդին վրա հասած պատմական այս բարենպաստ ժամանակները համընկան Վազգեն Ա Հայրապետի գահակալության վերջին տարիներին, երբ նա արդեն առաջացած տարիքում էր, եւ բոլոր հիշված հաջողությունները ձեռքբերումներ էին՝ կատարված անձնական առողջության եւ անձնազոհ նվիրումի շնորհիվ: Վազգեն Վեհափառը մահանում է 39-ամյա երկարատեւ գահակալությունից հետո: Նա իրավամբ համարվում է Հայ Եկեղեցու շինարար կաթողիկոսներից մեկը:

Վազգեն Ա Հայրապետի արժանավոր հաջորդի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1995-1999թթ.) կարճատեւ գահակալության տարիները նույնպես քիչ չէին արձանագրված հաջողություններով:

Միանգամայն այլ հնարավորություններ եւ միջոցներ էին արդեն ստեղծված Գարեգին Ա Կաթողիկոսի համար: Նորանկախ պետությունն ամեն կերպ աջակցում էր եկեղեցու բոլոր ձեռնարկներին եւ շուտով զգալի են դառնում այն առաջխաղացումները, որոնք արձանագրվեցին Վեհափառի քառամյա գահակալման ընթացքին:

1996թ. մայիս 30-ի տնօրինությամբ, նկատի ունենալով ՀՀ նոր վարչատարածքային բաժանումը, Եկեղեցու հովվական, կրոնական ժողովրդական գործունեության զորացման եւ գործնական արդյունավորման անհրաժեշտությունը, Հայ Եկեղեցու թեմական կառուցվածքային բնագավառում կատարվում են բարեփոխումներ:

Հայաստանի տարածքում ստեղծվում են Գուգարաց, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի եւ Գեղարքունյաց թեմերը: 1997թ. հունվար 10-12-ի Գերագույն Հոգեւոր Խորհրդի որոշմամբ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Թեմում նույնպես ստեղծվում են առանձին թեմեր՝ Հարավային Ռուսաստանի հայոց Թեմը, իսկ Ուկրաինայի Հանրապետությունում՝ Ուկրաինայի հայոց թեմը:

Մայր Աթոռի միաբանության թիվը կտրուկ աճում է եւ նրանք, բացի թեմերում իրականացրած հոգեւոր սպասավորությունից, ուսման են մեկնում նաեւ արտասահմանյան մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Նշանակալից իրադարձություն էր Գեւորգյան Ճեմարանի նախկին շենքի վերաբացումը, որը դեռեւս Եկեղեցուն էր հանձնվել երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառի օրոք: Ճեմարանը, փակված լինելով 1917թ., 80-ամյա դադարից հետո սեպտեմբերի 18-ին վերաբացվեց ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ներկայությամբ:

Ճեմարանի սաների կեցության պայմանները բարելավելու համար Գարեգին Ա-ի անմիջական նախաձեռնությամբ նույն թվականի հոկտեմբեր 4-ին կատարվում է ուսանողական նոր հանրակացարանի հիմնարկեքը, որը ներկայիս ավարտված է:

Մայր Աթոռի մշակութային առաքելությունը զարգացնելու համար մեծ թափով սկսում է գործել Մայր Աթոռի տպարանը: Բացի ընթացիկ հրատարակություններից՝ «Էջմիածին» ամսագիր, օրացույց եւ աղոթքի թերթոններ, հրատարակվում են նաեւ կրոնական, բանասիրական, պատմական եւ գրական ուսումնասիրություններ եւ գրքեր:

Հայ Եկեղեցին, ազատված լինելով կոմունիստական աստվածամարտության հսկողությունից, լայն թափով սկսում է քարոզչական գործունեություն ծավալել մայր հայրենիքում: Այդ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ 1996թ. նոյեմբերին հիմնվում է Քրիստոնեական Դաստիարակության եւ Քարոզչության Կենտրոն /ՔԴՔԿ/, որը գործունեություն էր ծավալում հետեւյալ ուղղություններով.

- Ուսուցիչների պատրաստություն

- Լսողա-տեսողական միջոցառումներ հեռուստատեսության եւ ռադիոյի օգտագործմամբ
- Հրատարակություններ
- Դասագրքերի եւ ուղեցույցների պատրաստություն:

Հայրենիքում ուսումնական գործընթացը ավելի լավ կազմակերպելուն իրենց նպաստն են բերել նաեւ սփյուռքի հայոց թեմերը: 1997թ. Հյուսիսային Ամերիկայի երեք թեմերի աջակցությամբ Գյումրիում, Ստեփանավանում եւ Իջեւանում բացվում են դպրոցներ:

1996թ. սեպտեմբեր 7-ին նախատակ Տ. Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի աճյունը Գայանե վանքի շրջափակից տեղափոխվում եւ ամփոփվում է Մայր Տաճարի մուտքի մոտ՝ այլ կաթողիկոսների շիրիմների շարքին:

Բացի հոգեւոր-կրոնական գործունեությունից, Հայ Եկեղեցին զբաղվում է նաեւ ընկերային ծառայությամբ:

1997թ. մարտին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կողմից Հայաստանին նվիրված ծրագրի համաձայն՝ Մայր Աթոռում հաստատվում է «Կլոր Սեղան»-ի հատուկ գրասենյակ, որի նպատակն է Հայաստանի եկեղեցիների եւ ոչ պետական կազմակերպությունների հետ մշակել եւ նվիրատու կազմակերպություններին ու անհատներին ներկայացնել քրիստոնեական կրթության, եկեղեցիների շինարարության վերաբերյալ տարբեր ծրագրեր:

Լայն թափով առաջ են գնում նաեւ շինարարական աշխատանքները, որոնցից կարեւոր էր Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու կառուցումը: 1997թ. ապրիլի 7-ին Գարեգին Ա Կաթողիկոսի կողմից տեղի է ունենում առաջին չորս՝ Մայր Խորանի հիմնաքարերի օրհնությունն ու օծումը, իսկ հուլիսի վերջին՝ մյուս տասներկու քարերի օծումն ու օրհնությունը:

1995-97թթ. Մայր Աթոռին են վերադարձվել Էջմիածնի Մայրավանքի շուրջ գտնվող հողերի մեկ կարեւոր հատվածը, ներառյալ Գեւորգյան Ճեմարանը եւ զբոսայգին, Ս. Գայանե եւ Հռիփսիմե վանքերի շրջատարածքները:

Գարեգին Ա-ի հայրապետության տարիներին էլ ավելի աշխուժացան միջեկեղեցական հարաբերությունները: 1997թ. նոյեմբերի 13-ին երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի եւ այդ ժամանակվա ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ ստեղծվել է Հայ Եկեղեցու Բանակի հոգեւոր ծառայության ծրագիրը:

Պատմության ընթացքում առաջին անգամն էր, որ հայոց ազգային բանակն ունեցավ

հոգեւոր խորհրդատու կամ սպասավոր: Բանակի առաջին հոգեւոր խորհրդատուները նշանակվել են Հայաստանի առաջին անկախ Հանրապետության համար: Նույնիսկ փորձեր են արվել բանակի հոգեւոր ծառայությունը ձեւակերպել օրենքով՝ կարգավորելու համար նրա գործունեությունը:

1997թ. նույն նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀՀ պաշտպանության նախարարության միջեւ ստորագրվեց փոխհամաձայնության հուշագիր, որում համաձայնեցվում եւ հստակեցվում էին բանակի հոգեւոր ծառայողների գործունեության ոլորտը, կառուցվածքը, խնդիրներն ու նպատակները: Բանակի որոշ տեղամասերում կառուցվել են մատուռներ: Զորամասերի գրադարանները համալրվել են հոգեւոր գրականությամբ:

Հոգեւոր ծառայողները դասախոսություններ են կարդում, զինվորների հետ զրույցներ անցկացնում, կազմակերպում ուսուցողական ֆիլմերի ցուցադրումներ, ուխտագնացություններ, կատարում եկեղեցու խորհուրդները, ժամերգություններ եւ եկեղեցական այլ արարողություններ: Ներկայումս ավելի քան 35 հոգեւորական է ծառայում բանակի հոգեւոր ծառայության կառույցներում, որոնց թվում կան կուսակրոն եւ ամուսնացյալ քահանաներ ու սարկավագներ: Ցավոք, երկարատեւ ծանր հիվանդությունը Գարեգին Ա-ին հնարավորություն չտվեց առավել արդյունավորել կարճատեւ գահակալության տարիները:

1999թ. Հայրապետական Աթոռ է բարձրանում նրա 132-րդ գահակալ Գարեգին Բ-ն, ում գահակալության հինգ տարիներն աչքի ընկան բեղուն եւ աշխույժ գործունեությամբ՝ պայմանավորված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի հոբելյանական հանդիսություններով եւ մի շարք այլ հոբելյաններով ու իրադարձություններով:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներն անհամեմատ հագեցած էին Մայր Աթոռում տեղի ունեցած ընդունելություններով եւ Հայրապետական այցելություններով:

Հայրապետական այցելություններ են կատարվել ՀՀ պետական այրերին եւ իշխանության տարբեր կառույցների ղեկավարներին, գիտա-մշակութային հաստատություններ եւ ներքին թեմեր: Բացի այդ, համայնքային, թեմական եւ միջեկեղեցական հրավերներով Վեհափառ Հայրապետը մի շարք այցելություններ է կատարել: Կատարվել են հովվապետական այցեր Ամերիկայի Արեւմտյան թեմ, Կանադայի հայոց թեմ, Ամերիկայի Արեւելյան թեմ, որը նշանավորվել է նաեւ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպմամբ, Անգլիո հայոց թեմ, որի ընթացքում կատարվել է Լոնդոնի Սուրբ Եղիշե եկեղեցու օծումը, Ավստրիայի հայոց թեմ, Ֆրանսիայի հայոց թեմ, որտեղ Հայրապետը հանդիպել է երկրի նախագահ Ժակ Շիրակին եւ պարգեւատրվել Պատվո Լեգեոնի Ա կարգի շքանշանով:

2001թ. եղավ հոգեւոր եւ գիտամշակութային միջոցառումներով 1700-ամյակի իմաստավորման ու արժեւորման տարի՝ հարուստ եկեղեցական արարողություններով ու հանդիսություններով: 1700-ամյակի շրջանակում տեղի ունեցան գիտաժողովներ, բացվեցին ցուցահանդեսներ, կատարվեցին հավաքական մկրտություններ եւ կազմակերպվեցին ուխտագնացություններ հայ հավատի նվիրական սրբավայրեր ու տպագրվեցին մի շարք գրքեր ու ալբոմներ:

Հոգեւոր կյանքի նորոգմանը մեծ լիցք հաղորդեցին 1700-ամյակի առիթով կազմակերպված ուխտագնացությունները, որոնց բարձրակետը դարձավ հուլիսի 10-22-ին տեղի ունեցած համահայկական երիտասարդական առաջին ուխտագնացությունը Խոր Վիրապ-Ս. Էջմիածին-Սեւան-Երեւան երթուղով, որին մասնակցեցին 2000 երիտասարդներ Սփյուռքի եւ Հայաստանի թեմերից: Այս ուխտագնացության շրջանակում հուլիսի 14-ին Երեւանում տեղի ունեցավ Համահայկական երիտասարդական առաջին համաժողովը:

2001թ. սեպտեմբերի 22-ին Քույր Եկեղեցիների պետերի եւ ներկայացուցիչների մասնակցությամբ էկումենիկ արարողություն կատարվեց Մայր Տաճարում, երեկոյան Սրբալույս Մյուռոնի օրհնությունը Մայր Աթոռի Ս. Տրդատ նորաօծ բաց խորանում: Սեպտեմբեր 23-ին կատարվեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցու օծումը, սեպտեմբերի 30-ին՝ եպիսկոպոսական ձեռնադրություն:

1700-ամյակի հանդիսություններին Մայր Աթոռ այցելեցին քույր եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները. Սեպտեմբերի 21-23-ը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ն. Ս. Ալեքսի Բ, Հնդիկ Մալաբար Եկեղեցու պետ, Արեւելքի Կաթողիկոս Ն. Ս. Բասիլիոս Մար Թոման, Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի հույն ուղղափառ Պատրիարք Ն. Ս. Պետրոս Է-ն, Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու պետ Ն. Ս. Թեոկտիստ Պատրիարքը, Պատվիրակություններ Ղպտի, Ասորի, Վրաց, Սերբիայի, Կիպրոսի, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիներից, ներկայացուցիչներ Անգլիկան, ԱՄՆ-ի Եպիսկոպոսական, Դանիայի Լյութերական, Գերմանիայի Ավետարանական եկեղեցիներից, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերը: Հանդիսություններին մասնակցում էին նաեւ Հայ կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներ եւ Մխիթարյան միաբանության հայրեր: Սեպտեմբերի 25-27-ը՝ իբրեւ Նորին Սրբության հյուր Հայաստանում եղավ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ Ն. Ս. Հովհաննես-Պողոս Բ Պապը: Նոյեմբերի 3-5-ը՝ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ն:

Գահակալության առաջին իսկ օրերից Գարեգին Բ Կաթողիկոսի ուշադրության կենտրոնում էր միաբանական կյանքի կազմակերպումը՝ հոգեւոր ծառայության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ:

Վանական ներքին կյանքին ու գործունեությանը, ինչպես նաեւ հասարակական կյանքում Հայ Եկեղեցու դերի բարձրացմանը վերաբերող հարցերի քննարկման համար պարբերաբար կազմակերպվել են միաբանական հավաքներ: Միաբանական կյանքում նշանակալից իրադարձություն էր 2001թ. փետրվարի 19-21-ը, ինչպես նաեւ, 2003թ. հուլիսի 23-27-ը Մայր Աթոռում տեղի ունեցած միաբանական համագումարները:

Կարեւորելով ուսյալ եկեղեցականներ ունենալու պարագան, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, եկեղեցագիտական եւ աստվածաբանական կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու համար արտասահման են մեկնում Մայրավանքի միաբանները:

Հայ ժողովրդի ազգային եկեղեցական կյանքում 1700 ամյակի առաջ բերած հոգեւոր զարթոնքի արդյունքում ավելացել են Եկեղեցում պաշտոնավարող աշխարհականաց թիվը: Մայրավանքի շնորհիվ Հայաստանում այսօր աշխատանքով ապահովված են շուրջ 2500 հոգի, առանց հաշվելու նաեւ շինարարական ու գործարքային տարբեր աշխատանքներում ժամանակավորապես աշխատողներին: Միայն Մայր Աթոռի տարբեր բաժիններում եւ ենթակա վանքերում ու կառույցներում աշխատում են շուրջ 900 անձեր: Թեմական կառույցներում աշխատողների հետ ընդհանուր թիվը կազմում է շուրջ 1600 անձ:

Գարեգին Բ կաթողիկոսի գահակալության հինգ տարիներն առանձնապես արդյունավորվեցին շինարարական՝ ի մասնավորի եկեղեցաշինական գործունեությամբ: 1999-2004թթ. ներքին եւ արտաքին Սփյուռքի բոլոր թեմերում բազմաթիվ նոր եկեղեցիներ են կառուցվել եւ օծվել, ինչպես նաեւ, խոնարհված եկեղեցիներ վերակառուցվել եւ վերասրբագործվել:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին էլ ավելի են համակարգվում եկեղեցի-պետություն հարաբերությունները: Հայրենի պետական ավագանու հետ պարբերական համագործակցություն դրսեւորվում էր հիմնականում մշակույթի, տնտեսական ծրագրերի իրագործման ու սոցիալական օգնության բաշխման բնագավառներում:

Այդ համագործակցության եւ սերտ շփումների շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին են վերադարձվել 180-ից ավելի վանքեր, եկեղեցիներ ու վանքապատկան կալվածքներ:

2000թ. սեպտեմբերի 14-ին, Վեհափառ Հայրապետի անմիջական ջանքերով, ՀՀ զինված ուժերում հոգեւոր սպասավորների բանակային ծառայություն անցկացնելու բանավոր համաձայնությունը ամրագրվում է Մայր Աթոռի եւ ՀՀ Պաշտպանության նախարարության միջեւ ՀՀ զինված ուժերում հոգեւոր սպասավորների բանակային

ծառայության կանոնադրության ստորագրմամբ, որով կանոնակարգվեցին բանակի հոգեւոր սպասավորների բանակային ծառայության, իրավունքներին եւ պարտականություններին վերաբերվող հարցեր: Պետության հետ ունեցած հարաբերությունների շրջագծում նաեւ բանտերում հիմնել է հոգեւոր ծառայության գրասենյակ:

Երիտասարդությանն ու պատանիներին եկեղեցասիրության եւ հայրենասիրության ոգով դաստիարակելու համար ստեղծվեցին Հայորդյաց տներ: 1993թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի (այն ժամանակ՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանի) նախաձեռնությամբ եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության (նախագահ՝ Լուիզ Մանուկյան Սիմոն) ֆինանսական հովանավորությամբ՝ Արարատյան հայրապետական թեմը ստանձնեց Երեւանի Նոր Նորքի« Արաբկիրի եւ Մալաթիայի նախկին մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների (պիոներպալատներ) տնօրինությունը՝ դրանք վերանվանելով «հայորդյաց տներ»: 1999թ. դեկտեմբերից Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ՝ հայորդյաց տները եւ Քանաքեռում գործող մանրանկարչության արվեստի կենտրոնը առանձնացվեցին Արարատյան հայրապետական թեմից եւ դարձան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակառույց: 2003թ. հունվարից, ՀՀ Կառավարության որոշմամբ, Արաբկիրի, Մալաթիայի եւ Նորքի հայորդյաց տների շենքերն ու շինությունները սեփականության իրավունքով հանձնվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Այժմ եւս ՀԲԸՄ-ն շարունակում է հովանավորել հայորդյաց տների գործունեությունը՝ նորընտիր նախագահ Պերճ Սեդրակյանի գլխավորությամբ:

Վերջին տարիներին հայորդյաց տների համակարգն ընդլայնվեց նոր հաստատություններով: 2003թ. մարտից Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ՝ Մայր Աթոռի հովանու ներքո անցավ Գուգարաց թեմում գործող Վանաձորի հայորդյաց տունը: 2003թ. մայիսից հայորդյաց տան կարգավիճակ ստացավ Էջմիածնի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը:

Հայորդյաց տների կազմում են նաեւ Էջմիածնի ծերանոցը, հայորդյաց տների հյուրատունը եւ Աղվերանի «Մասիս» պանսիոնատը: Ծերանոցի շենքը գտնվում է Էջմիածին քաղաքում: Հաստատությունը նախատեսված է թվով 40 տարեցների համար:

Ներկայումս հայորդյաց տներ հաճախում է մոտ 3500 սան, ովքեր ուսանում են արվեստի« արհեստագործության« սպորտային եւ գիտատեխնիկական տարբեր դասարաններում: Գործում են նաեւ Եկեղեցասեր երիտասարդների միություններ: Վեհափառ Հայրապետի ջանադրությամբ՝ Նորքի հայորդյաց տանը կից եւ Էջմիածնի «Ներսիսյան» անտառ-պուրակում բացվել են նաեւ խաղահրապարակներ՝ հագեցած

բազմապիսի խաղասարքերով: Հայորդյաց տներ հաճախող երեխաները հիմնավոր կրթություն են ստանում տարբեր ոլորտներում:

Վեհափառ Հայրապետը օրհնությամբ հայորդյաց տներում գործում են նաեւ բարեգործական ճաշարաններ, եւ 1996թ., ՀԲԸՄ-ի ֆինանսավորմամբ, այդ ճաշարանները հոգում են թվով 600 կարիքավոր միայնակ ծերերի հանապազօրյա հացի խնդիրը:

Սոցիալական ոլորտում գործունեությունն իրականացվել է Մայր Աթոռի սոցիալական ծառայության գրասենյակի, Կլոր սեղանի Հայաստանյան գրասենյակի, ECLOF-ի (ԷԵՎՀՀՄ), բարեգործական ճաշարանների եւ թեմերի հետ համատեղ տարբեր ծրագրերի միջոցով: Սոցիալական ծառայության գրասենյակի միջոցով սոցիալապես անապահով խավերին պատկանող ընտանիքներին բաժանվում է հագուստ եւ սնունդ, իսկ մի շարք մանկապարտեզներում՝ մանկական խաղալիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվում է նաեւ նյութական օգնություն: Առողջապահական ոլորտում կարեւոր առաքելություն է իրականացնում ՀԲԸՄ-ի կողմից Մայր Աթոռին փոխանցված Պրոկտոլոգիայի նախկին ինստիտուտը:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հայրապետական իշխանության կոչվելուց հետո, շարունակել է Վազգեն Ա Վեհափառի գահակալության շրջանից ձեւավորված ավանդույթը, հայ մտավորականության մասնակցությամբ եւ նրանց նվիրված տարբեր հանդիսություններ ու մեծարման երեկոներ էին կազմակերպել Վեհարանի հանդիսությունների դահլիճում:

Անցնող տարիներին Մայր Աթոռի հրատարակությունները եւս մեծապես հարաբերվել են Քրիստոնեության պետական կրոն հռչակման, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի1700-ամյակների հետ: Այս առիթով, տպագրվել են մի շարք գրքեր՝ նվիրված Հայոց Եկեղեցու պատմությանը, դավանանքին, ծեսերին եւ խորհուրդներին, որոնց օտարալեզու ընթերցողներին ու հյուրերին եւս ծանոթացնելու համար հանդիսությունների նախօրեին այս գործերից մի քանիսը թարգմանաբար տպագրվեցին նաեւ ռուսերեն, անգլերեն եւ ֆրանսերեն:

ՔԴՔԿ-ն Գարեգին Բ Հայրապետի տնօրինությամբ վերանվանվեց ՔԴԿ-ի: Այն իր մասնաճյուղերն ունի Հայաստանի բոլոր թեմերում եւ Արցախում ու նախկինի նման ծավալուն իր գործունեությունը:

Կարեւորելով հեռուստատեսության դերը հոգեւոր քարոզչության իրականացման եւ եկեղեցական կյանքի լուսաբանման գործում՝ Վեհափառ Հայրապետը Արարատյան Հայրապետական Թեմից Մայր Աթոռ է փոխադրել «Շողակաթ» հեռուստաստուդիան՝ ընդլայնելով նրա գործունեության ծավալները:

Մայր Աթոռի հեռուստաստուդիայում նկարահանվում են բազմաթիվ հեռուստաֆիլմեր եւ տեսահոլովակներ, որոնք նվիրված են Հայոց Եկեղեցու պատմությանը, ծեսերին ու խորհուրդներին, 1700-ամյակի հանդիսություններին, ինչպես նաեւ ազգային-հասարակական կյանքի այլեւայլ կողմերին եւ իրադարձություններին՝ դիտարկված հոգեւոր տեսանկյունից: Ազգային հեռուստատեսությամբ տրվում են ամենշաբաթյա պարբերականությամբ հաղորդաշարեր, ինչպես նաեւ եկեղեցական նշանակալից տոների եւ իրադարձությունների նախօրյակին՝ տեսահոլովակային ծանուցումներ տարբեր հեռուստաալիքներով:

Գարեգին Բ-ի գահակալության շրջանում Մայր Աթոռի կազմում ստեղծվում է նաեւ համակարգչային բաժին՝ Մայր Աթոռի ներքին աշխատանքները եւ հաղորդակցությունն ապահովելու եւ Ս. Էջմիածինն աշխարհի տեղեկատվական-հաղորդակցական ուղիների հետ կապելու համար:

Հայ Առաքելական Եկեղեցին համաշխարհային էլեկտրոնային համացանցում հնարավորինս համապարփակ ներկայացնելու համար Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ 2002թ. Մայր Աթոռում գործում է Ինտերնետային գրասենյակ՝ ստեղծելու համար Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու համացանցային պաշտոնէջը, որը կունենա Հայոց Եկեղեցու պատմության, հոգեւոր ժառանգության ու այսօրվա վիճակի եւ Ս. Էջմիածնի տարբեր բաժինների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:

Ահա, 1991թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր, կարճ ժամանակամիջոցում Հայ Եկեղեցու արձանագրած հաջողությունները:

ԲԱԺԻՆ Բ.

1. Հաւատը

Նիկիական Հանգանակը մեր քրիստոնեական դավանանքի ամփոփումն է: Ըստ սրբազան ավանդության Նիկիական Հանգանակը կազմվել է Հոգեգալստին՝ 12 առաքյալների կողմից: Հանգանակը ներառում է Հավատո 12 հոդված, որոնցից յուրաքանչյուրը գրվել է մեկ առաքյալի կողմից:

Երբ եկեղեցու անդամներն սկսեցին ուսուցանել սխալ կամ հերետիկոսական ուսմունքներ, անհրաժեշտություն առաջացավ հստակեցնել մեր Տիրոջ վարդապետության վրա հիմնված Հանգանակը, որը կհերքեր սխալ ուսմունքներն ու կպաշտպաներ դրանց ազդեցությունից: 325թ. Նիկիայի Ա Տիեզերական Սուրբ Ժողովն ընդունեց հանգանակը, եւ այն լրացվեց հաջորդ՝ 381թ. Կոստանդնուպոլսի Բ եւ 431թ. Եփեսոսի Գ Տիեզերական Սուրբ Ժողովներում:

Հանգանակն առաջին անգամ օգտագործվել է Մկրտության խորհրդի ժամանակ: Ընդհանրական Եկեղեցու հայրերից Հիպոլիտոս պատմաբանը 215թ. իր «Առաքելական ավանդությունը» աշխատության մեջ նշում է, որ Հանգանակը ամբողջությամբ ընթերցվել է մկրտության ժամանակ: Ավելի ուշ՝ V դարում, Հանգանակը սկսվեց գործածվել Սուրբ Պատարագի մեջ, որպեսզի հավատացյալները ուղղափառ դավանանքից չշեղվեն:

Հանգանակին հաջորդում է եկեղեցական նզովք, որը դատապարտում է հերետիկոսական ուսմունքները: Նզովքի պատմական արժեքն այն է, որ այն նշում է Եկեղեցու վաղ շրջանում գոյություն ունեցող կեղծ ուսմունքները: Ս. Գրիգոր Լուսավորիչը Հանգանակին ավելացրել է փառաբանություն, որը հաջորդում էր նզովքին: Փառաբանական մասը Աստծու նկատմամբ երախտագիտության կարճ արտահայտությունն է: Հանգանակի վերջին բառը՝ «Ամեն»-ը, Հայ Եկեղեցու Սուրբ Պատարագում ասվում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի փառաբանությունից հետո:

Նիկիական Հանգանակ

Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ եւ ո՛չ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով. որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախճան:
Հաւատամք եւ ի սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս. որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն, եւ բնակեցաւ ի սուրբսն:
Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական Սուրբ Եկեղեցի. ի մի մկրտութիւն, յապաշխարհութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց՝ յարքայութիւնն երկնից, եւ ի կեանսն յաւիտենականս:

Նզովք

Իսկ որք ասեն՝ էր երբէմն յորժամ ո՛չ էր Որդին, կամ էր երբեմն՝ յորժամ ո՛չ էր սուրբ Հոգին. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ եւ առաքելական սուրբ Եկեղեցի:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի փառաբանություն

Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

---

2. Կառույցը



Եկեղեցու գլուխը Հիսուս Քրիստոս է: Եկեղեցու գերագույն հոգեւոր եւ վարչական առաջնորդը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, ով հանդիսանում է Հայաստանում եւ Հայաստանից դուրս գտնվող աշխարհասփյուռ հայ ժողովրդի հոգեւոր առաջնորդը: Ամենայն Հայոց կաթողիկոսը 9 մլն. հայ հավատացյալների հայրապետն ու գլխավոր հոգեւոր հովիվն է: Հայ եկեղեցու հոգեւոր եւ վարչական կառույցները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ գտնվում է Վաղարշապատ քաղաքում, հիմնադրվել է 301 թ-ին եւ 17 դար անց եւս շարունակում է առաջնորդել մեր նվիրյալ ազգին եւ մարդկանց լուսաշող արահետներով, որով իրականցվում է մեր Եկեղեցու հիմնական առաքելությունը, որն է՝ առաջնորդել մարդկանց դեպի Աստված:
Հայ Առաքելական Եկեղեցին իր հավատացյալների հոգեւոր պահանջները բավարարելու համար ավելի քան 1700 տարվա իր պատմության ընթացքում փոփոխվել եւ զարգացել է: Եկեղեցու վարչական կառուցվածքում այսօր ընդգրկված են ե՛ւ եկեղեցականներ, ե՛ւ աշխարհականներ: Հայ Եկեղեցու հոգեւոր եւ վարչական աշխատանքները, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, իրականցվում են կրոնական, եկեղեցականների պատրաստման, քրիստոնեական դաստիարակության, նոր եկեղեցիների կառուցման, հասարակական ծառայությունների եւ էկումենիկ գործունեությունների բնագավառում:

Հայաստանյայց Եկեղեցու Կաթողիկոսներ

Կաթողիկոս բառը ծագել է հունարեն Katholikos բառից, որը նշանակում է ընդհանրական, համընդհանուր: Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի ստեղծումից հետո այսպես էին անվանում եպիսկոպոսապետին:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը' առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, դեռեւս ենթակա էր Կեսարիայի Աթոռին, որը գտնվում էր Կապադովկիայում: Աղվանքի ու Վրաստանի եպիսկոպոսապետերը նույնպես կրում էին այդ տիտղոսը, չնայած որ կախում ունեին հայոց Կաթողիկոսից: Պապ թագավորի եւ Հուսիկ Ա Կաթողիկոսի օրոք Հայաստանն ի

հոգեւորս անկախացավ Կեսարիայից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ քաղաքում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Կաթողիկոսական պաշտոնական տիտղոսն է Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ծայրագույն Պատրիարքի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի իշխանությունը խորհրդանշում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը: Այն միշտ պահվել է կաթողիկոսական նստավայրում եւ ամեն անգամ, երբ Հայրապետական Աթոռը տեղափոխվել է, նույն վայրն է բերվել նաեւ Ս. Լուսավորչի Աջը: Այն անբաժան է Մայր Աթոռից:

Այս կառույցի ներքո են Նվիրապետական Աթոռները.

- Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, որի իրավասության ներքո ներկայումս Լիբանանի, Կիպրոսի եւ Սիրիայի թեմերն են, որոնք 1929թ. ժամանակավոր նրան են հանձնվել Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կողմից: Ն.Ս.Օ. Տ. Տ. Արամ Ա-ն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն է:

- Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, որի իրավասության ներքո են բոլոր սրբավայրերը եւ Հորդանանի Թեմը. առաջնորդն է Գերաշնորհ Տ. Թորգոմ Մանուկյանը:
- Կոստանդնուպոլսի եւ Թուրքիո Հայոց Պատրիարքություն, որի իրավասության ներքո են ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքի բոլոր հայկական եկեղեցիները. առաջնորդն է Գերաշնորհ Տ. Մեսրոպ Մուտաֆյանը:

Վերոհիշյալ երեք պատմական նվիրապետական Աթոռները ազատ են ղեկավարել իրենց իրավասության ներքո գտնվող թեմերը, այնուամենայնիվ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության գերագահությունը բոլոր հոգեւոր հարցերում մնում է առաջնային:
Իրենց համապատասխան թեմի վերահսկությությունից, յուրաքանչյուր Նվիրապետական Աթոռ, այդ թվում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ունի իր վանական միաբանությունը:

Տարածքային առումով, հայկական եկեղեցի եւ հայ հավատացյալների համայնք ունեցող աշխարհի յուրաքանչյուր վայր ունի նաեւ թեմեր, որոնք ղեկավարվում են առաջնորդի կողմից: Յուրաքանչյուր թեմ բաղկացած է ծուխերից եւ համայնքներից: Հայ եկեղեցու հոգեւոր եւ վարչական իշխանության մարմիններն են.

- Ազգային-եկեղեցական ժողով, որը Գերագույն կանոնադիր մարմինն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ: Նրա անդամներն ընտրվում են թեմական պատգամավորական ժողովի կողմից: Ազգային եկեղեցական ժողովն ընտրում է Ամենայն Հայոց կաթողիկոսին:
- Եպիսկոպոսաց ժողովը վարչախորհրդակցական մարմին է Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ: Այն առաջարկներ է պատրաստում եկեղեցու ներսում դավանական, եկեղեցական, ծիսական եւ կանոնական հարցերի շուրջ՝ Ազգային-եկեղեցական ժողովում քննարկելու համար:
- Գերագույն Հոգեւոր Խորհուրդ, բարձրագույն գործադիր իշխանությունն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ: Անդամները կարող են ընտրվել Ազգային-եկեղեցական ժողովի կողմից, կամ էլ նշանակվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Գերագույն Հոգեւոր Խորհուրդը ստեղծել է Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը 1924 թ. հունվարի մեկին, նախկին Սինոդի փոխարեն:
- Թեմական պատգամավորական ժողով, թեմի բարձրագույն կանոնադիր մարմինն է՝ Թեմակալ Առաջնորդի նախագահությամբ: Թեմական պատգամավորական ժողովն ընտրում է Ազգային-եկեղեցական ժողովի պատվիրակներին, որոշ թեմերում՝ Թեմի Առաջնորդին, ինչպես նաեւ թեմական խորհրդի անդամներին: Բացի այդ, քննարկում եւ որոշումներ են կայացնում Թեմից ներս առկա վարչական հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ համայնքները, բյուջեն, շինությունները եւ այլն:
- Թեմական խորհուրդ, թեմի բարձրագույն գործադիր իշխանությունն է՝ Թեմակալ Առաջնորդի նախագահությամբ: Առաջնորդի գլխավորությամբ այն կարգավորում է թեմի ներքին վարչական գործունեությունը: Թեմական խորհրդի անդամներն ընտրվում են Թեմական պատգամավորական ժողովի կողմից:

- Վանական միաբանությունը կազմում են վանքի կուսակրոն հոգեւորականները՝ վանահոր գլխավորությամբ: Ներկայումս Հայ Եկեղեցին ունի երեք՝ Էջմիածնի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ու Կոստանդնուպոլսի միաբանությունները: Յուրաքանչյուր հայ կուսակրոն հոգեւորական, անդամագրվում է այն միաբանությանը, որտեղ ուսանել է եւ ձեռնադրվել, կամ որ միաբանության իրավասության ներքո նա բերում է իր ծառայությունը: Միաբանությունը որոշում է վանքի ներքին հարցերը: Յուրաքանչյուր միաբանություն ընտրում է երկու պատգամավոր՝ մասնակցելու Ազգային-եկեղեցական ժողովին:

- Ծխական ժողով, համայնքի ընդհանուր ժողովն է՝ հոգեւոր հովվի նախագահությամբ: Ծխական ժողովն ընտրում կամ նշանակում է ծխական

խորհրդի անդամներին եւ Թեմական պատգամավորական ժողովի ներկայացուցիչներին:

- Ծխական խորհուրդ, համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգեւոր հովվի նախագահությամբ, որն զբաղվում է ծուխի ներքին գործունեությամբ՝ իրականացնելու վարչական եւ տնտեսա-ֆինանսական գործունեություն: Ծխական խորհրդի անդամները ընտրվում կամ նշանակվում են Ծխական ժողովի ժամանակ:

---

3. Ժողովներ

Ընդհանրական Եկեղեցու ձեւավորման առաջին իսկ օրերից Եկեղեցու առջեւ ծառացած վարդապետական հարցերի շուրջ որոշումներ կայացնելու եւ աղանդավորական շարժումների դեմ պայքարելու խնդիր ծագեց: Այն թելադրեց Եկեղեցու նվիրապետությունը պաշտոնապես հիմնադրելու անհրաժեշտությունը :

Ընդհանրական Եկեղեցու կողմից գումարված առաջին երեք ժողովները կոչվեցին Տիեզերական: Իր պատմության ընթացքում հայ եկեղեցին մասնակցել է այդ Ժողովներից երկուսին, ընդունել նրանց որոշումները: Տիեզերական ժողովներից առաջինը Նիկիական Ժողովն էր, որը գումարվեց մ.թ. 325 թ-ին, երկրորդը Կոստանդնուպոլսինը՝ մ.թ. 381թ., իսկ երրորդը Եփեսոսինը՝ (որին հարգելի պատճառներով հայոց կողմը չի մասնակցել) մ.թ. 431 թ.: Բոլոր երեք ժողովներն էլ ընդունվում են մեր եկեղեցու տոնացույցով:

Նիկիայի Ա (325թ.) եւ Կ. Պոլսի Բ (381թ.) Տիեզերական ժողովներում ճշտվում են Քրիստոսի Աստվածության եւ Ս. Երրորդության դոգմաները: Հաջորդ դավանաբանական խնդիրը, որ լրջորեն եւ երկար տարիներ զբաղեցրել է Քրիստոսի Եկեղեցուն վերաբերվում է Քրիստոսի Աստվածային Լոգոսի եւ մարդկայինի միությանը:

431 թվականին Եփեսոսում գումարված Գ Տիեզերական Ժողովը, Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու (444) նախագահությամբ, դատապարտում է Նեստորի հերետիկոսությունը Քրիստոսի երկու բնությունների եւ երկու դեմքերի վերաբերյալ:

Բացի երեք Տիեզերական Ժողովներից, մեր եկեղեցին գումարել է նաեւ բազմաթիվ

Ազգային-Եկեղեցական Ժողովներ, որոնց մասնակցել են եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականները: Այդ ժողովներով որոշումներ են կայացվել եկեղեցու ներքին կարգի եւ կառուցվածքի, նրա առջեւ ծառացած ներքին խնդիրների շուրջ, ինչպես նաեւ տրվել են զանազան հարցերի պատասխաններ:

4. Տիեզերական Ժողովներ

ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎԻ ԴԱՎԱՆԱԲԱՆԱ-ԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Նիկիայի Ա (325թ.) եւ Կ. Պոլսի Բ (381թ.) Տիեզերական ժողովներում ճշտվում են Քրիստոսի Աստվածության եւ Ս. Երրորդության դոգմաները: Հաջորդ դավանաբանական խնդիրը« որ լրջորեն եւ երկար տարիներ զբաղեցրել է Քրիստոսի Եկեղեցուն վերաբերվում է Քրիստոսի Աստվածային Լոգոսի եւ մարդկայինի միությանը:

431 թվականին Եփեսոսում գումարված Գ Տիեզերական Ժողովը« Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու (+444) նախագահությամբ« դատապարտում է Նեստորի հերետիկոնությունը Քրիստոսի երկու բնությունների եւ երկու դեմքերի վերաբերյալ:

Նեստորի հետեւորդները ապաստան են գտնում Պարսկաստանում եւ սկսում են թարգմանել ու տարածել Նեստորի ուսուցիչներ Դիոդոր Տարսոնացու (+394) եւ Թեոդորոս Մոփսուեստացու (+428) երկերը: Մելիտինեի եպիսկոպոս Ակակը մի նամակով զգուշացնում է Հայոց կաթողիկոս Սահակին: Պատասխան նամակում Ս. Սահակը հայտնում է« որ դեռ Հայաստանում նման հերետիկոսություն քարոզողներ չեն հայտնվել: Այս առիթ է լինում« սակայն« որ մի նամակագրություն սկսվի Հայոց կաթողիկոսի եւ Կ. Պոլսի պատրիարք Պրոկղի միջեւ: Այս նամակագրությամբ դրվում են հայկական քրիստոսաբանության հիմքերը՝ ալեքսանդրյանի հիման վրա: Ս. Սահակի՝ Պրոկղ պատրիարքին գրած նամակը իբրեւ ուղղափառ խոստովանություն« ընթերցվել է 553 թվականին Կ. Պոլսի Ե Տիեզերական Ժողովում:

Ս. Մեսրոպ Մաշտոցի կենսագիր Կորյունը վկայում է« որ Հայաստան են բերվել. "Գիրք սուտապատումք« ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն Հռոմի« որում Թէոդիոս անուն": Ս. Սահակը եւ Ս. Մեսրոպը լսելով այս« անմիջապես միջոց-

ներ են ձեռք առնում հալածելու դրանց ջատագովներին եւ ոչնչացնելու այդ գրքերը: Անշուշտ այստեղ խոսքը Թեոդորոս Մափսուեստացու երկերի մասին է:

448 թվականին Կ. Պոլսի վանքերից մեկի վանահայր Եվտիքեսի քարոզությամբ« ըստ որի Քրիստոսի մարդկային բնությունը լուծվել է նրա աստվածային բնության մեջ իբրեւ մի կաթիլ մեղրը՝ օվկիանոսի մեջ« որով եւ մարդկային բնությունը աստվածացել է« եւ թե« թեեւ Քրիստոսի մարմինը մարդկային էր« սակայն ոչ մեր մարմնի նման« այլ երկնքից իջած: Ըստ Եվտիքեսի Քրիստոս ուներ միայն մի՝ աստվածային բնություն:

448 թվականի նոյեմբերի 8-ին Կ. Պոլսի պատրիարքության տարեկան ժողովը քննում է Եվտիքեսի վարդապետությունը« զրկում նրան կարգից եւ վանահայրությունից ու նզովում: Եվտիքեսը դիմում է Ալեքսանդրիայի պատրիարքին« Հռոմի Պապին եւ այլ եպիսկոպոսների: Հռոմի Լեւոն Պապը ստանալով Կ. Պոլսի ժողովի որոշումները« հրապարակում է իր հայտնի Տումարը« ըստ որի Քրիստոս մի դեմք է երկու բնությամբ եւ էությամբ: Երկու բնությունները չեն խառնվում եւ չեն շփոթվում միմյանց հետ: Մերժվում է մի բնության դավանանքը: Անարգվողը մարդկային բնությունն է« փառաբանվողը՝ աստվածայինը« քաղցողը« վախեցողը« մեռնողը այլ է« հրաշագործողը« մարգարեացողը« հարություն առնողը՝ այլ: Թեպետեւ երկու բնությունները ամփոփվել են մի անձնավորության մեջ« սակայն անհրաժեշտաբար ընդունվում էր նաեւ երկու կամք եւ երկու ներգործություն:

451 թ. Մարկիանոս կայսեր հրամանով Քաղկեդոնում գումարվում է մի ժողով որ ծանոթ է Դ Տիեզերական ժողով անունով: Ժողովը« որը տեղի տալով Հռոմի պահանջներին« իբրեւ դավանության հիմք ընդունում է Լեւոն Պապի Տումարը« դատապարտում Նեստորին եւ Եվտիքեսին եւ իբրեւ հավատքի ամփոփում ընդունում "Մի Քրիստոս յերկուս բնութիւնս" բանաձեւը:

Քաղկեդոնի ժողովի որոշումները լուրջ ընդդիմություն են առաջ բերում Կիպրոսի« Պաղեստինի« Կապադովկիայի« Եգիպտոսի« ինչպես նաեւ Սիրիայի եկեղեցիներում: Բազմաթիվ ժողովներում մերժվում է Քաղկեդոնի ժողովի դավանաբանական բանաձեւումը: Հակառակությունը հասնում է այն աստիճանի« որ Բասիլիսկոս կայսրը /475-476/ 476 թվականին մի հրովարտակով դատապարտում է Լեւոն Պապի Տումարը եւ Քաղկեդոնի ժողովը: Զենոն կայսրը /474-475« 476-491/ Կ. Պոլսի Ակակիոս պատրիարքի թելադրությամբ 482 թվականին հրապարակում է իր նշանավոր Հենոտիկոնը« որ լռելյայն դատապարտությունն է Քաղկեդոնի եւ հաղթանակը միաբնակների: Զենոն կայսեր նույն քաղաքականությունն է վարում նաեւ Անաստաս կայսրը /491-518/:

Հայաստանի Եկեղեցին« զբաղված լինելով պարսկական զրադաշտական կրոնի դեմ օրհասական կռիվ մղելով« չէր կարողացել օր-օրի հետեւել բյուզանդական

կայսրության մեջ ծավալված դավանաբանական վիճաբանություններին եւ դիրք ճշտել: Երբ Ե դ. վերջին Հայաստանն ու Հայոց Եկեղեցին սկսեցին մի փոքր շունչ քաշել« Քրիստոնեական եկեղեցին բաժանված էր երեք մասի՝ երեք դավանանքներով: Պարսկաստանում իշխում էր նեստորականությունը« Հռոմում եւ Արեւմուտքում ընդհանրապես՝ քաղկեդոնականությունը« իսկ 506 թ. Դվինի Ա ժողովում Հայոց« Վրաց եւ Աղվանից Եկեղեցիները մերժում են նեստորականությունն ու քաղկեդոնականությունը եւ իրենց հավատակից հռչակում Բյուզանդիայի եկեղեցուն:

518 թվականին Բյուզանդիայի գահին է բազմում Հուստինոս Ա-ը /518-527/« որը ցանկանալով վերականգնել Հռոմի հետ խզված հարաբերությունները« դատապարտում է Զենոնի Հենոտիկոնը« Քաղկեդոնի ժողովը հռչակում սուրբ եւ տիեզերական« աքսորում 50-ից ավելի միաբնակ եպիսկոպոսների եւ ողջ կայսրության մեջ« բացի Եգիպտոսից« քաղկեդոնությունը դարձնում ճանաչված եւ թույլատրելի դավանություն:

Հայոց Եկեղեցին« որ արդեն ճշտել էր իր դավանությունը« հիմնված Կապադովկիայի հայրերի եւ Ալեքսանդրյան դպրոցի աստվածաբանության վրա« դուրս գտնվելով կայսրության սահմաններից« ազատ էր դավանելու այն« ինչ որ ճշմարիտ էր համարում եւ ոչ թե ընդունել այն դավանությունը« որը պարտադրվում էր պետության կողմից:

5. Հայաստանեայց Եկեղեցւոյ Ժողովները



ԱԶԳԱՅԻՆ- ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Աշտիշատի Ա, Բ, Գ ժողովները (352 թ., 354 թ., 435 թ.)
Աշտիշատի Ա ժողովը գումարվել է Ներսես Մեծի կողմից, Աշտիշատում՝ քննարկելու համար եկեղեցու բարեկարգության ու դավանության որոշակի հարցեր: 354 թ. հրավիրվել է նաեւ Բ ժողովը, նույն հարցերի քննարկումը շարունակելու համար: Ժողովներն ընդհանուր բարեկարգության համար նախ ընդունել են առաքելական կոչված կանոնները եւ ապա, տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով, սահմանել են որոշակի կանոններ: Ահա դրանցից մի քանիսը.

- Հարմար վայրերում հիմնել աղքատանոցներ ու որբանոցներ:

- Գյուղերում ու ավաններում հիմնել հյուրանոցներ, որպեսզի հյուրերը եւ օտարները անօթեւան չմնան:
- Բացել հիվանդանոցներ ու ուրկանոցներ (բորոտանոցներ): Այս բարեգործական հաստատությունները պահելու համար ժողովը սահմանեց հարկեր՝ գյուղացու ստացած բերքից, անասուններից եւ այլն, ու նշանակվեցին տեսուչներ՝ խնամակալական գործն իրականացնելու համար:
- Արգելել հեթանոսական սովորություններով մահացածներին թաղելը, հանդերձները պատռելը, բարձրաձայն ողբալը: Սրանք եւ նմանատիպ գործողություններով ժխտվում է հավատը հարության, հանդերձյալ կյանքի հանդեպ:
- Ամուսնական կյանքում հավատարիմ լինել միմյանց, խուսափել մերձավոր ամուսնություններից:
- Հեռու մնալ հարբեցողությունից, անբարոյականությունից, սպանություն կատարելուց եւ այլն:
- Հիմնել վանքեր եւ կուսանոցներ:

Գ ժողովը հրավիրվել է 435 թ. Սահակ Ա Կաթողիկոսի եւ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով՝ քննելու համար Եփեսոսի Գ Տիեզերական ժողովի որոշումները, որոնք ընդունվեցին:

Շահապիվանի ժողովը (444թ.)
Հրավիրել է Հովսեփ կաթողիկոսը, որին ներկա են եղել 20 եպիսկոպոս, երեւելի հոգեւորականներ, ինչպես նաեւ Վասակ մարզպանը, Վահան հազարապետը, Վարդան Մամիկոնյանը եւ բազմաթիվ այլ նախարարներ:

Պատմության մեջ ժողովը հայտնի է իր ընդունած որոշումների խստությամբ, մանավանդ մծղնեական աղանդավորների վերաբերյալ, որոնք Մաշտոցի ու Սահակի մահվանից հետո շատ էին աշխուժացել: Ժողովն ընդունել է 20 կանոն, որոնց մեծ մասը վերաբերում է եկեղեցականներին՝ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին: Դրանք կանոնակարգում են եկեղեցականների ներքին կյանքը եւ սահմանում խիստ պատիժներ՝ խախտելու դեպքում: Այդ կանոններով սահմանվում է ամուսնանալու թույլատրելի աստիճանները (մինչ չորս պորտ հեռու լինելը, կանոն 13), աշխարհականներին եւ հոգեւորականներին խստիվ արգելվում է գնալ վհուկների ու կախարդների մոտ: Խիստ են եղել նաեւ մծղնեականներին վերաբերող կանոնները (19-20):

Այս ժողովի խստությամբ, հավանաբար, ենթադրվում էր մեկընդմիշտ վերջ տալ նորաստեղծ եկեղեցու համար վտանգ ներկայացնող երեւույթներին:

Շահապիվանի ժողովը սկիզբ դրեց հայ եկեղեցական-քաղաքական իրավունքի ձեւավորմանը եւ, փաստորեն, նրա որոշումները առաջին դատաստանագիրքը

կարելի է համարել հայոց մեջ:

Արտաշատի ժողովը (449թ.)
Այն հայտնի պատասխանը տվեց Հազկերտի նամակին: Ժողովի որոշմամբ ժողովուրդը եւ Հայ Եկեղեցին պատրաստվեցին Վարդանանց պատերազմին: Եղիշեի պատմության մեջ մանրամասնորեն ներկայացված է այդ որոշում- նամակի բովանդակությունը:

Դվինի Ա Ժողովը (506թ.)
Ժողովը հրավիրվեց Բաբգեն Ոթմսեցի Կաթողիկոսի օրոք Վրաց եւ Աղվանից Կաթողիկոսների մասնակցությամբ, որպեսզի ճշտվի Եկեղեցու դիրքորոշումը Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ: «Գիրք Թղթոցը» հիշատակում է ժողովի մասնակից 20 եպիսկոպոսի եւ 14 աշխարհիկ նախարարի: Կարծես հայոց մեջ արդեն կանոն էր եկեղեցական ժողովներին աշխարհիկներին մասնակից դարձնելը:

Դվինի Բ ժողովը (551թ.)
Այն հրավիրեց Ներսես Բ Բագրեւանդցին, ուր սահմանվեցին բարեկարգման որոշակի կանոններ եւ հաստատվեց հայոց տոմարը:

Ժողովին մասնակցել են 18 եպիսկոպոս, նախարարներ: Այս ժողովում պաշտոնապես մերժվել է Քաղկեդոնի ժողովի որոշումները, եւ այդպիսով վերջնականապես խզվել է կապը քաղկեդոնական եկեղեցիների հետ: Վերստին որոշվել է Ս. Ծնունդը նշել հունվարի 6-ին: Ընդունվել է «Ուխտ միաբանության հայոց աշխարհիս» գրությունը, նզովվել է նեստորականությունը, պավլիկյանների շարժումը, մծղնեականությունը: Ընդունված 37 կանոնները զետեղված են «Կանոնագիրք Հայոց»-ում` որպես «Կանոններ Ներսես կաթողիկոսի եւ Մամիկոնեից Ներշապուհ եպիսկոպոսի»: Ահա մի քանիսն այդ կանոններից. ԺԶ կանոնը արգելում է կանանց մկրտության ժամանակ քահանայի կողքին կանգնել եւ սպասավորություն անել, ԺԹ կանոնի համաձայն, եթե քահանան որեւէ մեկի խոստովանությունը ուրիշին հայտնում է, ապա պետք է կարգալույծ արվի, իսկ ԻԹ կանոնը արգելում է աղանդավորներին տուն ընդունելը եւ օթեւան տալը:

Դվինի Գ ժողովը (609-610թթ.)
Այս ժողովը գումարվել է Աբրահամ Ա Աղբաթանեցու եւ Սմբատ Բագրատունի իշխանի օրոք, հոգեւորականների եւ աշխարհականների մասնակցությամբ: Վրաց եկեղեցին բաժանվել էր հայ եկեղեցուց, եւ կաթողիկոսը բազում գրություններով դիմել էր վրաց Կյուրիոն կաթողիկոսին: Այդ հարցի հանդեպ Հայ Եկեղեցու վերաբերմունքը ճշտելու համար հրավիրվեց այս ժողովը: Աբրահամ կաթողիկոսը ժողովից հետո «Շրջաբերական թուղթ» էր գրել` ուղղված ժողովրդին, նզովել էր Կյուրիոնին, նրա համախոհներին: Այս ժողովը կանոններ չի սահմանել, միայն զրկել է վրացիներին հայոց հաղորդությունից:

Կարնո ժողովը (633 թ.)
Ժողովին հանդիպել են Հերակլ կայսրը եւ Հայոց Եզր Կաթողիկոսը՝ քննարկելու հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները: Ընդունվել է Միակամության վարդապետությունը, որպես կամուրջ Քաղկեդոնի եւ այն չընդունողների միջեւ: Սակայն հետագայում այդ վարդապետությունից հրաժարվել են Զ Տիեզերական ժողովում: Այն հայոց մեջ ոչ մի դավանական հիմք չգտավ: Փաստորեն այդ Խոստովանության գիրը, որի տակ ստորագրել էր Եզր Կաթողիկոսը, ավելի շատ քաղաքական պարտադրանք էր, քան կրոնական համոզմունք:

Դվինի Դ ժողովը (645թ.)
Այն գումարվել է Ներսես Գ Տայեցու օրոք, մասնակցել է 17 եպիսկոպոս, նախարարներ: Ընդունվել է 12 կանոն (Կանոնագրքում՝ «Կանոն Դվինի սուրբ ժողովի» անունով): Դրանք եկեղեցու ներքին կյանքը կարգավորող սկզբունքներ են սահմանում, ինչպես նաեւ մատնանշում են Եկեղեցու առաջնորդների իրավունքները:

Դվինի Ե ժողովը (648 թ.)
Ժողովը, որին մասնակցել են բոլոր եպիսկոպոսներն ու նախարարները հրավիրվել է Ներսես Գ Տայեցու օրոք: Այդ ժողովը պատասխան էր տալու քաղկեդոնականությունն ընդունելու վերաբերյալ բյուզանդական կայսեր նամակին: Ժողովը որոշել է նաեւ հավատի ձեռնարկ պատրաստել հայերի համար, որպեսզի նրանք պատրաստ լինեն պատասխանելու քաղկեդոնականներին: Այդ ամենով հանդերձ Դվինի Ե ժողովը սահմանել է 12 կանոն, որոնք կարգավորում էին եպիսկոպոսների իրավունքներն ու պարտականությունները, քահանաների դրամական ապահովության խնդիրը: Ամուսնական իրավունքի ոլորտում թույլատրել էր երկրորդ ամուսնությունը միայն այն դեպքում, երբ ամուսիններից մեկն օտարության ու անհայտության մեջ յոթը տարուց ավել է ապրել:

Պարտավի Ա ժողովը (709թ.)
Այն գումարվեց Աղվանից կաթողիկոս Ներսես Բակուրի՝ քաղկեդոնականությանը հարելու պատճառով: Եղիա կաթողիկոսի ջանքերով դավանության թուղթ կազմվեց, որով դավանական բոլոր հարցերում հաստատվում է Հայոց եւ Աղվանից եկեղեցիների միությունը :

Դվինի Զ Ժողովը (719-720թթ.)
Այս ժողովը գումարվել է Հովհաննես Գ Օձնեցու օրոք: Այն կարգի է բերել ցաքուցրիվ կանոնական որոշումները եւ կազմել է «Կանոնագիրքը»: Սահմանվել է 32 կանոն, որոնցով կարգավորվել են ժամերգությունների կարգը, որոշ ծիսական կանոններ, վերահաստատվել է Ս. Ծնունդն ու Մկրտությունը, ի տարբերություն հույների, միեւնույն օրը՝ հունվարի 6-ին նշելու կարգը: Ընդդեմ աղանդավորական շարժումների (պավլիկյաններ, երեւութականներ եւ այլն) կանոններ է սահմանվել,

պատվիրվել է օծված խաչը եւ Փրկչական պատկերները պատվել, հեռու մնալ աղանդավորներից (29-րդ եւ 32-րդ կանոններ):

Մանազկերտի ժողովը (719թ.)
Քննարկել է Հայ եւ Ասորի Եկեղեցիներում ծագած դավանաբանական որոշակի հարցեր, որոնք տանում էին բաժանման: Այս ժողովին մասնակցել է նշանավոր հայ աստվածաբան Խոսրովիկ թարգմանիչը: Ժողովի նպատակն էր հարթել երկու եկեղեցիների տարաձայնությունները՝ Փրկչի մարմնի անապականության վարդապետության հարցում: Ասորիները մեղադրում էին հայերին Հուլիանոս Հալիկառնասցու ուսմունքին հետեւելու մեջ, իսկ հայերն էլ իրենց հերթին մեղադրում էին ասորիներին Սեւերիոս Անտիոքացու ուսմունքին հետեւելու համար: Ժողովը սահմանել է 10 նզովք, որոնք դատապարտել են Հուլիանոս Հալիկառնասցու եւ Սեւերիոս Անտիոքացու վարդապետությունները եւ նրանց հետեւորդներին ու վերստին հաստատել է Սուրբ Երրորդության ուղղափառ վարդապետությունը: Արդյունքում Հայ եւ Ասորի Եկեղեցիների միջեւ կնքվել է դավանական միություն:

Պարտավի Բ ժողովը (768թ.)
Գումարվեց Սիոն Ա Բավոնեցու օրոք, որին մասնակցեցին նաեւ Աղվանից Եկեղեցու ներկայացուցիչները, քանի որ Պարտավն Աղվանից կաթողիկոսության աթոռանիստն էր: Ժողովն ընդունել է 24 կանոն, որոնք վերաբերում են եկեղեցական կարգ ու կանոնին, եկեղեցականների իրավունքներին ու պարտականություններին: Օրինակ, 11-րդ կանոնն արգելել է հեթանոսների հետ ամուսնությունը, 13-րդը՝ երրորդ ամուսնությունը, 16-րդը՝ ազգականների միջեւ ամուսնությունը՝ մինչեւ 4-րդ սերունդ: Իսկ 24-րդ կանոնը սահմանել է Հին Կտակարանի կանոնը:

Շիրակավանի ժողովը (862թ.)
Այս ժողովը գումարելու առիթը Փոտ պատրիարքի հայերին ուղղված նամակն էր՝ քաղկեդոնականություն ընդունելու մասին: Կ. Պոլսի Փոտ պատրիարքը բազմիցս փորձել էր իր ենթակայության տարածքում բնակվող հայերին քաղկեդոնական դարձնել եւ հալածանք էր սկսել հայերի դեմ: Զաքարիա Ա Ձագեցին նամակ գրեց Փոտին՝ ապացուցելով, որ հայոց դավանանքը համահունչ է Տիեզերական առաջին երեք ժողովների որոշումներին: Փոտը պատասխան նամակում փորձեց ապացուցել Քաղկեդոնի ուղղափառությունը եւ դարձյալ առաջարկեց հայերին քաղկեդոնականությունն ընդունել: Շիրակավանի ժողովը մերժեց Փոտի առաջարկը եւ, 15 նզովքներում բովանդակելով Հայ Եկեղեցու դավանանքը, պատասխանն ուղարկեց Փոտին:

Հարքի Ա եւ Բ ժողովները (1002թ., 1051թ.)
Այս ժողովները նզովեցին թոնդրակյան շարժումը: Ա ժողովը բանադրեց նաեւ Հարքի Հակոբ եպիսկոպոսին՝ մեղադրելով նրան թոնդրակյան շարժման համակիր լինելու

մեջ: Այս ժողովները ռազմավարական նշանակություն ունեցան՝ կասեցնելով աղանդավորական շարժման հետագա տարածումը Հայաստանում:

Սեւ Լեռան ժողովը (1114թ.)
Այն կոչված էր լուծելու Հայրապետական Աթոռի շուրջ ծավալված վեճը: Գրիգոր Ա Պահլավունի կաթողիկոսի դեռահաս լինելը պատրվակ դարձնելով, Աղթամարի եպիսկոպոս Դավիթ Արծրունին մի քանի համակիր եպիսկոպոսների ձեռամբ ձեռնադրվել էր հակաթոռ կաթողիկոս: Ժողովին մասնակցում էին 2500 հոգեւորականներ, իշխաններ, նախարարներ, աշխարհականներ: Ժողովն օրինական կաթողիկոս է ճանաչել Գրիգոր Ա Պահլավունուն: Դավիթը, չընդունելով այդ վճիռը, Աղթամարում հիմնադրում է Աղթամարի կաթողիկոսությունը: Այս ժողովի որոշումով Հայոց կաթողիկոսի ընտրությունը վավերական է համարվել միայն բուն Հայաստանի չորս եպիսկոպոսական աթոռների համաձայնության դեպքում (Բջնի, Հաղպատ, Արտազ, Տաթեւ):

Հռոմկլայի ժողովը (1179թ.)
Ժողովը գումարվեց Գրիգոր Տղայի օրոք՝ քննելու համար Հայ եւ Հույն Եկեղեցիների միության խնդիրները: Մինչ սրվել էր երկու Եկեղեցիների հարաբերությունները, հույները պահանջում էին քաղկեդոնական բանաձեւերի եւ հետագա Տիեզերական ժողովների ընդունումը, իսկ հայերը դեմ էին եւ ապացուցում էին Հայ Եկեղեցու ուղղափառությունը: Այս ժողովին ներկա էին 33 հոգեւորականներ՝ Մեծ Հայքից, Կիլիկիայից: Ներկա էր նաեւ Աղվանից կաթողիկոսը եւ ասորիների պատրիարքի ներկայացուցիչը: ժողովին ներկա էր երկու Եկեղեցիների հաշտության ու խաղաղության ջերմ պաշտպան Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին: Այս ժողովը մի կողմից նզովեց ծայրահեղ միաբնակությունը եւ մյուս կողմից մերժեց նաեւ երկբնակությունը, երկու կամք, երկու ներգործություն քարոզող վարդապետությունը՝ հավատարիմ մնալով Հայ Եկեղեցու ավանդական դավանանքին:

Տարսոնի ժողովը (1196թ.)
Այն գումարվեց Գրիգոր Զ Ապիրատի օրոք, դարձյալ հայ-հույն եկեղեցական հարաբերությունների խնդրի քննարկման նպատակով: Հույների առաջարկները ընդունվեցին ժողովականների կողմից: Այդ քայլի ջատագովն էր Ներսես Լամբրոնացին, որն այդ ժամանակ փրկության միակ ելքը դրանում էր տեսնում: Բայց հայերի կողմից էլ առաջարկվեցին որոշ կետեր, որոնք չընդունվեցին հույների կողմից: Այս ժողովին Մեծ Հայքի ոչ մի վարդապետ չէր մասնակցում:

Սսի եկեղեցական ժողովները գումարվել են XIII-XIV դդ., Կիլիկիայի Տայոց թագավորության Սիս մայրաքաղաքում:

Ա ժողով (1204թ.)
Հրավիրվել էր Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ: Քննարկվել են

ծիսական հարցեր եւ ընդունվել է ութ կանոն:

Իվանե եւ Զաքարե եղբայր իշխանները ժամանակի ազդեցիկ դեմքերից էին, եւ Իվանեի հունադավանություն ընդունելը լուրջ վտանգ կարող էր հանդիսանալ Հայոց եկեղեցու անկախության համար, թե՛ եկեղեցական, թե՛ քաղաքական ոլորտում: Ուստի Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսը ընդառաջ գնաց Զաքարեին՝ քննության դնելով նրա առաջարկները: Ընդունված ութ կանոնները թույլատրում էին.

- Ս. Պատարագը մատուցել նաեւ բացօթյա՝ վրանի տակ՝ ինչպես վրացիները :
- Ավետումը տոնել ապրիլի 6-ին, Վերափոխումը՝ օգոստոսի 15-ին, Խաչվերացը՝ սեպտեմբերի 14-ին՝ ինչպես վրացիները:
- Պատկերներին հարգանք մատուցել:
- Ս. Պատարագներ մատուցել ոչ միայն ննջեցյալների համար, այլ նաեւ ապրողների համար՝ ինչպես վրացիները, հույները եւ ասորիները:
- Արգելել հայ կրոնավորներին միս ուտել՝ վրացիների մեղադրանքը կարճելու համար:
- Պատվիրել հայ կրոնավորներին վանքերում ապրել ու սեփականություն չունենալ:

Ինչպես տեսնում ենք հայոց համար պարտադրված այս կանոններն ընդունվել էին Հայ Եկեղեցու ինքնուրույնությունը ապահովելու ու ավելորդ հակամարտությունից խուսափելու համար: Բայց արեւելյան վարդապետներից շատերը լսել անգամ չուզեցին այդ ժողովի որոշումների մասին, դժգոհությունն ավելացավ եւ հոգեւորականները երկու բանակի բաժանվեցին (չընդունողներից էր հայտնի Գրիգոր Տուտեորդին):

Զաքարե ամիրսպասալարն այդ վեճը հարթելու համար Անիում ժողով հրավիրեց՝ արեւելյան վարդապետների մասնակցությամբ (նրանցից էր Մխիթար Գոշը): Ժողովը մերժեց Սսի ընդունած որոշումները՝ համարելով այն քաղկեդոնականության ընդունում: Բայց Զաքարեն շարունակեց վրաց բանակում ծառայող հայերի նկատմամբ կիրառել ժողովական կանոնները:

Սսի Բ ժողովը (1243թ.)

Այն կոչված էր կարգավորելու այդ ժամանակ աշխարհականների ու հոգեւորականների բարքերում տեղ գտած բացասական երեւույթները: Ժողովն ընդունեց 24 կանոն, կասեցնելով այդ չարիքի տարածումը: Ի մասնավորի որոշվեց մերձամուսնությունների թույլատրելի պորտերի աստիճանը, սահմանելով այն 6 (մինչ այդ թույլատրելի էր 4-ը), փեսան պետք է 14 տարեկանից մեծ լիներ, իսկ հարսը՝ 12, դատապարտվում էր պոռնկութունը, շնությունը:

Սսի Գ ժողովը (1251թ.)

Այն նվիրված էր filioque-ի վարդապետության քննությանը՝ որն ավելի առաջ առաջարկել էր Հռոմի պապը: Ժողովը վերջնական վճիռ չկայացրեց եւ Հռոմի պապի առաջարկը ուղարկվեց արեւելյան վարդապետներին՝ այն քննելու համար: Արեւելյան վարդապետները վերջնականորեն մերժեցին եւ չընդունեցին այդ բանաձեւումները:

Սսի Դ ժողովը (1289թ.)

Այս ժողովն ավելի քաղաքական խնդիր լուծեց, քան եկեղեցական: Կոստանդին Բ Կատուկեցի Կաթողիկոսը Հռոմի Նիկողայոս Դ պապի՝ հայերի հռոմեադավանություն ընդունելու առաջարկին ընդդիմացավ, որի համար էլ Հեթում թագավորը եւ Գրիգոր եպս. Անավարզեցին, հրավիրեցին այս ժողովը եւ Կաթողիկոսին գահընկեց հռչակեցին:

Սսի Ե ժողովը (1307թ.)

Այն քննել է Կղեմես IV պապի՝ հայերին ռազմական օգնություն ցույց տալու դիմաց հռոմեադավանություն ընդունելու մասին առաջարկը: Լեւոն Դ թագավորի եւ նորընտիր Կոստանդին Գ Կեսարացու ճնշմամբ ժողովն ընդունեց հռոմեադավանությունը, եւ փաստորեն միացավ Հռոմի Եկեղեցուն: Արեւելյան վարդապետներն ընդդիմացան այդ որոշումներին եւ չենթարկվեցին: Սկսվեց ըմբոստության մի շրջան, որին հետեւեցին Սսի Զ եւ Ադանայի ժողովները:

Սսի Զ ժողովը (1309թ.)

Մերժեց Սսի Ե ժողովի (1307թ.) որոշումները, եւ նորընտիր Օշին թագավորը սկսեց հալածել ժողովականներին ու Սսի Ե ժողովի որոշումները չընդունողներին:

Ադանայի ժողովը (1316թ.)

Այս ժողովը վերահաստատել էր Սսի Ե ժողովի որոշումները՝ Հայ Եկեղեցին Կաթոլիկ Եկեղեցուն միացնելու համար: Այս որոշումներն էլ դարձյալ չընդունվեցին արեւելյան վարդապետների կողմից եւ, փաստորեն, մնացին թղթի վրա:

Սսի Է ժողովը (1345թ.)

Ժողովը հրավիրվել էր Մխիթար Ա Գռներցու կողմից եւ ակնկալելով ռազմական օգնություն արեւմուտքից, ձեւականորեն ընդունել էր Կաթոլիկ Եկեղեցուն միանալու՝ Հռոմի պապի առաջարկը: Սակայն օգնությունը չստանալու եւ ընդդիմության սաստկանալու պատճառով այս ժողովի որոշումներն էլ մնացին անկատար:

Սսի Ը ժողովը (1361 թ.)

Այն հրավիրել էին Կոստանդին Դ թագավորը եւ Մեսրոպ Ա Արտազեցի Կաթողիկոսը: Ժողովը չեղյալ հայտարարեց Սսի Ե եւ Ադանայի ժողովի որոշումները, վերացրեց բոլոր նորամուծությունները եւ վերահաստատեց Հայ Եկեղեցու դավանանքին հավատարիմ մնալու պատգամը:

էջմիածնի Ազգային-եկեղեցական ժողովը (1441թ.)
Այն որոշեց Հայրապետական Աթոռը Սսից տեղափոխել Վաղարշապատ՝ Ս. էջմիածին: Դրանով վերջ դրվեց Հայրապետական Աթոռի դեգերումներին եւ ցայսօր այն գտնվում է Ս. էջմիածնում:

6. Նվիրապետական Աթոռներ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱՎՈՐ (ՏԵՂԱՅԻՆ-ԻՆՔՆԱՎԱՐ) ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Արշակունյան դինաստիայի օրերին Հայ Եկեղեցու սահմանները համապատասխանում էին Մեծ Հայքի թագավորության սահմաններին:

Արշակունյաց թագավորության կործանումով (428) փոխվում են Հայաստանի քաղաքական-վարչական սահմանները, դարերի ընթացքում Հայաստանը ենթարկվում է պարսկական (մինչեւ 651 եւ 1605-1828), բյուզանդական (մինչեւ ՑԿԿ դարի վերջերը), արաբական (702-885), սելջուկյան (ԴԿ-ԴԿԿ դարեր), մոնղոլ-թաթարական (ԴԿԿԿ դար), թուրքական (ԴՑ դարից) եւ ռուսական (1828-1918) տիրապետություններին: Մեծ Հայքի տարածքում կազմավորվում են մեծ ու փոքր հայկական զանազան թագավորություններ եւ իշխանություններ: ԴԿ դարից սկսվում է մասսայական արտագաղթ դեպի արեւմուտք, հարավ եւ հյուսիս:

451 թ. գումարված Քաղկեդոնի ժողովի պատճառով Քրիստոսի Եկեղեցին բաժանվում է երկու մասի: Հռոմի եւ Բյուզանդիայի Եկեղեցիները կազմում են քաղկեդոնական բլոկը, արեւելյան ազգային՝ Հայ, Ասորի, Ղպտի, Հնդիկ Մալաբար եւ Եթովպիայի Եկեղեցիները կազմում են հակաքաղկեդոնական բլոկը եւ բաժանվելով Հռոմի ու Բյուզանդական կայսրության Եկեղեցիներից, զարգանում են ինքնուրույն ճանապարհով: Նման պայմաններում Հայ Եկեղեցին Հայաստանի Եկեղեցուց դառնում է Հայ՝ ազգային Եկեղեցի, որի սահմանները դուրս են գալիս Մեծ Հայքից եւ տարածվում այնտեղ, ուր որ ձեւավորվում են հայկական իշխանություններ եւ գաղութներ:

Պատմական այս պայմանների բերումով էլ Հայ Եկեղեցու ծոցում, Ս. Գրիգոր

Լուսավորչի հիմնադրած կաթողիկոսական Աթոռի հովանու ներքո դարերի ընթացքում ձեւավորվում են տեղական ինքնավար կաթողիկոսական եւ պատրիարքական աթոռներ: Այդ աթոռները իրենց ներքին գործերում ինքնուրույն լինելով հանդերձ, վարչական, դավանաբանական ու ծիսական հարցերում ճանաչում էին Ս. Էջմիածնի կաթողիկոսության գերազահությունը: Այդ հանգամանքի շնորհիվ էլ վերջինս դառնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսություն: Ստորեւ ներկայացնում ենք վերոհիշյալ Աթոռներից կարեւորագույնները:

Աղվանից կամ Գանձասարի կաթողիկոսություն

Աղվանք անունը տարբեր ժամանակաշրջաններում տրվել է տարբեր աշխարհագրական եւ էթնիկական շրջանների: Մինչեւ Յ դարի սկիզբը այսպես է կոչվել Կուր գետից հյուսիս ընկած եւ մինչեւ Դերբենտի դուռը ձգվող տարածությունը, ուր ԿԿԿ-Յ դարերում գոյություն ունեին վարչական երեք մեծ միավորներ՝ Մազքթաց աշխարհը՝ Չող մայրաքաղաքով, Լփինքը՝ Կապաղակ մայրաքաղաքով եւ Բաղասականը: Յ դարի կեսին, Հայաստանում Արշակունյաց թագավորության կործանումից (428թ.) հետո, Մեծ Հայքի Ուտիք եւ Արցախ նահանգները միացվում են Կուր գետից հյուսիս ընկած Աղվանքի հետ եւ կազմում Աղվանից մարզպանությունը, Պարտավ մայրաքաղաքով: Յ դարի երկրորդ կեսից Աղվանք ասելով նկատի է առնվել Աղվանից մարզպանությունը՝ նախկին բուն Աղվանքի երկրները եւ Հայոց Արցախ եւ Ուտիք նահանգները միասին վերցված:

Այն ժամանակ որեւէ եկեղեցու սահմանները որոշվում էին տվյալ երկրամասի քաղաքական-վարչական սահմաններով:

Այդ պատճառով էլ երբ կազմվում է Աղվանից մարզպանությունը, Արցախ եւ Ուտիք նահանգներում գտնվող եպիսկոպոսական աթոռները՝ Ամարասը, Մեծկողմանքը, Գարդմանը, Պարտավը եւ այլն, միանում են Կուրի ձախափնյա Աղվանքի եպիսկոպոսական աթոռների՝ Կապաղակի, Բաղասականի, Շաքիի եւ այլն, հետ եւ կազմում այսպես կոչված Աղվանից Եկեղեցին:

Քանի որ Աղվանից մարզպանության վարչական կենտրոնը Պարտավն էր, ապա Պարտավի եպիսկոպոսը առանձնահատուկ դիրք է ստանում եւ դառնում Աղվանից մարզպանության Եկեղեցու գլուխը, նախ իբրեւ արքեպիսկոպոս, իսկ ՅԿԿ դարի սկզբներից արդեն՝ կաթողիկոս կոչումներով:

Այսպիսով Հայ Եկեղեցու ծոցում կազմավորվում է մի ինքնավար եկեղեցի, որի գլուխ կանգնում է մի տեղական կաթողիկոս, որը միշտ ի հոգեւորս ենթակա է եղել Հայոց կաթողիկոսին:

Աղվանից մարզպանության Եկեղեցին եղել է հայալեզու, հայադավան եւ հայածես:

Այդ բացատրվում է նախ նրանով, որ բուն՝ Կուրի ձախափնյա, Աղվանքում քրիստոնեությունը տարածել եւ եկեղեցիներ են հիմնել Հայաստանից ուղարկված քարոզիչները: Երկրորդ, որ Աղվանից մարզպանության մի հիմնական մասը՝ Արցախը եւ Ուտիքը ուներ բացառապես հայ բնակչություն: Եվ երրորդ, Եկեղեցու կենտրոնը՝ Պարտավի Աթոռը, գտնվում էր հայկական հողի վրա, հայ մշակույթի ծոցում:

Այս կաթողիկոսության աթոռանիստը մինչեւ ԿԴ դարի սկիզբը մնում է Պարտավում, որից հետո, քաղաքական անբարենպաստ պայմանների հետեւանքով տեղափոխվում է տեղից տեղ (Բերդակ, Չարեք, Խամշի, Քարահերտ, Ճալեթ եւ այլն) եւ ի վերջո ԴՑ դարից հաստատվում Գանձասարի վանքում (1216-1238): Այդ օրերից գործածական է դառնում Գանձասարի կաթողիկոսություն անվանումը:

Գանձասարի կաթողիկոսությունը իր գոյությունը շարունակում է մինչեւ 1813/5 թվականը, երբ Ներսես Աշտարակեցու առաջարկով ու ռուսական պետության կարգադրությամբ նախ դառնում է միտրոպոլիտություն, ապա տրոհվելով, կազմում Ամենայն Հայոց կաթողիկոսության երկու՝ Ղարաբաղ-Արցախի, եւ Շամախու թեմերը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն

ԿՑ դարից սկսած բազմաթիվ հայ ուխտավորներ են գնում Երուսաղեմ: Հայաստանի նախարարական տները եւ եպիսկոպոսական աթոռները իրենց թեմերից գնացած ուխտավորներին օթեւաններով ապահովելու համար Երուսաղեմում կառուցում են վանքեր, որոնց թիվը ՑԿ դարում արդեն հասնում էր յոթանասունի: Այդ վանքերը հիմնականում կոչվում էին այն նախարարական տների կամ թեմերի անուններով, որոնց կողմից որ կառուցվել եւ պահպանվում էին, ինչպես օր. Մամիկոնեից վանք, Գուգարաց վանք, Սյունյաց վանք, Արցախի վանք, Ամարասի վանք, Ամատունյաց վանք եւ այլն: Այդ վանքերը իրենց վանահայրերով, վանականներով ու ժողովրդով մինչեւ ՑԿ դարի կեսը գտնվում էին Երուսաղեմի պատրիարքի հոգեւոր իշխանության ներքո, ինչպես որ ընդունված էր այն ժամանակ եկեղեցական կանոններով:

Երբ Երուսաղեմի պատրիարքությունը, Բյուզանդական պետության ճնշման տակ, ՑԿ դարի կեսերին վերջնականապես որդեգրում է քաղկեդոնական դավանանքը, Երուսաղեմի Հայոց վանքերն ու եկեղեցիները բաժանվում եւ կազմում մի առանձին Եկեղեցի՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը:

Բյուզանդական տիրապետության շրջանում, մինչեւ արաբների կողմից Երուսաղեմի գրավումը (636թ.) Երուսաղեմի Հայոց Եկեղեցին հալածանքների էր ենթարկվում քաղկեդոնականների կողմից: Մեկը մյուսի ետեւից դատարկվում էին հայոց վանքերը եւ դառնում բյուզանդացիների սեփականությունը: Երբ Օմար խալիֆան (634-644) 636 թ. գրավում է Երուսաղեմը, Հայոց Գրիգոր Եղեսացի պատրիարքին տալիս է մի հավատարմագիր, որով հաստատում է Երուսաղեմի Հայոց պատրիարքության

սեփականությունների անձեռնմխելիությունը: Երուսաղեմի Հայոց պատրիարքության դիվանում պահպանվում են նման մի շարք հաստատագեր տրված արաբ խալիֆաների կողմից:

Երուսաղեմի Հայոց պատրիարքի նվիրապետական աստիճանը արքեպիսկոպոս-ն է, պատրիարք կոչումը վարչական անվանում է, որ տրվել է Երուսաղեմի Հայոց արքեպիսկոպոսներին քաղաքական իշխանությունների կողմից, հաստատելու համար նրանց ինքնավարությունը եւ անկախությունը այլ եկեղեցական Աթոռից՝ Երուսաղեմի հայ վանքերի եւ եկեղեցիների գործերը տնօրինելու մեջ:

Աղթամարի կաթողիկոսությունը

Անիի թագավորության անկումից հետո (1045) Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռը Մեծ Հայքից փոխադրվում է Կիլիկիա, ուր եւ մնում է շուրջ 400 տարի: Երբ 1113 թ. Կիլիկիայում Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում քսանամյա Գրիգոր Գ Պահլավունին (1113-1166), Աղթամարի Դավիթ արքեպիսկոպոսը, որ իրեն էր համարում արժանավորագույն թեկնածուն կաթողիկոսության, բողոքում է այդ ընտրության դեմ: Վասպուրականի Ձորավանքում գումարված ժողովը պատճառաբանելով նորընտիր կաթողիկոսի երիտասարդությունը, Աթոռի Հայաստանից դուրս գտնվելը, նախկինում Աղթամարի կաթողիկոսանիստ լինելը եւ այլն, Դավիթին հռչակում են կաթողիկոս Բուն Հայաստանի համար:

Օծվելով հինգ եպիսկոպոսների ձեռամբ, Դավիթը շրջաբերական նամակներ է ուղարկում Հայաստանի եպիսկոպոսներին, հորդորելով ճանաչել իր կաթողիկոսությունը: Նա հինգ եպիսկոպոսներից բաղկացած մի ժողով է գումարում« որը պատճառաբանելով« թե Վասպուրականի Ձորավանքը ժամանակին եղել է կաթողիկոսանիստ« թե Աղթամարում է գտնվում Ս. Գրիգոր Լուսավորչի պատարագի սեղանը« գավազանը եւ այլ սրբություններ« օրինավոր է համարում Դավթի ցանկությունը եւ նրան ձեռնադրում կաթողիկոս Բուն Հայաստանի համար: Դավիթը ցանկանալով ընդունելի համարել իր կաթողիկոսությունը« նամակներով եւ ընծաներով դիմում է Հայաստանի եպիսկոպոսներին: Անեցիները մերժում են նրան« մինչ Սյունյաց եւ Մարդպետական եպիսկոպոսները« թեկուզեւ շատ կարճ ժամանակով« ընդունում են նրան իբրեւ կաթողիկոս:

1114 թ. Կիլիկիայում, Շուղրի Կարմիր վանքում, գումարվում է մի ժողով, 2500 ներկաներով՝ եպիսկոպոսներ, վանականներ, իշխաններ ինչպես հայության նոր երկրներից« այնպես էլ բուն Հայաստանից, որոնք քննելով Դավիթ Աղթամարցու ընթացքը՝ դատապարտում են նրան եւ նզովում ու օրինավոր կաթողիկոս համարում Գրիգոր Գ Պահլավունուն ։ Սյունյաց եւ Մարդպետական արքեպիսկոպոսությունները ետ են կանգնում իրենց ընթացքից հեռանում են Դավիթ Աղթամարեցուց: Հակառակ այս ամենի Աղթամարի կաթողիկոսությունը

շարունակում է իր գոյությունը՝ սահմանափակվելով իր նախկին՝ թեմական տարածքում:

Այնուամենայնիվ առկա էր արդեն Բուն Հայաստանի եւ Հայաստանից դուրս հաստատված հայկական իշխանությունների եկեղեցական շրջանակների հակամարտությունը: Շուղրիի նույն ժողովում հաստատվում է մի օրենք« ըստ որի թեեւ կաթողիկոսական Աթոռը մնալու է Կիլիկիայում« սակայն ամեն մի նոր կաթողիկոսի ընտրություն պետք է վավերացվի Բուն Հայաստանի չորս նշանավոր Աթոռների կողմից: Դրանք են Անիի« ապա Բջնիի Աթոռը /իբրեւ հաջորդ Արարատյան եպիսկոպոսի/« Հաղբատի Աթոռը /որ հաստատվել էր 1081 թվականին Բարսեղ Անեցու եւ Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի կողմից եւ հանդիսանում էր Հյուսիսային Հայաստանի նշանավոր եկեղեցական կենտրոնը/« Արտազի Աթոռը /Թադեոս Առաքյալի գերեզմանի պահապանը եւ նշանավոր Մարդպետական տան եպիսկոպոսության հաջորդը/ եւ Տաթեւի Աթոռը /Սյունյաց միտրոպոլիտության կենտրոնը/:

1441 թ. Էջմիածնի ազգային-եկեղեցական ժողովում Աղթամարի կաթողիկոսությունը հնազանդության գիր է տալիս Ամենայն Հայոց կաթողիկոսությանը, արձակվում նզովքից ու ընդգրկվում Հայ Եկեղեցու ծոցը, իբրեւ մասնավոր՝ տեղական կաթողիկոսական Աթոռ: Աղթամարի կաթողիկոսությունը իր գոյությունը շարունակում է մինչեւ 1895:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն

1441 թ. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը Կիլիկիայից փոխադրվում է Ս. Էջմիածին, ուր եւ գոյատեւում է մինչեւ այսօր:
Կիլիկիայի մայրաքաղաք Սսում նստող վերջին կաթողիկոսը՝ Գրիգոր Թ Մուսաբեկյանցը (1439-1441) ծերության եւ հիվանդության պատճառով չի կարողանում փոխադրվել Էջմիածին եւ լիազորում է 1441 թ. Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովին իր փոխարեն նոր կաթողիկոս ընտրելու: Ընտրվում է Կիրակոս Ա Վիրապեցին (1441-1443):

Կիլիկեցիների համար դժվար էր մի անգամից զրկվել կաթողիկոսական Աթոռի ներկայությունից, այդ պատճառով էլ, օգտվելով այն հանգամանքից, որ Գրիգոր Թ կաթողիկոսը շարունակում էր ապրել Սսում, նրա մահից հետո հիմք են դնում մի նոր կաթողիկոսության, տեղական իշխանությամբ՝ Կիլիկիայի սահմաններով: Այն անվանվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն:

1920 թ. Կիլիկյան ջարդերի հետեւանքով աթոռը 10 տարի տեղից տեղ է թափառում եւ ի վերջո հանգրվանում Լիբանանի Անթիլիաս գյուղում: Կիլիկիայի Աթոռը կորցրել էր իր թեմերը եւ կործանման առջեւ էր գտնվում: Պահպանելու համար Կիլիկյան Աթոռի գոյությունը, Ամենայն Հայոց կաթողիկոսության միջնորդությամբ Երուսաղեմի Հայոց

պատրիարքությունը ժամանակավորապես նրան է զիջում իր թեմերից Սիրիան եւ Լիբանանը: Կիլիկյան Աթոռը իր գոյությունը շարունակում է մինչեւ այսօր:

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքություն

Հիմնադրվել է 1461 թ. սուլթան Մահմեդ Բ Ֆաթիհի հրամանագրով: Պատրիարքարանի ստեղծումը հետապնդել է երկու հիմնական նպատակ.

ա. Հայ Եկեղեցու կենտրոնը գտնվում էր Ս. Էջմիածնում՝ Պարսկաստանի տիրակալության տակ: Ստեղծելով Կ.Պոլսի Հայոց Պատրիարքությունը, սուլթանը հետապնդել է այդ միջոցով իր ազդեցության տակ պահել Թուրքիայի տիրակալության տակ գտնվող հայությանը:
բ. Հայոց Պատրիարքարանի հիմնադրմամբ մի հակակշիռ էր ստեղծվում Կ.Պոլսի Հույն Տիեզերական Պատրիարքության նկատմամբ:

Պատրիարքարանի հիմնադրմամբ ըստ էության սուլթանը արեւմտահայության կառավարումը եւ ամեն ինչի պատասխանատվությունը դնում էր այդ համայնքի լեզուն եւ ավանդությունները լավ իմացող, նրա վստահությունը վայելող հոգեւոր մի մարմնի վրա, տալով նրան որոշակի իրավունքներ: Հայոց պատրիարքը Թուրքական պետության սահմաններում ապրող հայության թե՛ հոգեւոր առաջնորդ էր, թե՛ ազգապետը: Այդ պատճառով էլ մինչեւ Մեծ Եղեռնը Կ.Պոլսի Հայոց պատրիարքության վարչական իշխանությունը տարածվում էր ինչպես Երուսաղեմի Հայոց Պատրիարքության, այնպես էլ Աղթամարի ու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների վրա:

Սկզբնական շրջանում Հայոց պատրիարքի նստավայրը եղել է Սամաթիայի Ս. Գեւորգ եկեղեցին, իսկ 1644 թ.ից՝ Գում Գաբուի Մայր եկեղեցին:

Կ.Պոլսի Հայոց պատրիարքությունը մինչեւ Ա Համաշխարհային պատերազմը ուներ 52 թեմ, այդ թվում Բաղդադի, Կիպրոսի, Եգիպտոսի, Բուլղարիայի, Ռումինիայի եւ Հունաստանի թեմերը: Այն իր երբեմնի դերը կորցրեց Մեծ Եղեռնից հետո: Այսօր Կ.Պոլսի Հայոց պատրիարքությանն են ենթարկվում միայն Թուրքիայի հայոց եկեղեցիները:

7. Միջեկեղեցական հարաբերություններ

XX դարասկզբին ծնված եւ դարակեսին իր զարգացումն ապրած Էկումենիկ շարժման նկատմամբ Հայ Առաքելական Եկեղեցին ի սկզբանե հանդես է բերել հետաքրքրություն՝ դիտորդական կերպով մասնակցելով միջեկեղեցական միջոցառումներին ու իր դիրքորոշումն արտահայտելով Եկեղեցիների միության խնդրին առնչվող հարցերին:

Էկումենիկ շարժման սկզբնավորման նախնական փուլում եւ ապա Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ձեւավորումից հետո Հայ Առաքելական Եկեղեցին իր մասնակցությունն է բերել Էկումենիկ շարժմանը՝ նախ դիտորդի հանգամանքով, ապա՝ որպես լիիրավ գործունյա անդամ:

1962թ. ի վեր Հայ Առաքելական Եկեղեցին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ դարձավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ), իսկ 1977 թվականից՝ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) պաշտոնական անդամ՝ հետագայում անդամակցելով ուրիշ տարածաշրջանային, ենթատարածաշրջանային, ազգային, միջեկեղեցական ու Էկումենիկ կազմակերպությունների:

Միջեկեղեցական հարաբերությունները կանոնավորելու ու ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, 1973թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատանը կից կազմավորվում է Հայաստանյայց Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը: Երկար տարիներ Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը ղեկավարել են Գերաշնորհ Տ. Արսեն արք. Բերբերյանը, Գերաշնորհ Տ. Ներսես արք. Պոզապալյանը, իսկ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալության տարիներին՝ Հոգեշնորհ Տ. Միքայել ծ. վրդ.Աջապահյանը:

1999թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ բաժինը վերակազմավորվեց: Այն այսօր զբաղվում է Քույր Եկեղեցիների եւ օտար կրոնական կազմակերպությունների հետ մեր Եկեղեցու հարաբերությունների ընդարձակման եւ կոորդինացման խնդիրներով, ինչպես նաեւ կազմակերպելով եւ ապահովելով Հայ Եկեղեցու գործուն մասնակցությունը էկումենիկ շարժմանը: Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի նպատակն է նաեւ աշխարհին ներկայացնել մեր Եկեղեցին՝ իր քրիստոնեական արժեքներով եւ հոգեւոր ժառանգությամբ:

Միջեկեղեցական հարաբերությունների բաժինն իր գործունեության ընթացքում ԵՀԽ-ի, ԵԵԿ-ի, կրոնական եւ էկումենիկ կազմակերպությունների կողմից հրավիրված

գիտաժողովներում ներկայացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության շահերն ու արտահայտում մեր տեսակետները այլեւայլ խնդիրների առնչությամբ: Այն իր մշտական ներկայացուցիչներն ունի ԵՀԽ-ում, ԵԵԿ-ում եւ այլն: Միջեկեղեցական հարաբերությունների բաժինը, բացի վերոնշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցելուց, ինքն է կազմակերպում նմանօրինակ միջոցառումներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ եւ օրհնությամբ, Ս. Էջմիածնում եւ թեմերում: Այն քույր եկեղեցիների հետ նաեւ գործուն մասնակցություն է բերում կրթական ծրագրերին:

ԵՀԽ-ի հետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին արձանագրել է փոխշահավետ համագործակցության փորձառություն, որը նպաստում է թե Եկեղեցիների միջեւ աստվածաբանական երկխոսությունների հաստատմանը եւ փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծմանը եւ թե բարեգործական մի շարք ծրագրերի իրականացմանը:

Հայ Եկեղեցին ակտիվորեն մասնակցում է մի շարք աստվածաբանական երկխոսությունների, որոնց ընթացքում շոշափելի արդյունքներ են արձանագրվել հատկապես Ուղղափառ Եկեղեցիների հետ բանակցությունների արդյունքում: Այսօր կարելի է արձանագրել, որ մեծ է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի դերը մեր Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ, Ղպտի, Եթովպիական, Ռումին, Վրաց Ուղղափառ Եկեղեցիների հարաբերություններում հաջողությունների ձեռքբերման գործում: Այս հաջողություններն ամրապնդվում են ոչ միայն մի շարք գիտաժողովներին եւ կոնֆերանսներին համատեղ մասնակցության, այլեւ Եկեղեցիների պետերի փոխադարձ այցելությունների եւ բանակցությունների շնորհիվ:

Բոլոր հանդիպումների եւ զրույցների ընթացքում Հայ Եկեղեցին շեշտում է Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների զորացման կարեւորությունը, որը նպաստում է համաքրիստոնեական շրջանակներում Ուղղափառ Եկեղեցու վկայության ուժեղացմանը եւ էկումենիկ շարժման մեջ Ուղղափառ Եկեղեցիների մշտական մասնակցության գործին: 1999թ. դեկտեմբերի 1-ից առ այսօր Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատուն է Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-Եկեղեցական ժողովների մասին ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար առաջարկվում է գրականության հետեւյալ ցանկը.

Մաղաքիա Արք. Օրմանյան, Ազգապատում, Ս. էջմիածին, հ. Ա-Դ, 2001 թ.:

Մաղաքիա Արք. Օրմանյան, Հայոց եկեղեցի, Երեւան, 1993:

Միքայել Չամչյան, Հայոց պատմություն, հ. 1-3, Երեւան, 1985:

Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունք, Շուշի, 1903:

Եզնիկ վարդապետ Պետրոսյան, Հայ եկեղեցու պատմություն, մասն Ա, Ս. Էջմիածին, 1996:

«Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901:

Կանոնագիրք Հայոց, հ. 1-2, Երեւան, 1971:

Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Երեւան, 2002:

Երվանդ վրդ. Տէր-Մինասեանց« Ընդհանուր եկեղեցական պատմութիւն« Ս. Էջմիածին« 1908:

Ղեւոնդ Ալիշան« Հայոց հին հավատքը« Երեւան« 2002:

Մ. Աբեղյան «Հայ հին գրականության պատմություն« Երկեր« հ. Գ «Երեւան« 1968:

Մ. Աբեղյան «Հայ ժողովրդական« Երկեր« հ. Է «Երեւան« 1975: